

**Կարևոր տեղեկություններ
է պարունակում**

Այս էջը միտումնավոր դատարկ է թողնված



L.A. Care Health Plan

Անդամի ձեռնարկ

Ինչ պետք է իմանաք Ձեր նպաստների
վերաբերյալ

2021թ. Միացյալ Ապահովագրության
ապացույց և Բացահայտման ձև
(EOC/DF)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ հունվարի 1, 2021

Kaiser Foundation Health Plan, Inc.
Հարավային Կալիֆորնիայի շրջան

Բովանդակություն

Այլ լեզուներ և ձևաչափեր	1
Այլ լեզուներ	1
Այլ ձևաչափեր	1
Բանավոր թարգմանչի ծառայություններ	2
Խտրականության բացառման ծանուցում	3
Բարի գալուստ Kaiser Permanente:	6
Անդամի ձեռնարկ	6
Կապվեք մեզ հետ	7
1. Ինչպես սկսել անդամակցությունը	8
Ինչպես օգնություն ստանալ.....	8
Անցումային Medi-Cal.....	9
Ով կարող է կցվել մեզ	9
Նույնականացման («ID») քարտեր.....	10
Ինչպես ներգրավվել որպես անդամ	11
2. Ձեր առողջապահական ծրագրի վերաբերյալ	13
Առողջապահական ծրագրի ակնարկ.....	13
Ինչպես է աշխատում Ձեր ծրագիրը	16
Ինչպես փոխել մատակարար ցանցերը.....	17
Ինչպես փոխել առողջապահական ծրագրերը.....	17
Նոր վարչաշրջան կամ Կալիֆորնիայից դուրս տեղափոխվող քուլեջի ուսանողներ	18
Խնամքի շարունակականություն.....	20
Արժեքներ	23
3. Ինչպես խնամք ստանալ	27
Ինչպես առողջապահական խնամքի ծառայություններ ստանալ	27
Որտեղից խնամք ստանալ	38
Բարոյական առարկություն	38
Medi-Cal Մատակարարների ցանց	39
Առաջնային խնամքի մատակարար («PCP»)	46



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝
1-800-464-4000 (TTY 711) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն
անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից):
Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

4. Նպաստներ և ծառայություններ	55
Ինչ է ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը	55
Առողջապահական ծրագիրը կողմից ապահովագրվող Medi-Cal նպաստները	58
Խնամքի համակարգում	96
Կառավարվող երկարաժամկետ խնամքի ծառայություններ և օժանդակություն («MLTSS»).....	96
Health Homes Program («HHP»).....	97
Համակարգված խնամքի նախաձեռնություն («CCI»).....	98
Ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճարում ծառայության դիմաց («FFS») Medi-Cal-ի կամ այլ ծրագրերի միջոցով.....	99
Ծառայություններ, որոնք չեք կարող ստանալ Kaiser Permanente-ի կամ Medi-Cal-ի միջոցով	104
Նպաստների համակարգում	111
Նոր և գոյություն ունեցող տեխնոլոգիաների գնահատում	111
5. Իրավունքներ և պարտականություններ.....	112
Ձեր իրավունքները.....	112
Ձեր պարտականությունները	114
Գաղտնիության պահպանման գործելակերպի ծանուցագիր.....	115
Ծանուցում օրենքների մասին	116
Ծանուցում Medi-Cal-ի՝ որպես վերջին ատյանի վճարողի մասին.....	117
Ծանուցում գույքի վերականգնման մասին	118
Գործողության ծանուցում	118
Ծանուցում արտասովոր հանգամանքների մասին.....	119
Ծանուցում Ձեր նպաստների կառավարման մասին	119
Ծանուցում այս Անդամի ձեռնարկում փոփոխությունների մասին.....	119
Ծանուցում փաստաբանի և պաշտպանի վարձերի և ծախսերի մասին	120
Ծանուցում Անդամի ձեռնարկի՝ Անդամների համար պարտադիր լինելու մասին	120
Ծանուցում, որ L.A. Care Health Plan-ը մեր գործակալը չէ	120
Ծանուցումները Ձեր ապահովագրության մասին	120



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝
1-800-464-4000 (TTY 711) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն
անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից):
Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

6. Խնդիրների մասին տեղեկացնելն ու դրանք լուծելը	121
Բողոքներ	122
Բողոքարկումներ	124
Ինչ անել, եթե համաձայն չեք բողոքարկման որոշման հետ	127
Բողոքներ և Անկախ բժշկական վերանայումներ («IMR») Կառավարվող առողջապահական խնամքի բաժնի միջոցով	128
Նահանգային լսումներ	129
Խարդախություն, վատնում և չարաշահում	130
Պարտադրող իրավարարություն	131
7. Կարևոր հեռախոսահամարներ և բառեր	138
Կարևոր հեռախոսահամարներ	138
Կարևոր բառեր	139



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝
1-800-464-4000 (TTY 711) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն
անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից):
Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Այլ լեզուներ և ձևաչափեր

Այլ լեզուներ

Դուք կարող եք այս Անդամի ձեռնարկը և ծրագրի այլ նյութերն անվճար ստանալ այլ լեզուներով:
Զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)**
հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Կարդացեք այս Անդամի ձեռնարկը, որպեսզի տեղեկանաք առողջապահական խնամքի լեզվական աջակցության ծառայությունների մասին, ինչպիսիք են՝ բանավոր թարգմանչի և գրավոր թարգմանության ծառայությունները:

Այլ ձևաչափեր

Դուք կարող եք այս տեղեկություններն անվճար ստանալ այլ ձևաչափերով, ինչպիսիք են՝ բրայլը, 18-նիշանոց տառատեսակով մեծ տպագրությունը և աուդիոն: Զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Բանավոր թարգմանչի ծառայություններ

Դուք ստիպված չեք Ձեր ընտանիքի անդամին կամ որևէ բարեկամի խնդրել, որ թարգմանի Ձեզ համար: Անվճար բանավոր թարգմանչի, լեզվական և մշակութային ծառայություններ, ինչպես նաև օրը 24 ժամ, շաբաթը 7 օր օգնություն կամ այս Անդամի ձեռնարկն այլ լեզվով ստանալու համար զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Խտրականության բացառման ծանուցում

Խտրականությունը հակաօրինական է: Kaiser Permanente-ն հետևում է նահանգային և դաշնային քաղաքացիական իրավունքների օրենքներին: Kaiser Permanente-ն ապօրինի խտրականություն չի դրսևորում, մարդկանց չի բացառում կամ այլ կերպ իրենց վերաբերվում սեռի, ռասայի, մաշկի գույնի, կրոնի, նախահայրերի, ազգային ծագման, էթնիկ խմբի պատկանելիության, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, գենետիկ տեղեկատվության, ընտանեկան կարգավիճակի, գենդերի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիման վրա:

Kaiser Permanente-ն տրամադրում է՝

- Անվճար օգնություն և ծառայություններ հաշմանդամ անձանց՝ մեզ հետ արդյունավետ հաղորդակցվելու նպատակով, ինչպես օրինակ՝
 - ◆ Որակավորված նշանների լեզվի թարգմանիչներ
 - ◆ Գրավոր տեղեկություններ այլ ձևաչափերով (բրայլ, մեծ տառատեսակ, աուդիո, հասանելի էլեկտրոնային ձևաչափեր և այլ ձևաչափեր)
- Անվճար լեզվական ծառայություններ այն անձանց, ում համար անգլերենն առաջին լեզուն չէ, ինչպես օրինակ՝
 - ◆ Որակավորված բանավոր թարգմանիչներ
 - ◆ Այլ լեզուներով գրված տեղեկություններ

Եթե այս ծառայությունների կարիքն ունեք, զանգահարեք Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից):



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ինչպես գանգատ ներկայացնել Kaiser Permanente-ին

Եթե կարծում եք, որ Kaiser Permanente-ն չի տրամադրել այս ծառայությունները կամ որևէ այլ ձևով խտրականություն է դրսևորել՝ հիմնվելով սեռի, ռասայի, մաշկի գույնի, կրոնի, նախահայրերի, ազգային ծագման, էթնիկ խմբի պատկանելիության, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, գենետիկ տեղեկատվության, ընտանեկան կարգավիճակի, գենդերի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման վրա, կարող եք գանգատ ներկայացնել:

Դուք կարող եք հետևյալ կերպ գանգատ ներկայացնել.

- **Հեռախոսով.** գանգահարեք Անդամների ծառայություններ՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացառությամբ՝ փակ է տոն օրերին)
- **Փոստով.** գանգահարեք մեզ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով և խնդրեք Ձեզ ձևաթուղթ ուղարկել
- **Անձամբ.** լրացրեք Բողոքի կամ Նպաստի հայցի/խնդրանքի ձևաթուղթն անդամների ծառայությունների գրասենյակում, որը գտնվում է ծրագրի հաստատությունում (հասցեների համար տեսեք Ձեր մատակարարների հասցեագիրքը՝ **kp.org/facilities** [անգլերեն] հասցեով)
- **Առցանց.** օգտվեք մեր **kp.org** [անգլերեն] կայքի առցանց ձևաթղթից

Խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայություններ, եթե գանգատ ներկայացնելու համար օգնության կարիք ունեք:

Kaiser Permanente-ի Քաղաքացիական իրավունքների համակարգողները կտեղեկացվեն բոլոր գանգատների մասին, որոնք վերաբերվում են ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելիության, սեռի, տարիքի կամ հաշմանդամության պատճառով խտրականությանը: Կարող եք նաև ուղղակիորեն դիմել Kaiser Permanente-ի Քաղաքացիական իրավունքների համակարգողներին հետևյալ հասցեներով՝

Northern California
Civil Rights/ADA Coordinator
1800 Harrison St.
16th Floor
Oakland, CA 94612

Southern California
Civil Rights/ADA Coordinator
SCAL Compliance and Privacy
393 East Walnut St.,
Pasadena, CA 91188



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ինչպես գանգատ ներկայացնել Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ

Կարող եք Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ քաղաքացիական իրավունքների բողոք ներկայացնել գրավոր, հեռախոսով կամ էլ փոստով.

- **Հեռախոսով.** գանգահարեք Առողջապահական խնամքի ծառայությունների բաժին (Department of Health Care Services, DHCS) Քաղաքացիական իրավունքների գրասենյակ **916-440-7370 (TTY 711)** հեռախոսահամարով
- **Փոստով.** լրացրեք բողոքի ձևաթուղթը կամ նամակ ուղարկեք այստեղ՝
Deputy Director, Office of Civil Rights
Department of Health Care Services
Office of Civil Rights
P.O. Box 997413, MS 0009
Sacramento, CA 95899-7413
Բողոքի ձևաթղթերը մատչելի են այս կայքում՝
http://www.dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx (անգլերեն)
- **Առցանց.** էլ. նամակ ուղարկեք CivilRights@dhcs.ca.gov հասցեով

Ինչպես գանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ

Եթե կարծում եք, որ Ձեր դեմ խտրականություն են ցուցաբերել ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելիության, տարիքի, հաշմանդամության կամ սեռի պատճառով, ապա նաև կարող եք ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ քաղաքացիական իրավունքների բողոք ներկայացնել գրավոր, հեռախոսով կամ առցանց.

- **Հեռախոսով.** գանգահարեք **1-800-368-1019 (TTY 711 կամ 1-800-537-7697)** հեռախոսահամարով
- **Փոստով.** լրացրեք բողոքի ձևաթուղթը կամ նամակ ուղարկեք այստեղ՝
U.S. Department of Health and Human Services
200 Independence Avenue, SW
Room 509F, HHH Building
Washington, D.C. 20201
Բողոքի ձևաթղթերը մատչելի են այս կայքում՝
<http://www.hhs.gov/ocr/office/file/index.html> (անգլերեն)

Առցանց. այցելեք Քաղաքացիական իրավունքների գրասենյակի Բողոքների պորտալը՝
<https://ocrportal.hhs.gov/ocr/cp> (անգլերեն) հասցեով



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն) հասցեով

Բարի՛ գալուստ Kaiser Permanente:

Շնորհակալ ենք Kaiser Permanente-ն՝ L.A. Care Health Plan-ի միջոցով, որպես Ձեր առողջապահական խնամքի մատակարար ընտրելու համար: L.A. Care Health Plan-ն առողջապահական ծրագիր է Medi-Cal ունեցող անձանց համար: L.A. Care Health Plan-ը համագործակցում է Կալիֆորնիա նահանգի հետ՝ Ձեզ անհրաժեշտ առողջապահական խնամք ստանալու հարցում օգնելու համար: Kaiser Permanente-ն Ձեր առողջապահական խնամքի մատակարար ցանցն է L.A. Care Health Plan-ի միջոցով: Այս Անդամի ձեռնարկում մենք կօգտագործենք «Առողջապահական ծրագիրը» տերմինը Kaiser Foundation Health Plan, Inc.-ը նկարագրելու համար:

Անդամի ձեռնարկ

Այս Անդամի ձեռնարկը տեղեկացնում է Ձեզ Kaiser Foundation Health Plan, Inc.-ի («Առողջապահական ծրագիրը») միջոցով Ձեզ հասանելիք ապահովագրության մասին: Խնդրում ենք այն ուշադիր և ամբողջովին կարդալ: Այն կօգնի Ձեզ հասկանալ և օգտագործել Ձեր նպաստներն ու ծառայությունները: Այն բացատրում է նաև Ձեր իրավունքներն ու պարտականությունները՝ որպես Առողջապահական ծրագիրը Անդամ: Եթե Ձեզ հատուկ բուժօգնություն է հարկավոր, խնդրում ենք ուշադրությամբ կարդալ այն բաժինները, որոնք վերաբերում են Ձեզ:

Այս Անդամի ձեռնարկում Kaiser Foundation Health Plan, Inc.-ը երբեմն նկարագրվում է որպես «մենք» կամ «մեզ»: Անդամները երբեմն նկարագրվում են որպես «Դուք»: Այս Անդամի ձեռնարկում մեծատառով գրված որոշ տերմիններ ունեն հատուկ նշանակություն: Խնդրում ենք կարդալ Գլուխ 7-ը («Կարևոր հեռախոսահամարներ և բառեր») այս տերմիններին ծանոթանալու համար:

Այս Անդամի ձեռնարկը կոչվում է նաև Միացյալ Ապահովագրության ապացույց և Բացահայտման ձև (Combined Evidence of Coverage and Disclosure Form, «EOC/DF»): Սա հանդիսանում է մեր կանոնների և քաղաքականությունները



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

ամփոփում, և հիմնված է Kaiser Foundation Health Plan, Inc.-ի և L.A. Care Health Plan-ի միջև կնքված պայմանագրի վրա: Ձեր առողջապահական ապահովագրությունը սահմանվում է L.A. Care Health Plan-ի հետ կնքած մեր պայմանագրով: Եթե Դուք ստացել կամ ներբեռնել եք Անդամի ձեռնարկն ուղղակի L.A. Care Health Plan-ից, խնդրում ենք այն մի կողմ դնել և օգտվել սրանից: Այս Անդամի ձեռնարկը կտրամադրի Ձեզ ամենաճշգրիտ տեղեկությունները մեզանից ստացվող սպասարկման վերաբերյալ: Եթե տարբերություններ կան L.A. Care Health Plan-ից Ձեր ստացած Անդամի ձեռնարկի և այս մեկի միջև, մենք օգտվելու ենք այս փաստաթղթից Ձեզ օգնելու համար: Զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** հեռախոսահամարով և խնդրեք L.A. Care Health Plan-ի և DHCS-ի միջև կնքված պայմանագրի պատճենը:

Կապվեք մեզ հետ

Մենք այստեղ ենք Ձեզ օգնելու համար: Եթե հարցեր ունեք, զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Հեռախոսազանգն անվճար է: Դուք կարող եք նաև ցանկացած պահի այցելել **kp.org** (անգլերեն) կայքը կամ այցելել Անդամների ծառայությունների բաժինը Ծրագրի հաստատությունում (հասցեների համար տեղեք հաստատությունների վայրերը մեր կայքում՝ **kp.org/facilities** [անգլերեն] հասցեով): Մատակարարների կամ վայրերի մասին մանրամասների համար զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն:

Շնորհակալություն,
Kaiser Foundation Health Plan, Inc.



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

1. Ինչպես սկսել անդամակցությունը

Ինչպես օգնություն ստանալ

Մենք ցանկանում ենք, որ Դուք գործիքներ և առողջապահական խնամքից: Եթե Ձեր խնամքի վերաբերյալ հարցեր կամ մտահոգություններ ունեք, մենք ուզում ենք լսել դրանք:

Kaiser Permanente-ի Անդամների ծառայություններ

Kaiser Permanente-ի Անդամների ծառայությունները կարող է օգնել:
Մենք կարող ենք՝

- Պատասխանել հարցերին Ձեր ապահովագրված ծառայությունների մասին
- Օգնել Ձեզ ընտրել առաջնային խնամքի մատակարար (primary care provider, «PCP»)
- Տեղեկացնել Ձեզ, թե որտեղից կարող եք անհրաժեշտ խնամք ստանալ
- Օգնել ստանալ բանավոր թարգմանչի ծառայություններ, եթե Դուք անգլերեն չեք խոսում
- Օգնել տեղեկություններ ստանալ այլ լեզուներով և ձևաչափերով

Եթե օգնության կարիք ունեք, զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝

- Անգլերեն
(և ավելի քան 150 լեզուներ՝ օգտվելով բանավոր թարգմանչի ծառայություններից)

1-800-464-4000



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- Իսպաներեն **1-800-788-0616**
- Չինական բարբառներ **1-800-757-7585**
- TTY **711**

Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից):
Հեռախոսազանգն անվճար է: Դուք կարող եք նաև որևէ պահի այցելել
kp.org (անգլերեն) կայքը:

Ինչպես օգնություն ստանալ L.A. Care Health Plan-ից

Եթե հարցեր ունեք L.A. Care Health Plan-ի վերաբերյալ, զանգահարեք նրանց
1-888-839-9909 (TTY **711**) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Անցումային Medi-Cal

Անցումային Medi-Cal-ը նույնպես կոչվում է «Medi-Cal աշխատող մարդկանց համար»: Հնարավոր է, որ կարողանաք Անցումային Medi-Cal ստանալ, եթե դադարեք Medi-Cal ստանալը հետևյալ պատճառներով՝

- Սկսել եք ավելի շատ վաստակել
- Ձեր ընտանիքը սկսել է երեխայի կամ ամուսնու/կնոջ ապրուստի օժանդակություն ստանալ

Անցումային Medi-Cal-ի համար որակավորվելու մասին հարցեր կարող եք տալ Ձեր տեղական վարչաշրջանի առողջապահության և մարդու ծառայությունների գրասենյակում՝ **www.dhcs.ca.gov/services/medical/Pages/CountyOffices.aspx** (անգլերեն) կայքում կամ զանգահարել Health Care Options՝ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) հեռախոսահամարով:

Ով կարող է կցվել մեզ

Մենք ուղղակիորեն Անդամներ չենք ընդունում: Որպեսզի ավելին իմանաք, թե ինչպես կարող եք խնդրել, որ Ձեզ կցեն մեզ, զանգահարեք L.A. Care Health Plan՝ **1-888-839-9909** (TTY **711**) հեռախոսահամարով:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Նույնականացման («ID») քարտեր

Որպես Առողջապահական ծրագիրը Անդամ` Դուք կստանաք Kaiser Permanente-ի նույնականացման (Identification, ID) քարտ: Դուք պետք է ցույց տաք Ձեր Kaiser Permanente-ի ID քարտը, Ձեր L.A. Care Health Plan-ի ID քարտը, Ձեր Medi-Cal նպաստների նույնականացման քարտը (Benefits Identification Card, «BIC») և լուսանկարով ID, երբ ստանում եք որևէ առողջապահական խնամքի ծառայություններ կամ դեղատոմսով դեղեր: Դուք մշտապես Ձեզ հետ պետք է ունենաք բոլոր առողջապահական քարտերը: Ահա BIC և Kaiser Permanente-ի ID քարտի օրինակ, որպեսզի իմանաք, թե ինչ տեսք կունենա Ձերը.



Եթե Դուք Ձեր Kaiser Permanente-ի ինքնության (ID) քարտը չստանաք մեզ կցելուց հետո մի քանի շաբաթվա ընթացքում, կամ եթե Ձեր քարտը վնասվել, կորել կամ գողացվել է, անմիջապես զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն: Մենք Ձեզ նոր քարտ կուղարկենք: **Զանգահարեք 1-800-464-4000 (TTY 711) հեռախոսահամարով:**



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ինչպես ներգրավվել որպես անդամ

L.A. Care Health Plan-ը ցանկանում է իմանալ Ձեր կարծիքը: Նրանք կազմակերպում են հանդիպումներ՝ խոսելու համար, թե ինչ դրական բաներ կան և ինչը պետք է բարելավել: Անդամներին հրավիրում ենք մասնակցել: Մասնակցեք հանդիպմանը:

L.A. Care-ի Հանրային խորհրդատվական կոմիտե

L.A. Care-ում գործում է L.A. Care-ի Հանրային խորհրդատվական կոմիտե կոչվող խումբ: Այս խումբը կազմված է L.A. Care-ի աշխատակիցներից և Ձեզ նման անդամներից: Խումբը քննարկում է, թե ինչպես բարելավել L.A. Care-ի քաղաքականությունները և պատասխանատու է քննարկելու անդամների և առողջապահական ծրագրի հետ կապված խնդիրները: Եթե ցանկանում եք միանալ այս խմբին, զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** հեռախոսահամարով:

L.A. Care-ի Տարածաշրջանային համայնքային խորհրդատվական կոմիտեներ («RCAC»)

Գոյություն ունեն L.A. Care-ի Տարածաշրջանային համայնքային խորհրդատվական կոմիտեներ (Regional Community Advisory Committee, «RCAC») Լոս Անջելես վարչաշրջանում (RCAC արտասանվում է որպես «րէք»): Դրանց նպատակն է՝ թույլ տալ անդամներին իրենց կարծիքներն հայտնել L.A. Care-ի Կառավարիչների խորհրդին, որոնք կարող են ազդել քաղաքականությունների, ընթացակարգերի, ծրագրերի և գործելակերպերի վրա:

RCAC անդամները՝

- Քննարկում են առողջության և առողջապահական խնամքի ծառայության խնդիրները, որոնք ազդում են L.A. Care-ի անդամների վրա
- Խորհրդատվություն են տրամադրում L.A. Care-ի Կառավարիչների խորհրդին
- Կրթում և լիազորում են հանրությանն առողջապահական խնամքի խնդիրների հետ կապված հարցերում



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

RCAC-ը հանդիպում է երկու ամիսը մեկ: RCAC-ն ընդգրկում է L.A. Care-ի անդամներին, համայնքային կազմակերպությունները, որոնք աշխատում են L.A. Care-ի անդամների հետ և առողջապահական խնամքի մատակարարներին: RCAC-ի մասին ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care-ի Համայնքի հետ կապի և ներգրավվածության բաժին՝ **1-888-LA-CARE2 (1-888-522-2732)** անվճար հեռախոսահամարով:

Կառավարիչների խորհրդի նիստ

Կառավարիչների խորհուրդն է որոշում L.A. Care-ի քաղաքականությունները: Որևէ մեկը կարող է մասնակցել այս նիստերին: Կառավարիչների խորհուրդը հանդիպում է յուրաքանչյուր ամսվա առաջին հինգշաբթի օրը, ժամը 2 ք.մ.-ին: Ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care՝ **1-213-694-1250** հեռախոսահամարով:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

2. Ձեր առողջապահական ծրագրի վերաբերյալ

Առողջապահական ծրագրի ակնարկ

L.A. Care Health Plan-ն առողջապահական ծրագիր է Medi-Cal ունեցող անձանց համար Lnu Անջելես վարչաշրջանում: L.A. Care Health Plan-ը համագործակցում է Կալիֆորնիա նահանգի հետ՝ Ձեզ անհրաժեշտ առողջապահական խնամք ստանալու հարցում օգնելու համար:

L.A. Care Health Plan-ը Ձեր Medi-Cal կառավարվող խնամքի ծրագիրն է, իսկ Kaiser Permanente-ն Ձեր առողջապահական խնամքի մատակարար ցանցն է L.A. Care Health Plan-ի միջոցով: Երբ Դուք ընտրում եք Kaiser Permanente-ն, Դուք որոշում եք Ձեր խնամքը ստանալ բժշկական խնամքի մեր ծրագրի միջոցով: Դուք պետք է ծառայությունների մեծ մասը ստանաք Kaiser Permanente-ի Ցանցի մատակարարներից:

Kaiser Permanente-ն առողջապահական խնամքի ծառայություններ է տրամադրում ուղղակիորեն Անդամներին ինտեգրված բժշկական խնամքի ծրագրի միջոցով: Առողջապահական ծրագիրը, Ծրագրային հիվանդանոցներ և Southern California Permanente Medical Group («Բժշկական խումբ») աշխատում են միասին, որպեսզի մեր Անդամներին որակյալ խնամք տրամադրեն: Մեր բժշկական խնամքի ծրագիրը Ձեզ տալիս է Ձեզ հարկավոր ապահովագրված ծառայությունները, օրինակ՝ սովորական խնամք, լաբորատոր ծառայություններ, շտապ օգնության ծառայություններ, Հրատապ խնամք և այլ նպաստներ, որոնք նկարագրված են այս Անդամի ձեռնարկում: Բացի դրանից, մեր առողջապահական կրթության ծրագրերն առաջարկում են Ձեր առողջությունը պահպանելու և բարելավելու հոյակապ տարբերակներ: Եթե հարցեր ունեք L.A. Care Health Plan-ի վերաբերյալ, զանգահարեք նրանց **1-888-839-9909 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերին:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Երբ է սկսվում և ավարտվում Ձեր ապահովագրությունը

Երբ Ձեզ կցում են մեզ L.A. Care Health Plan-ի միջոցով, Դուք պետք է ստանաք Kaiser Permanente-ի Անդամի (Identification, ID) քարտը Kaiser Permanente-ին Ձեզ կցելուց հետո երկու շաբաթվա ընթացքում: Խնդրում ենք ցույց տալ Ձեր Kaiser Permanente-ի ID քարտը, Ձեր նպաստների նույնականացման քարտ (Benefits Identification Card, BIC) և Ձեր L.A. Care Health Plan-ի ID քարտը, երբ ստանում եք որևէ առողջապահական խնամքի ծառայություններ կամ դեղատոմսով դեղեր:

Ձեր Medi-Cal ապահովագրությունը պետք է թարմացվի ամեն տարի: Վարչաշրջանը կուղարկի Ձեզ Medi-Cal-ի թարմացման ձևաթուղթը: Լրացրեք այն և վերադարձրեք Ձեր տեղական վարչաշրջանի մարդու ծառայությունների գործակալություն:

Դուք կարող եք որևէ պահի խնդրել, որպեսզի դադարեցվի Ձեր կցումը Kaiser Permanente-ին և ընտրել մեկ այլ մատակարար L.A. Care Health Plan-ի ցանցում: Նոր մատակարար ընտրելու հարցում օգնության համար զանգահարեք L.A. Care Health Plan՝ **1-888-839-9909 (TTY 711)** հեռախոսահամարով կամ այցելեք **www.lacare.org** (անգլերեն) կայքը: Դուք կարող եք նաև խնդրել դադարեցնել Ձեր Medi-Cal-ը:

Մենք կարող ենք L.A. Care Health Plan-ին խնդրել Ձեզ կցել մեկ այլ մատակարար ցանցի, եթե տեղի ունենա հետևյալից որևէ մեկը՝

- Դուք Ձեր վարքով սպառնալիք ստեղծեք Kaiser Permanente-ի աշխատակիցների կամ ցանցի հաստատությունում գտնվող որևէ անձի կամ գույքի համար
- Դուք գողություն եք կատարել Ցանցի մատակարարից կամ ցանցի հաստատությունից
- Դուք միտումնավոր կերպով խարդախություն եք կատարել, օրինակ՝ անվավեր դեղատոմս եք ներկայացրել կամ որևէ մեկին թույլ եք տվել օգտվել Ձեր Medi-Cal-ի կամ Kaiser Permanente-ի ID քարտից

Եթե L.A. Care Health Plan-ը Ձեզ մեկ այլ մատակարար ցանցի կցի, նրանք Ձեզ այդ մասին գրավոր կտեղեկացնեն:

Երբեմն, L.A. Care Health Plan-ը և Kaiser Permanente-ն այլևս չեն կարող սպասարկել Ձեզ: L.A. Care Health Plan-ը պետք է դադարեցնի Ձեր Medi-Cal կառավարվող խնամքի անդամակցությունը, եթե հետևյալից որևէ մեկը ճիշտ է՝

- Դուք հեռացել եք L.A. Care Health Plan-ի Սպասարկման տարածքից
- Դուք բանտարկված եք



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- Դուք այլևս Medi-Cal չունեք
- Դուք որակավորվում եք որոշակի հրաժարման ծրագրերի համար, որոնք պահանջում են, որ անդամագրված լինեք Վճարում ծառայության դիմաց Medi-Cal-ի
- Ձեզ հարկավոր է կարևոր օրգանի փոխպատվաստում (բացառությամբ՝ երիկամներ և աչքի եղջրաթաղանթ)

Եթե L.A. Care Health Plan-ի համար Ձեր իրավունակությունը և Ձեր կցումը Kaiser Permanente-ին ավարտվի, Դուք դեռևս կկարողանաք ծառայություններ ստանալ Վճարում ծառայության դիմաց Medi-Cal-ից կամ այլ ծրագրերից: Այս ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք Գլուխ 4-ի «Ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճարում ծառայության դիմաց («FFS») Medi-Cal-ի կամ այլ ծրագրերի միջոցով» վերնագրով բաժինը:

Հատուկ պայմաններ ամերիկացի հնդկացիների համար Կառավարվող խնամքում

Ամերիկացի հնդկացիներն իրավունք ունեն չանդամագրվելու Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրին կամ կարող են լքել իրենց Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագիրը և վերադառնալ Վճարում ծառայության դիմաց (Fee-For-Service, «FFS») Medi-Cal-ին որևէ պահի և որևէ պատճառով:

Եթե Դուք ամերիկացի հնդկացի եք, Դուք իրավունք ունեք առողջապահական խնամքի ծառայություններ ստանալ Հնդկացիների առողջապահական կլինիկաներում (Indian Health Clinic, «IHC»): Դուք կարող եք նաև մնալ Kaiser Permanente-ի հետ կամ ապանդամագրվել, մինչ առողջապահական խնամքի ծառայություններ եք ստանում այդ վայրերում: Անդամագրման կամ ապանդամագրման մասին մանրամասների համար զանգահարեք Health Care Options՝ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) հեռախոսահամարով կամ այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov** (անգլերեն) կայքը:

IHC-ի մասին ավելին իմանալու համար խնդրում ենք զանգահարել Հնդկացիների առողջապահական ծառայություններ՝ **1-916-930-3927** հեռախոսահամարով կամ այցելել Հնդկացիների առողջապահական ծառայությունների կայքը՝ **www.ihs.gov** (անգլերեն) հասցեով:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ինչպես է աշխատում Ձեր ծրագիրը

L.A. Care Health Plan-ը կառավարվող խնամքի առողջապահական ծրագիր է, որը Medi-Cal-ի համար պայմանագիր է կնքել Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների բաժնի (Department of Health Care Services, «DHCS») հետ: Kaiser Permanente-ն Ձեր առողջապահական խնամքի մատակարար ցանցն է L.A. Care Health Plan-ի միջոցով:

Kaiser Permanente-ն առողջապահական խնամքի ծառայություններ է տրամադրում ուղղակիորեն Անդամներին ինտեգրված բժշկական խնամքի ծրագրի միջոցով: Մեր բժշկական խնամքի ծրագիրը Ձեզ տալիս է Ձեզ հարկավոր ապահովագրված ծառայությունները, օրինակ՝ սովորական խնամք, լաբորատոր ծառայություններ, շտապ օգնության ծառայություններ, Հրատապ խնամք և այլ նպաստներ, որոնք նկարագրված են այս Անդամի ձեռնարկում: Բացի դրանից, մեր առողջապահական կրթության ծրագրերն առաջարկում են Ձեր առողջությունը պահպանելու և բարելավելու հոյակապ տարբերակներ:

Ապահովագրված ծառայություններ ստանալու նպատակով նպաստների քաղաքականություններն ու գործընթացները կարող են տարբեր լինել L.A. Care Health Plan-ի մատակարար ցանցերում: Եթե մատակարար ցանցը փոխելու վերաբերյալ տեղեկություններ են հարկավոր, զանգահարեք L.A. Care Health Plan-ի Անդամների ծառայություններ՝ **1-888-839-9909** (TTY **711**) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Որպես Medi-Cal-ի Անդամ՝ կարող եք լրացուցիչ ծառայություններ ստանալ նաև Վճարում ծառայության դիմաց («FFS») Medi-Cal-ի միջոցով: FFS Medi-Cal-ից ստացվող ծառայությունները նկարագրված են Գլուխ 4-ում՝ «նպաստներ և ծառայություններ»:

Kaiser Permanente-ի Անդամների ծառայությունների ներկայացուցիչը կարող է օգնել Ձեզ հասկանալ՝

- Ինչպես է աշխատում Kaiser Permanente-ն
- Ինչպես ստանալ Ձեզ անհրաժեշտ խնամքը
- Ինչպես ժամադրություն նշանակել մատակարարի հետ ստանդարտ ժամկետներում, և
- Ինչպես պարզել, թե արդյոք Դուք որակավորվում եք փոխադրման ծառայությունների համար



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ավելին իմանալու համար զանգահարեք **1-800-464-4000** (TTY **711**)
հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև Անդամների ծառայությունների
վերաբերյալ տեղեկություններ գտնել առցանց՝ **kp.org** (անգլերեն) կայքում:

L.A. Care Health Plan-ի վերաբերյալ տեղեկանալու համար զանգահարեք
նրանց **1-888-839-9909** (TTY **711**) հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև
Անդամների ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ գտնել առցանց՝
www.lacare.org (անգլերեն) կայքում:

Ինչպես փոխել մատակարար ցանցերը

Դուք կարող եք որևէ պահի լքել Kaiser Permanente-ն և մեկ այլ L.A. Care Health Plan-ի
մատակարար ցանց ընտրել: Զանգահարեք L.A. Care Health Plan՝ **1-888-839-9909**
(TTY **711**) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն
օրերին: Ասացեք նրանց, որ ցանկանում եք փոխել մատակարար ցանցը:
Փոփոխությունն անմիջապես տեղի չի ունենա: L.A. Care Health Plan-ը
կտեղեկացնի Ձեզ, թե երբ է սկսվելու Ձեր նոր մատակարարի նշանակումը: Մինչ
այդ Դուք պետք է Kaiser Permanente-ից ծառայություններ ստանաք:

Ապահովագրված ծառայություններ ստանալու նպատակով նպաստների
քաղաքականություններն ու գործընթացները կարող են տարբեր լինել
L.A. Care Health Plan-ի մատակարար ցանցերում: Եթե մատակարար ցանցը
փոխելու վերաբերյալ տեղեկություններ են հարկավոր, զանգահարեք
L.A. Care Health Plan-ի Անդամների ծառայություններ՝ **1-888-839-9909** (TTY **711**)
հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Եթե Դուք ավելի շուտ եք ցանկանում լքել Kaiser Permanente-ն, Դուք կարող
եք խնդրել L.A. Care Health Plan-ից արագացված (արագ) վերանշանակում:
Եթե Ձեր խնդրանքի պատճառները համապատասխանում են արագացված
վերանշանակման պահանջներին, Դուք նամակ կստանաք՝ տեղեկացնելով Ձեզ,
որ Ձեզ վերանշանակել են:

Ինչպես փոխել առողջապահական ծրագրերը

Դուք կարող եք որևէ պահի լքել L.A. Care Health Plan-ը և անդամակցել մեկ
այլ ծրագրի ձեր բնակման վարչաշրջանում: Նոր ծրագիր ընտրելու համար
զանգահարեք Health Care Options՝ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**)
հեռախոսահամարով: Դուք կարող եք զանգահարել երկուշաբթիից ուրբաթ
օրերին, 8 a.m.-ից 6 p.m.-ը, կամ այցելել **www.healthcareoptions.dhcs.ca.gov**
(անգլերեն) կայքը:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝
1-800-464-4000 (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն
անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից):
Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

L.A. Care Health Plan-ը լքելու և մեկ այլ կառավարվող խնամքի ծրագրին միանալու Ձեր խնդրանքը մշակելու համար կպահանջվի մինչև 30 օր, եթե Ձեր խնդրանքի հետ կապված որևէ խնդիրներ չկան: Մինչ այդ Դուք պետք է մեզանից ծառայություններ ստանաք: Ձեր խնդրանքի կարգավիճակը պարզելու համար զանգահարեք Health Care Options՝ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) հեռախոսահամարով:

Եթե Դուք ավելի շուտ եք ցանկանում լքել L.A. Care Health Plan-ը, Դուք կարող եք խնդրել Health Care Options-ից արագացված (արագ) ապանդամագրում: Եթե Ձեր խնդրանքի պատճառները համապատասխանում են արագացված ապանդամագրման պահանջներին, Դուք նամակ կստանաք՝ տեղեկացնելով Ձեզ, որ Ձեզ ապանդամագրել են:

Անդամները, ովքեր կարող են արագացված ապանդամագրում խնդրել, ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Երեխաներ, որոնք ծառայություններ են ստանում Խնամակալության խնամքի կամ Որդեգրման օժանդակության ծրագրերի միջոցով
- Հատուկ առողջապահական խնամքի կարիքներով Անդամներ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հիմնական օրգանների փոխպատվաստումներով
- Մեկ այլ Medi-Cal, Medicare կամ կոմերցիոն կառավարվող խնամքի ծրագրում արդեն անդամագրված անդամներ

L.A. Care Health Plan-ը լքելու համար Դուք կարող եք անձամբ դիմել Ձեր տեղական վարչաշրջանի առողջապահության և մարդու ծառայությունների գրասենյակ: Գտեք Ձեր տեղական գրասենյակը <https://www.dhcs.ca.gov/services/medical/Pages/CountyOffices.aspx> (անգլերեն) կայքում կամ զանգահարեք Health Care Options՝ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) հեռախոսահամարով:

Նոր վարչաշրջան կամ Կալիֆորնիայից դուրս տեղափոխվող քուլեջի ուսանողներ

Եթե Դուք տեղափոխվում եք Կալիֆորնիայի մեկ այլ վարչաշրջան, որը Ձեր Բնակության տարածքից դուրս է, քուլեջ հաճախելու նպատակով, մենք միայն կապահովագրենք Ձեր նոր վարչաշրջանում շտապ օգնության և Հրատապ խնամքի ծառայությունները: Շտապ օգնության ծառայությունները և Հրատապ խնամքը մատչելի են բոլոր Medi-Cal անդամագրվածներին նահանգով մեկ՝ անկախ բնակության վարչաշրջանից: Սովորական և կանխարգելիչ խնամքն ապահովագրվում է միայն Ձեր Բնակության տարածքում:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն) հասցեով

Քուեջ հաճախելը Կալիֆորնիայի նոր վարչաշրջանում

Եթե Դուք անդամագրված եք Medi-Cal-ին և քուեջ եք հաճախելու մեկ այլ վարչաշրջանում Կալիֆորնիայում, Ձեզ անհրաժեշտ չէ դիմել Medi-Cal-ի համար այդ վարչաշրջանում: Երբ Դուք ժամանակավորապես լքում եք Ձեր տունը՝ քուեջ հաճախելու նպատակով, Ձեզ համար մատչելի են երկու տարբերակներ:

Կարող եք անել հետևյալից մեկը.

- Տեղեկացնել Ձեր տնային վարչաշրջանի գրասենյակը, որ Դուք ժամանակավորապես լքում եք Ձեր տունը՝ քուեջ հաճախելու նպատակով և տրամադրել Ձեր նոր վարչաշրջանի հասցեն: Վարչաշրջանը նահանգային տվյալների բազայում կթարմացնի գործի տվյալները Ձեր նոր հասցեով և վարչաշրջանի կոդով: Օգտվեք այս տարբերակից, եթե ցանկանում եք սովորական և կանխարգելիչ խնամք ստանալ Ձեր նոր վարչաշրջանում: Հնարավոր է, որ ստիպված լինեք փոխել առողջապահական ծրագիրը: Լրացուցիչ հարցերի և նոր ծրագրին անդամակցության ձգձգումները կանխելու համար, Դուք պետք է կապվեք Health Care Options-ի հետ՝ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) հեռախոսահամարով, որպեսզի աջակցություն ստանաք անդամագրման հարցում:

ԿԱՍ

- Ընտրեք չփոխել Ձեր կառավարվող խնամքի ծրագիրը, երբ ժամանակավորապես տեղափոխվում եք մեկ այլ վարչաշրջան քուեջ հաճախելու համար: Նոր վարչաշրջանում կարող եք ստանալ միայն շտապ օգնության խնամք կամ Հրատապ խնամք, եթե Ձեր նոր վարչաշրջանը Բնակության տարածքից դուրս է: Սովորական և կանխարգելիչ առողջապահական խնամքի համար Դուք պետք է օգտվեք Kaiser Permanente-ի մատակարար ցանցից Ձեր Բնակության տարածքում:

Քուեջ հաճախելը Կալիֆորնիայից դուրս

Եթե ժամանակավորապես հեռանում եք Կալիֆորնիայից մեկ այլ նահանգում քուեջ հաճախելու նպատակով և ցանկանում եք պահպանել Ձեր Medi-Cal ապահովագրումը, դիմեք Ձեր իրավասության աշխատողին Ձեր տնային վարչաշրջանի գրասենյակում: Քանի դեռ Դուք իրավասու եք, Medi-Cal-ը կապահովագրի շտապ օգնության և Հրատապ խնամքն այլ նահանգում: Medi-Cal-ը նաև կապահովագրի արտակարգ իրավիճակներ,



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

որոնք հոսպիտալացում են պահանջում Կանադայում կամ Մեքսիկայում, եթե ծառայությունը հաստատված է, և բժիշկը կամ հիվանդանոցը համապատասխանում է Medi-Cal-ի կանոններին: Եթե ցանկանում եք կանոնավոր կամ կանխարգելիչ խնամք ստանալ այլ նահանգում, պետք է դիմեք այդ նահանգի Medicaid: Եթե անդամագրվեք Medicaid-ին մեկ այլ նահանգում, ապա այլևս իրավասու չեք լինի Medi-Cal-ին Կալիֆորնիայում, և մենք չենք վճարի Ձեր առողջապահական խնամքի համար:

Խնամքի շարունակականություն

Ծառայություններն ավարտին հասցնելը ծրագրի մատակարար չհանդիսացողների կողմից

Նոր Անդամ

Եթե Դուք նոր Անդամ եք և խնամք էիք ստանում Kaiser Permanente-ի ցանցից դուրս գործող մատակարարներից, որոշ դեպքերում Դուք կկարողանաք շարունակել տեսնել այդ մատակարարներին մինչև 12 ամիս տևողությամբ: Եթե Ձեր բժշկական վիճակը նկարագրվում է ներքոնշյալ «Իրավասություն» վերնագրի տակ, ապա կարող եք խնամքի շարունակականություն խնդրել այդ մատակարարի մոտ:

Պայմանագիրը կորցրած մատակարար

Եթե Ձեր մատակարարը դադարում է աշխատել Kaiser Permanente-ի հետ, Դուք կարող եք շարունակել ծառայություններ ստանալ այդ մատակարարից: Սա խնամքի շարունակականության մեկ այլ ձևն է:

Եթե Դուք կցված եք մատակարար խմբի, որի պայմանագիրը մեզ հետ ավարտվում է, մենք պայմանագրի ավարտից առնվազն 60 առաջ (կամ հնարավորինս շուտ), Ձեզ գրավոր կերպով կզգուշացնենք այդ մասին: Մենք Ձեզ գրավոր կտեղեկացնենք առնվազն 60 օր շուտ, նախքան մենք կավարտենք մեր պայմանագիրը հիվանդանոցի հետ, որը Ձեր բնակավայրից մինչև 15 մղոն հեռավորության վրա է:

Իրավասություն

Ծառայություններն ավարտին հասցնելուն դրույթին ենթակա դեպքերն են.

- **Սուր առողջական խնդիրներ:** Հնարավոր է, որ մենք վճարենք այդ ծառայությունների համար, մինչև սուր առողջական վիճակը վերանա:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- **Լուրջ քրոնիկական հիվանդություններ:** Մենք կվճարենք այս ծառայությունների համար, մինչև հետևյալներից որևէ մեկն առաջինը տեղի ունենա. (1) մատակարարի հետ կնքված պայմանագրի ավարտից հետո 12 ամիս անց, կամ (2) բուժման մի կուրսն ավարտելուց հետո առաջին օրը, երբ անվտանգ կլինի փոխանցել Ձեր սպասարկումը Ցանցի մատակարարին, ինչպես որոշվել է Kaiser Permanente-ի կողմից՝ Անդամի և Ցանցից դուրս մատակարարի հետ խոսելուց հետո, և համապատասխանում է լավ մասնագիտական գործելակերպին: Լուրջ քրոնիկական վիճակներն այն լուրջ հիվանդությունները կամ այլ բժշկական վիճակներն են, որոնց դեպքում առկա է ստորև նշվածներից որևէ մեկը՝
 - ◆ Լիովին բուժման չեն ենթարկվում
 - ◆ Երկար ժամանակի ընթացքում ավելի են վատթարանում
 - ◆ Վիճակը մեղմելու կամ դրա վատթարացումը կանխելու համար մշտական բուժում է անհրաժեշտ
- **Մայրության խնամք:** Հնարավոր է, որ մենք վճարենք այս ծառայությունների համար, քանի դեռ Դուք հղի եք, և ծննդաբերությունից անմիջապես հետո
- **Ծառայություններ կանանց համար, ովքեր հոգեկան առողջության խնդիրներ ունեն հղի ժամանակ կամ ծննդաբերությունից անմիջապես հետո**
- **Մահացու հիվանդություններ:** Հնարավոր է, որ մենք վճարենք այս ծառայությունների համար հիվանդության ողջ ընթացքում: Մահացու հիվանդություններն այն հիվանդություններն են, որոնք բուժել կամ հաղթահարել հնարավոր չէ, և ամենայն հավանականությամբ՝ մահվան պատճառ կդառնան մեկ տարում կամ ավելի շուտ
- **Մինչև 3 տարեկան երեխաների խնամք:** Հնարավոր է, որ մենք վճարենք այս ծառայությունների համար, մինչև հետևյալներից որևէ մեկն առաջինը տեղի ունենա. (1) մատակարարի հետ կնքված պայմանագրի ավարտից հետո 12 ամիս անցնի կամ (2) երեխան երեք տարեկան դառնա



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- **Բուժման կուրսի մաս կազմող վիրահատություն կամ որևէ այլ ընթացակարգ:**

- ◆ Եթե Դուք նոր Անդամ եք, վիրահատությունը կամ ընթացակարգը պետք է հանձնարարվի և փաստագրվի մատակարարի կողմից առ այն, որ այն պետք է տեղի ունենա ապահովագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից 180 օրվա ընթացքում
- ◆ Եթե Ձեր մատակարարի պայմանագիրը Kaiser Permanente-ի հետ ավարտվում է, վիրահատությունը կամ ընթացակարգը պետք է հանձնարարվի և փաստագրվի մատակարարի կողմից առ այն, որ այն պետք է տեղի ունենա Kaiser Permanente-ի և մատակարարի միջև պայմանագրի ավարտի ամսաթվից 180 օրվա ընթացքում

- Դուք երկարաժամկետ խնամք եք ստանում Կառավարվող երկարաժամկետ խնամքի ծառայությունների և օժանդակության (Managed Long-term Services and Supports, MLTSS) ներքո

Ծառայություններն ավարտին հասցնելու ապահովագրության համար որակավորվելու նպատակով պետք է բավարարվեն հետևյալ բոլոր պահանջները՝

- Ծառայությունները ստանալու օրը Ձեր Medi-Cal ապահովագրությունն ուժի մեջ է
- Նոր Անդամների համար՝ մատակարարի ծառայությունների Ձեր նախկին ծրագրի ապահովագրությունն ավարտվել է կամ կավարտվի, երբ ուժի մեջ մտնի մեզ հետ Ձեր ապահովագրությունը
- Դուք ծառայություններ եք ստանում վերոնշյալ դեպքերից մեկում Ծրագրի մատակարար չհանդիսացողի կողմից Ձեր ապահովագրության ուժի մեջ մտնելու ամսաթվին, եթե նոր Անդամ եք, կամ պայմանագիրը կորցրած Ծրագրի մատակարարից՝ պայմանագրի ավարտի ամսաթվին
- Նոր Անդամների համար՝ երբ անդամագրվել եք Առողջապահական ծրագիրը, Ձեզ տարբերակ չի տրվել շարունակել Ձեր նախկին առողջապահական ծրագրում կամ ընտրել մեկ այլ ծրագիր (այդ թվում՝ ցանցից դուրս տարբերակ), որը կապահովագրեր Ձեր ընթացիկ Ծրագրի մատակարար չհանդիսացողի կողմից ստացված ծառայությունները
- Մատակարարը համաձայնում է մեր ստանդարտ պայմանագրային պայմաններին



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- Ծառայությունները բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և այնպիսի ծառայություններ են, որոնք այս Անդամի ձեռնարկի համաձայն՝ ծրագրի կողմից կվճարվեն, եթե տրամադրվեն Ցանցի մատակարարի կողմից
- Դուք պետք է ծառայություններն ավարտին հասցնելու հայց ներկայացնեք ապահովագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից 30 օրվա ընթացքում (կամ հնարավորինս շուտ), եթե նոր Անդամ եք, կամ Ծրագրի մատակարարի պայմանագրի դադարեցման ամսաթվից հետո

Kaiser Permanente-ն չի ապահովագրում ապահովագրված ծառայություններն ավարտին հասցնելը Ծրագրի մատակարար չհանդիսացողների կողմից, եթե հետևյալից մեկը ճիշտ է՝

- Ծառայություններն ապահովագրված չեն Medi-Cal-ի կողմից
- Ձեր մատակարարը չի ցանկանում աշխատել Kaiser Permanente-ի հետ: Ձեզ հարկավոր կլինի նոր մատակարար գտնել

Լրացուցիչ տեղեկություններ

Այս դրույթի մասին լրացուցիչ տեղեկությունների համար, ինչպես նաև ծառայություն կամ մեր «Ապահովագրված ծառայություններն ավարտին հասցնելը» քաղաքականության պատճենը հայցելու համար խնդրում ենք զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն: Պարզելու համար, թե արդյոք Դուք համապատասխանում եք Ցանցից դուրս գործող մատակարարից ծառայություններ ստանալու չափանիշներին, կամ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարեք Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով:

Արժեքներ

Անդամի արժեքներ

L.A. Care Health Plan-ը սպասարկում է Medi-Cal-ի համար որակավորվող անձանց: L.A. Care Health Plan-ի Անդամները չպետք է վճարեն ապահովագրված ծառայությունների համար, որոնք ստացվել են Ցանցի մատակարարներից: Դուք ապահովագնեք կամ նվազագույն չապահովագրված գումար չունեք: Ապահովագրված ծառայությունների ցանկի համար տես Գլուխ 4-ը («Նպաստներ և ծառայություններ»):



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Եթե ծառայություններ եք ստանում Ցանցից դուրս գործող մատակարարներից, դրանք չեն ապահովագրվի, եթե նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չստանաք: Եթե ծառայությունները չեն ապահովագրվում, հնարավոր է, որ ստիպված լինեք վճարել այդ ծառայությունների համար:

Կարող եք առանց նախնական հաստատման այցելել Ցանցից դուրս գործող մատակարարների որոշակի զգայուն ծառայությունների համար: Ապահովագրված զգայուն ծառայությունների մասին մանրամասների համար կարդացեք այս Գլուխ 3-ի «Զգայուն խնամք» վերնագիրը ներքևում:

Ձեզ նախնական հաստատում հարկավոր չէ շտապ օգնության ծառայությունների համար, նույնիսկ եթե այցելում եք Ցանցից դուրս գործող մատակարարների: Եթե ԱՄՆ-ից դուրս եք, Կանադայից կամ Մեքսիկայից բացի այլ երկրներում, և շտապ օգնության խնամքի կարիք ունեք, Kaiser Permanente-ն **չի** ապահովագրի Ձեր խնամքը:

Երբ Ձեր Բնակության տարածքից դուրս եք, սակայն Միացյալ Նահանգներում եք, մենք կապահովագրենք Հրատապ խնամքի ծառայությունները: Եթե Միացյալ Նահանգներից դուրս եք, Հրատապ խնամքի ծառայությունները չեն ապահովագրվում, և պետք է ինքներդ վճարեք Ձեր խնամքի համար: **Ձեր** Բնակության տարածքը Kaiser Permanente Հարավային Կալիֆորնիայի տարածաշրջանն է:

Ծախսերի համամասնական բաժին ունեցող անդամների համար

Հնարավոր է, որ պետք է ամեն ամիս վճարեք ծախսերի համամասնական բաժին: Ձեր ծախսերի համամասնական բաժնի չափը կախված է Ձեր եկամտից և ռեսուրսներից: Ամեն ամիս Դուք ինքներդ եք վճարելու Ձեր բժշկական հաշիվների համար, մինչև Ձեր վճարված գումարը հավասարվի Ձեր ծախսերի համամասնական բաժնին: Դրանից հետո L.A. Care Health Plan-ը կապահովագրի Ձեր խնամքն այդ ամսվա համար: Ծախսերի համամասնական բաժնի մասին մանրամասների համար զանգահարեք L.A. Care Health Plan` **1-888-839-9909** (TTY **711**) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերին:

Ինչպես է վճարվում մատակարարը

Kaiser Permanente-ն մատակարարներին վճարում է հետևյալ կերպ՝

- Մարդաքանակով վճարում
 - ◆ Որոշ մատակարարներ վճարվում են ֆիքսված գումար յուրաքանչյուր ամիս յուրաքանչյուր Անդամի համար: Սա կոչվում է մարդաքանակով վճարում: Մենք համագործակցում ենք մատակարարների հետ՝ որոշելու վճարման գումարը



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- Վճարում ծառայության դիմաց վճարումներ
 - ◆ Որոշ մատակարարներ խնամք են տրամադրում Medi-Cal-ի Անդամներին, որից հետո հաշիվ են ուղարկում մեզ մատուցված ծառայությունների համար: Սա կոչվում է վճարում ծառայության դիմաց: Մենք համագործակցում ենք մատակարարների հետ՝ որոշելու, թե ինչքան վճարել յուրաքանչյուր ծառայության դիմաց

Որպեսզի իմանաք, թե ինչպես ենք վճարում մատակարարներին, այցելեք մեր **kp.org** (անգլերեն) կայքը կամ զանգահարեք **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով:

Ինչպես խնդրել մեզ վճարել հաշիվը

Եթե հաշիվ ստանաք ապահովագրված ծառայության համար, մի վճարեք այն: Զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով:

Եթե Դուք վճարեք մի ծառայության համար, որը, Ձեր կարծիքով, պետք է մենք վճարենք, Դուք կարող եք պահանջագիր ներկայացնել: Օգտագործեք պահանջագրի ձևը և գրավոր տեղեկացրեք մեզ, թե ինչու եք ստիպված եղել վճարել: Պահանջագրի ձևը խնդրելու համար զանգահարեք **1-800-464-4000** կամ **1-800-390-3510** (TTY **711**) հեռախոսահամարով: Մենք կուսումնասիրենք Ձեր պահանջագիրը և կորոշենք, թե արդյոք կարող եք հետ ստանալ Ձեր գումարը:

Ահա, թե ինչ է հարկավոր անել վճարման կամ փոխհատուցման պահանջագիր ներկայացնելու համար.

- Որքան հնարավոր է շուտ ուղարկեք մեզ պահանջագրի լրացված ձևը: Դուք պահանջագրի ձևը կարող եք առցանց ստանալ հետևյալ ձևերով՝
 - ◆ Մեր կայքում՝ **kp.org** (անգլերեն) հասցեով
 - ◆ Անձամբ՝ Անդամների ծառայությունների գրասենյակից Ծրագրի հաստատությունում և Ծրագրի մատակարարներից: Կարող եք գտնել հաստատությունների վայրերը մեր **kp.org/facilities** (անգլերեն) կայքում
 - ◆ Զանգահարելով մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** կամ **1-800-390-3510** (TTY **711**) հեռախոսահամարով

Եթե Ձեզ օգնություն անհրաժեշտ լինի պահանջագիրը լրացնելու հարցում, մենք ուրախությամբ կօգնենք Ձեզ:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Եթե Դուք վճարել եք ծառայությունների համար, Դուք պետք է Ձեր պահանջագրին կցեք Ցանցից դուրս գործող մատակարարից ստացած որևէ հաշիվ կամ վճարման անդորրագիր:

Եթե Դուք ցանկանում եք, որ մենք վճարենք Ցանցից դուրս գործող մատակարարին ծառայության դիմաց, Դուք պետք է Ձեր պահանջագրին կցեք Ցանցից դուրս գործող մատակարարից ստացած որևէ հաշիվ կամ վճարման անդորրագիր: Եթե Դուք հետագայում որևէ հաշիվ ստանաք Ցանցից դուրս գործող մատակարարից, օգնության համար խնդրում ենք զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-390-3510** (TTY **711**) հեռախոսահամարով:

Խնամքը ստանալուց հետո հնարավորինս շուտ հարկավոր է մեզ ուղարկել պահանջագրի լրացված ձևաթուղթը:

Պահանջագրի լրացված ձևաթուղթը և դրան կցված հաշիվները կամ ստացականները հարկավոր է ուղարկել այստեղ՝

Kaiser Permanente
Claims Administration - SCAL
P.O. Box 7004
Downey, CA 90242-7004



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

3. Ինչպես խնամք ստանալ

Ինչպես առողջապահական խնամքի ծառայություններ ստանալ

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՊԵՍՁԻ ԻՄԱՆԱՔ, ԹԵ ՈՒՄԻՑ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՈՐ ԽՄԲԻՑ ԿԱՐԵԼԻ Է ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԱՄՔ ՍՏԱՆԱԼ:

Ապահովագրության տեղեկությունն այս Անդամի ձեռնարկում կիրառելի է այն դեպքում, երբ առողջապահական խնամքի ծառայություններ եք ստանում Ձեր Բնակության տարածքում: Ձեր Բնակության տարածքն է Kaiser Permanente տարածաշրջանը, որտեղ Դուք բնակվում եք: Ձեր Բնակության տարածքը Հարավային Կալիֆորնիան է՝ ինչպես նշված է այս Անդամի ձեռնարկի շապիկի վրա և Ձեր Kaiser Permanente ինքնության (Identification, ID) քարտում: Եթե այցելում եք մեկ այլ Kaiser Permanente տարածաշրջան, ապա Ձեզ համար կապահովագրվի միայն շտապ օգնության խնամք և Հրատապ խնամք, եթե իհարկե մենք այլ ծառայություններ չհաստատենք Ձեզ համար: Ձեր Բնակության տարածքում Ցանցի մատակարարներ գտնելու համար տեսեք մեր մատակարարների ցուցակները kp.org/facilities (անգլերեն) կայքում կամ զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով:

Դուք կարող եք սկսել առողջապահական խնամքի ծառայություններ ստանալ մեզ Ձեր կցման ուժի մեջ մտնելու ամսաթվից: Սա հանդիսանում է մեր կանոնների և քաղաքականությունները ամփոփում, և հիմնված է Kaiser Foundation Health Plan, Inc.-ի և L.A. Care Health Plan-ի միջև կնքված պայմանագրի վրա:

Միշտ Ձեզ մոտ ունեցեք Kaiser Permanente-ի ID քարտը, L.A. Care Health Plan-ի ID քարտը և Medi-Cal-ի նպաստների նույնականացման քարտը (Benefit Identification Card, BIC) և որևէ այլ առողջապահական ապահովագրության քարտեր: Երբեք թույլ մի տվեք, որպեսզի մեկ ուրիշն օգտագործի Ձեր ID քարտերը կամ BIC-ը:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն) հասցեով

Մենք Անդամներին ծառայություններ ենք տրամադրում մեր Ցանցի մատակարարների միջոցով: Համատեղ ուժերով՝ նրանք Ձեզ բարձրակարգ խնամք են տրամադրում: Երբ Դուք ընտրում եք Kaiser Permanente-ն որպես Ձեր մատակարար ցանց, Դուք որոշում եք Ձեր խնամքը ստանալ բժշկական խնամքի մեր ծրագրի միջոցով: Պարզելու համար, թե որտեղ են գտնվում մեր Ցանցի մատակարարները, այցելեք մեր կայքը՝ **kp.org/facilities** (անգլերեն) հասցեով: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY 711) հեռախոսահամարով:

Նոր Անդամները պետք է առաջնային խնամքի մատակարար (primary care provider, «PCP») ընտրեն, ով աշխատում է մեր մատակարար ցանցում և L.A. Care Health Plan-ի Սպասարկման տարածքում: Դուք պետք է PCP ընտրեք մեզ կցելուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե Դուք PCP չընտրեք, մենք Ձեր փոխարեն կկատարենք ընտրությունը: Դուք կարող եք Kaiser Permanente-ին կցված Ձեր ընտանիքի բոլոր անդամների համար ընտրել նույն PCP-ին կամ ընտրել տարբեր PCP-ներ:

Եթե ցանկանում եք պահպանել Ձեր ընթացիկ բժշկին կամ ցանկանում եք նոր PCP գտնել, տեսեք մատակարարների և վայրերի մեր առցանց ցուցակը **kp.org/facilities** (անգլերեն) կայքում: Կարող եք նաև զանգահարել մեր Անդամների սպասարկման կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY 711) հեռախոսահամարով:

Եթե Դուք չեք կարող Ձեզ անհրաժեշտ խնամքը ստանալ Kaiser Permanente-ի Ցանցի մատակարարից, Ձեր PCP-ն պետք է Southern California Permanente Medical Group-ից համաձայնություն խնդրի՝ Ձեզ Ցանցից դուրս գործող մատակարարի մոտ ուղարկելու համար: Ձեզ հաստատում անհրաժեշտ չէ Ցանցից դուրս գործող մատակարարի այցելելու համար, որպեսզի ստանաք զգայուն ծառայություններ, որոնք նկարագրված են ստորև այս գլխում՝ «Զգայուն խնամք» վերնագրի ներքո:

Կարդացեք այս գլուխը մինչև վերջ՝ PCP-ների և մատակարար ցանցի մասին ավելին իմանալու համար:

Առողջության սկզբնական գնահատում («IHA»)

Մենք խորհուրդ ենք տալիս, որպեսզի Դուք՝ որպես նոր Անդամ, այցելեք Ձեր PCP-ին առաջիկա 120 օրվա ընթացքում առողջության սկզբնական գնահատման (initial health assessment, «IHA») համար: IHA-ի նպատակն է օգնել Ձեր PCP-ին իմանալ Ձեր առողջապահական խնամքի պատմության և կարիքների մասին: Ձեր PCP-ն կարող է Ձեզ որոշ հարցեր տալ Ձեր



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY 711) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

առողջության պատմության մասին կամ խնդրել Ձեզ հարցաշար լրացնել:
Ձեր PCP-ն Ձեզ կտեղեկացնի նաև առողջապահական կրթության
խորհրդատվության և դասընթացների մասին, որոնք կարող են օգնել Ձեզ:

Ձեր ժամադրությանը Ձեզ հետ տարեք Ձեր BIC քարտը, Ձեր L.A. Care
Health Plan ID քարտը և Ձեր Kaiser Permanente-ի ID քարտը, ինչպես նաև Ձեր
անձը հաստատող փաստաթուղթ՝ լուսանկարով: Լավ կլինի, որ Ձեզ հետ
վերցնեք Ձեր դեղերի ցանկը և ունեցած հարցերը: Պատրաստ եղեք Ձեր
PCP-ի հետ քննարկելու Ձեր առողջապահական խնամքի կարիքներն ու
մտահոգությունները:

Անպայման զանգահարեք Ձեր PCP-ի գրասենյակ, եթե ժամադրությունից
ուշանում եք կամ չեք կարող գնալ ժամադրության:

Սովորական խնամք

Սովորական խնամքը պարբերաբար ստացվող առողջապահական խնամքն
է: Այն ներառում է կանխարգելիչ խնամք, որը կոչվում է նաև բարեկեցության
խնամք: Այն օգնում է Ձեզ առողջ մնալ և խուսափել հիվանդանալուց:
Կանխարգելիչ խնամքը ներառում է ստուգումներ, առողջապահական
կրթություն և խորհրդատվություն: Երեխաները կարող են ստանալ շատ
անհրաժեշտ վաղ կանխարգելման ծառայություններ, ինչպիսիք են՝ լսողության
և տեսողության զննում, զարգացման գնահատումներ և մանկաբույժների
Bright Futures ուղեցույցներում խորհուրդ տրվող շատ ավելի ծառայություններ:
Ի լրացումն կանխարգելիչ խնամքի, սովորական խնամքը ներառում է նաև
խնամք, երբ հիվանդ եք: Kaiser Permanente-ն ապահովագրում է սովորական
խնամքը Ձեր PCP-ից:

Ձեր PCP-ն կանի հետևյալը՝

- Կտրամադրի ամբողջ սովորական խնամքը, ներառյալ՝ կանոնավոր
ստուգումները, պատվաստումները, բուժումները, դեղատոմսերը և
բժշկական խորհուրդները
- Կպահի Ձեր առողջությանը վերաբերող գրառումները
- Անհրաժեշտության դեպքում ուղեգիր կտա (կուղարկի)
մասնագետների մոտ
- Կպատվիրի ռենտգեն, մամոգրաֆիա կամ լաբորատոր թեստեր,
եթե դրանց կարիքն ունեք



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝
1-800-464-4000 (TTY 711) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն
անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից):
Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Երբ սովորական խնամքի կարիք ունեք, կարող եք զանգահարել **1-833-574-2273** (TTY **711**) հեռախոսահամարով ժամադրություն նշանակելու համար կամ կարող եք առցանց ժամադրություն հայցել: Առցանց ժամադրություն խնդրելու համար այցելեք մեր կայքը՝ **kp.org** (անգլերեն) հասցեով:

Շտապ օգնության անհրաժեշտության դեպքում զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք:

Մեր կողմից ապահովագրվող և չապահովագրվող առողջապահական խնամքի և ծառայությունների մասին ավելին իմանալու համար ընթերցեք այս Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ը («Նպաստներ և ծառայություններ»):

Հրատապ խնամք

Հրատապ խնամքը շտապ օգնություն պահանջող կամ կյանքի համար վտանգավոր վիճակը **չէ**: Դա այն ծառայությունների համար է, որոնք Ձեզ անհրաժեշտ են՝ կանխելու համար լուրջ վնասը Ձեր առողջությանը՝ հանկարծակի հիվանդությունից, վնասվածքից կամ նախկինում Ձեր ունեցած առողջական վիճակի բարդացումից: Հրատապ խնամքի ժամադրությունները նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չեն պահանջում, մատչելի են ժամադրության խնդրանքից հետո 48 ժամվա ընթացքում: Եթե Ձեր հայցվող հրատապ խնամքի ծառայությունները նախնական հաստատում են պահանջում, Ձեզ ժամադրություն կառաջարկեն Ձեր խնդրանքից հետո 96 ժամվա ընթացքում:

Հրատապ խնամքն անհրաժեշտ է հարբուխի, կոկորդի ցավի, տենդի, ականջի ցավի, ձգված մկանի կամ մայրության դեպքում:

Դուք պետք է ստանաք Հրատապ խնամքի ծառայությունները Ցանցի մատակարարից, երբ Ձեր Բնակության տարածքում եք: Ձեր Բնակության տարածքում Ցանցի մատակարարից ստացված հրատապ խնամքը նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չի պահանջում:

Եթե Ձեր Բնակության տարածքից դուրս եք, բայց Միացյալ Նահանգներում եք, Հրատապ խնամքը նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չի պահանջում: Գնացեք Հրատապ խնամքի մոտակա հաստատություն: Medi-Cal-ը չի ապահովագրում Հրատապ խնամքի ծառայություններ Միացյալ Նահանգներից դուրս: Եթե Դուք ճամփորդում եք Միացյալ Նահանգների տարածքից դուրս և Հրատապ խնամքի կարիք ունեք, մենք **չենք** ապահովագրի Ձեր խնամքը:

Ձեր Հրատապ խնամքի մատակարարը կարող է Ձեզ դեղորայք դուրս գրել՝ որպես Հրատապ խնամքի այցի մի մաս: Եթե դեղորայք ստանաք, մենք կապահովագրենք այն՝ որպես Ձեր ապահովագրված Հրատապ խնամք:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Եթե Ձեր խնամքը վերաբերում է հոգեկան առողջության Հրատապ խնամքի խնդրին, զանգահարեք վարչաշրջանի Հոգեկան առողջության ծրագրի անվճար հեռախոսահամարով, որը հասանելի է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարներն առցանց գտնելու համար այցելեք <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx> (անգլերեն) կայքը:

Մենք չենք ապահովագրում Ցանցից դուրս գործող մատակարարների կողմից տրամադրված հետբուժական խնամքն այն բանից հետո, երբ Դուք այլևս Հրատապ խնամքի կարիք չունեք, բացառությամբ՝ ապահովագրված երկարատև օգտագործման բժշկական սարքավորումները: Հրատապ խնամք պահանջող խնդիրը լուծելուց հետո Դուք պետք է Ցանցի մատակարարի այցելեք որևէ հետագա խնամքի համար: Եթե Ձեզ երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ են հարկավոր, որոնք կապված են Ձեր Հրատապ խնամքի հետ, Ձեր Ցանցից դուրս գործող մատակարարը պետք է մեզանից նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանա:

Հրատապ խնամքի համար զանգահարեք **1-833-574-2273** հեռախոսահամարով (TTY **711**) և խոսեք վկայագրված առողջապահական խնամքի մասնագետի հետ (օրը 24 ժամ, շաբաթը 7 օր):

Շտապ օգնության խնամք

Շտապ օգնության անհրաժեշտության դեպքում զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք (emergency room, «ER»): Շտապ օգնության համար Ձեզ մեզանից նախնական հաստատում (նախօրոք լիազորում) հարկավոր **չէ**: Շտապ օգնության համար կարող եք այցելել ցանկացած հիվանդանոց կամ հաստատություն:

Շտապ օգնության խնամքը շտապ օգնություն պահանջող բժշկական վիճակների համար է: Այն հիվանդության կամ վնասվածքի համար է, որն, ըստ առողջության և բժշկության մասին միջին գիտելիքներ ունեցող ողջամիտ (խոհեմ) անձի (ոչ առողջապահական խնամքի մասնագետ), եթե անմիջապես չբուժվի, վտանգի տակ կդնի Ձեր առողջությունը (կամ Ձեր չձեռնարկված մանկան առողջությունը) կամ մարմնի ֆունկցիան, օրգանը, կամ մարմնի մի մասը կարող է լրջորեն վնասվել: Շտապ օգնություն պահանջող բժշկական վիճակները ներառում են, սակայն չեն սահմանափակվում, հետևյալը՝

- Ակտիվ երկունք
- Կոտրված ոսկոր
- Ուժեղ ցավ



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն) հասցեով

- Կրծքավանդակի ցավ
- Ուժեղ այրվածք
- Թմրամիջոցի գերդոզավորում
- Ուշաթափություն
- Ուժեղ արյունահոսություն
- Շտապ հոգեբուժական օգնություն պահանջող վիճակներ, ինչպիսիք են՝ ուժեղ դեպրեսիա կամ ինքնասպանության մտքեր (ապահովագրված է վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերի կողմից)

Մի գնացեք ER սովորական խնամքի համար: Դուք պետք է սովորական խնամք ստանաք Ձեր PCP-ից, ով Ձեզ ամենալավը գիտի: Եթե վստահ չեք, թե արդյոք ունեք շտապ օգնություն պահանջող իրավիճակ, զանգահարեք Ձեր PCP-ին: Դուք կարող եք նաև զանգահարել **1-833-574-2273 (TTY 711)** հեռախոսահամարով և խոսել առողջապահական խնամքի վկայագրված մասնագետի հետ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Եթե Ձեզ շտապ օգնություն է հարկավոր տանից հեռու, գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք («ER»), անգամ եթե այն Kaiser Permanente-ի ցանցում չէ: Եթե Դուք այցելում եք ER, խնդրեք նրանց զանգահարել մեզ: Դուք կամ Ձեզ ընդունած հիվանդանոցը պետք է զանգահարեք Kaiser Permanente շտապ օգնության խնամք ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Եթե ճամփորդում եք ԱՄՆ-ից դուրս, Կանադայից կամ Մեքսիկայից բացի այլ երկրներում, և շտապ օգնության խնամքի կարիք ունեք, Kaiser Permanente-ն **չի** ապահովագրի Ձեր խնամքը:

Եթե Ձեզ շտապ օգնության փոխադրում է անհրաժեշտ, զանգահարեք **911** համարով: Անհրաժեշտ չէ նախապես ստանալ Ձեր PCP-ի կամ Kaiser Permanente-ի թույլտվությունը նախքան ER գնալը:

Եթե շտապ օգնության խնամքից հետո Ձեզ խնամք է հարկավոր ցանցից դուրս գործող հիվանդանոցում (հետկայունացման խնամք), հիվանդանոցը կզանգահարի Kaiser Permanente-ին:

Հիշեք. մի զանգահարեք **911**, եթե դա շտապ օգնություն պահանջող վիճակ չէ: Շտապ օգնության խնամք ստացեք միայն շտապ օգնություն պահանջող դեպքերում, և ոչ թե սովորական խնամքի կամ թեթև հիվանդությունների համար, ինչպիսիք են՝ հարբուխը կամ կոկորդի ցավը: Եթե դա շտապ օգնություն պահանջող իրավիճակ է, զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք:



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Հետկայունացման խնամք

Հետկայունացման խնամքը հիվանդանոցում (այդ թվում՝ ER-ում) տրամադրվող բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններն են, որոնք Դուք ստանում եք այն բանից հետո, երբ Ձեզ բուժող բժիշկը համարում է, որ Ձեր շտապ օգնություն պահանջող բժշկական վիճակը կլինիկապես կայուն է: Հետկայունացման խնամքը նույնպես ներառում է երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ (durable medical equipment, «DME»), միայն երբ դրանք համապատասխանում են հետևյալ բոլոր պահանջներն՝

- DME սարքավորումն ապահովագրված է՝ ըստ Անդամի ձեռնարկի
- DME պարագա ունենալը Ձեզ համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է հիվանդանոցից դուրս գրվելուց հետո
- DME պարագան կապ ունի հիվանդանոցում Ձեր կողմից ստացված շտապ օգնության խնամքի հետ:

Այս Անդամի ձեռնարկի ներքո ապահովագրված երկարատև օգտագործման բժշկական սարքավորումների մասին հավելյալ տեղեկությունների համար ընթերցեք այս Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ի («Նպաստներ և ծառայություններ») «Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ» վերնագրով հատվածը:

Մենք ապահովագրում ենք հետկայունացման խնամք Ցանցից դուրս գործող մատակարարից, միայն եթե մենք այն նախնական հաստատել ենք, կամ եթե այլ կերպ պահանջվում է կիրառելի օրենքով: Ձեզ բուժող մատակարարը պետք է մեզանից լիազորում ստանա, նախքան մենք կվճարենք հետկայունացման խնամքի համար:

Ցանցից դուրս գործող մատակարարից հետկայունացման խնամք ստանալու նպատակով նախնական հաստատում խնդրելու համար մատակարարը պետք է զանգահարի մեզ՝ **1-800-225-8883 (TTY 711)** հեռախոսահամարով: Նա կարող է նաև զանգահարել Kaiser Permanente-ի Ձեր ID քարտի հակառակ կողմում նշված հեռախոսահամարով: Մատակարարը պետք է զանգահարի մեզ նախքան Ձեզ ծառայություններ մատուցելը:

Երբ մատակարարը զանգահարի, մենք կգրուցենք Ձեզ բուժող բժշկի հետ Ձեր առողջական խնդիրների մասին: Եթե մենք որոշենք, որ Ձեզ հետկայունացման խնամք է հարկավոր, մենք կլիազորենք ապահովագրված ծառայությունները: Որոշ դեպքերում, մենք կարող ենք կազմակերպել, որպեսզի Ցանցի մատակարարը խնամք տրամադրի:



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Եթե մենք որոշենք, որ խնամքը պետք է տրամադրվի ցանցի հիվանդանոցի, հմուտ բուժքույրական խնամքի հաստատության կամ այլ մատակարարի կողմից, մենք կարող ենք լիազորել բժշկական տեսանկյունից անհրաժեշտ փոխադրման ծառայություններ՝ մատակարարի մոտ Ձեզ հասցնելու համար: Դրանք կարող են հատուկ փոխադրամիջոցով տրամադրվող ծառայություններ լինել, որոնց համար մենք սովորաբար չենք վճարում:

Դուք պետք է մատակարարին հարցնեք, թե ինչ տիպի խնամք (այդ թվում՝ փոխադրում) ենք մենք լիազորել: Մենք վճարում ենք միայն այն ծառայությունների և դրանց հետ կապված փոխադրման համար, որոնք մենք լիազորել ենք: Եթե Դուք դիմել և ստացել եք ծառայություններ, որոնք ապահովագրված չեն, մենք կարող ենք մատակարարին չվճարել ծառայությունների համար:

Զգայուն խնամք

Անչափահասի համաձայնության ծառայություններ

Դուք կարող եք ստանալ միայն հետևյալ ծառայություններն առանց Ձեր ծնողի կամ խնամակալի համաձայնության, եթե 12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի եք.

- Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ հետևյալի համար՝
 - ◆ Սեռական բռնարարք
 - ◆ Ֆիզիկական բռնարարք
 - ◆ Երբ մտածում եք վնասել ինքներդ Ձեզ կամ ուրիշներին
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ կանխում/ստուգում/բուժում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխում/ստուգում/բուժում
- Թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայություններ
 - ◆ Թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժումն ապահովագրված չէ այս Անդամի ձեռնարկի ներքո: Կարող եք ստանալ այս ծառայությունները Ձեր բնակության վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի միջոցով:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Եթե 18 տարեկանից փոքր եք, կարող եք բժշկի գնալ առանց Ձեր ծնողի կամ խնամակալի համաձայնության հետևյալ տեսակի խնամքի համար՝

- Հղիության ստուգում և խորհրդատվություն
- Ընտանիքի պլանավորում/հակաբեղմնավորում (ներառյալ՝ ամլացում)
- Աբորտի ծառայություններ
- Սեռական բռնարարքից հետո մատուցվող խնամք

Հղիության ստուգման, ընտանիքի պլանավորման կամ հակաբեղմնավորման ծառայությունների համար պարտադիր չէ, որ բժիշկը կամ կլինիկան լինեն Kaiser Permanente-ի ցանցից: Կարող եք ընտրել ցանկացած Medi-Cal մատակարար և գնալ նրանց մոտ առանց ուղեգրի կամ նախօրոք լիազորման: Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներին առնչվող ծառայություններ կարող եք ստանալ Medi-Cal ընտանիքի պլանավորման մատակարարներից: Kaiser Permanente-ի ցանցից դուրս Medi-Cal մատակարար գտնելու կամ մատակարարի մոտ հասնելու փոխադրում ստանալու համար զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Անչափահասների հանաձայնության ծառայությունների համար, որոնք մասնագիտական հոգեկան առողջության ծառայություններ չեն, կարող եք այցելել Ցանցի մատակարար առանց ուղեգրի կամ նախօրոք լիազորման: Ձեր PCP-ից ուղեգիր և մեզանից նախնական հաստատում (նախօրոք լիազորման) հարկավոր չէ, որպեսզի անչափահասների հանաձայնության ծառայություններ ստանաք, որոնք ապահովագրվում են այս Անդամի ձեռնարկի ներքո:

Անչափահասների հանաձայնության ծառայությունները մասնագիտական հոգեկան առողջության ծառայություններն են, որոնք ապահովագրված չեն այս Անդամի ձեռնարկի ներքո: Մասնագիտական հոգեկան առողջության ծառայություններն ապահովագրվում են Ձեր բնակության վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի միջոցով:

Զգայուն խնամքին չառնչվող, Ցանցից դուրս գործող մատակարարից ստացված ծառայությունները չեն ապահովագրվում: Այս ծառայությունները տրամադրող բժիշկ կամ կլինիկա գտնելու կամ փոխադրում ստանալու հարցում օգնության համար կարող եք զանգահարել **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև զանգահարել **1-833-574-2273 (TTY 711)** հեռախոսահամարով և խոսել առողջապահական խնամքի վկայագրված մասնագետի հետ (օրը 24 ժամ, շաբաթը 7 օր):



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Անչափահասները կարող են գաղտնի խոսել ներկայացուցչի հետ իրենց առողջական խնդիրների վերաբերյալ՝ զանգահարելով **1-833-574-2273 (TTY 711)** հեռախոսահամարով, և խոսել առողջապահական խնամքի վկայագրված մասնագետի հետ (օրը 24 ժամ, շաբաթը 7 օր):

Չափահասների զգայուն ծառայություններ

Որպես չափահաս անձ, Դուք կարող եք չցանկանալ այցելել Ձեր PCP-ին զգայուն կամ գաղտնի խնամքի համար: Այդ դեպքում Դուք կարող եք ընտրել որևէ բժշկի կամ կլինիկա հետևյալ տեսակի խնամքի համար՝

- Ընտանիքի պլանավորում/հակաբեղմնավորում (բացի ամլացումից)
- Հղիության ստուգում և խորհրդատվություն
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ կանխում/ստուգում/բուժում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխում/ստուգում/բուժում
- Սեռական բռնարարքից հետո մատուցվող խնամք
- Ամբուլատոր արքորտի ծառայություններ

Հղիության ստուգման, ընտանիքի պլանավորման կամ հակաբեղմնավորման ծառայությունների համար պարտադիր չէ, որ բժիշկը կամ կլինիկան լինեն Kaiser Permanente-ի ցանցից: Կարող եք ընտրել ցանկացած Medi-Cal մատակարար և գնալ նրանց մոտ առանց ուղեգրի կամ նախօրոք լիազորման: Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներին առնչվող ծառայություններ կարող եք ստանալ Medi-Cal ընտանիքի պլանավորման մատակարարներից: Kaiser Permanente-ի ցանցից դուրս Medi-Cal մատակարար գտնելու համար զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Բոլոր այլ չափահասների զգայուն ծառայությունների համար կարող եք այցելել Ցանցի մատակարար առանց ուղեգրի և առանց նախօրոք լիազորման: Ձեր PCP-ից ուղեգիր և մեզանից նախնական հաստատում (նախօրոք լիազորման) հարկավոր չէ, որպեսզի չափահասների զգայուն ծառայություններ ստանաք, որոնք ապահովագրվում են մեր կողմից:

Զգայուն խնամքին չառնչվող, Ցանցից դուրս գործող մատակարարից ստացված ծառայությունները չեն ապահովագրվում: Այս ծառայությունները տրամադրող բժիշկ կամ կլինիկա գտնելու հարցում օգնության համար



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Կարող եք զանգահարել **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև զանգահարել **1-833-574-2273** հեռախոսահամարով և խոսել առողջապահական խնամքի վկայագրված մասնագետի հետ (օրը 24 ժամ, շաբաթը 7 օր):

Նախնական կարգադրագրեր

Նախնական առողջության կարգադրագիրն իրավաբանական ձև է: Այնտեղ Դուք կարող եք թվարկել, թե ինչպիսի խնամք եք ցանկանում ստանալ այն դեպքում, եթե հետագայում չկարողանաք խոսել կամ որոշումներ կայացնել: Դուք կարող եք նշել, թե ինչպիսի խնամք **չեք** ցանկանում ստանալ: Դուք կարող եք նշել որևէ մեկին, ինչպես օրինակ՝ Ձեր կնոջը/ամուսնուն, Ձեր փոխարեն առողջապահական խնամքի որոշումներ կայացնելու համար, եթե Դուք չկարողանաք դա անել:

Դուք կարող եք անվճար ստանալ նախնական կարգադրագրի ձևը Kaiser Permanente-ի Ծրագրի հաստատություններում: Դուք կարող եք նաև ձևը ստանալ դեղատներում, հիվանդանոցներում, փաստաբանական գրասենյակներում և բժիշկների գրասենյակներում: Հնարավոր է, որ ստիպված լինեք վճարել ձևի համար, եթե այն մեզանից չեք ստացել: Կարող եք նաև անվճար ներբեռնել ձևը մեր կայքից՝ **kp.org** (անգլերեն) հասցեով: Դուք կարող եք խնդրել Ձեր ընտանիքի անդամներին, PCP-ին կամ Ձեր վստահությունը վայելող որևէ անձին օգնել Ձեզ լրացնել ձևը:

Դուք իրավունք ունեք Ձեր բժշկական գրառումներում պահել Ձեր նախնական կարգադրագիրը: Դուք իրավունք ունեք որևէ պահի փոփոխել կամ չեղարկել Ձեր նախնական կարգադրագիրը:

Դուք իրավունք ունեք տեղեկանալու նախնական կարգադրագրի մասին օրենքներում կատարված փոփոխությունների մասին: Kaiser Permanente-ն կտեղեկացնի Ձեզ նահանգային օրենքներում փոփոխությունների մասին, այն տեղի ունենալուց ոչ ուշ քան 90 օր հետո: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով:

Օրգանների և հյուսվածքների նվիրատվություն

Դուք կարող եք օգնել կյանքեր փրկել՝ դառնալով օրգանի կամ հյուսվածքի նվիրատու: Եթե Դուք 15-ից 18 տարեկան եք, Դուք կարող եք նվիրատու դառնալ Ձեր ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ: Դուք կարող եք ցանկացած ժամանակ փոխել Ձեր միտքը և դադարել օրգանների նվիրատու:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

լինել: Եթե ցանկանում եք ավելին իմանալ օրգանների և հյուսվածքների նվիրաբերության մասին, խոսեք Ձեր PCP-ի հետ: Կարող եք նաև այցելել Միացյալ Նահանգների Առողջապահության ռեսուրսների վարչության օրգանների նվիրատուների կայքը՝ **organdonor.gov** (անգլերեն) հասցեով:

Որտեղից խնամք ստանալ

Ձեր խնամքի մեծ մասը Դուք ստանում եք Ձեր PCP-ից: Ձեր PCP-ն կտրամադրի Ձեզ սովորական կանխարգելիչ (բարեկեցության) խնամք: Դուք կայցելեք նաև Ձեր PCP-ին հիվանդության դեպքում խնամք ստանալու համար: Անպայման զանգահարեք Ձեր PCP-ին նախքան խնամք ստանալը: Ձեր PCP-ն ուղեգիր կտրամադրի (կուղարկի) Ձեզ մասնագետների մոտ, եթե նրանց կարիքն ունենաք:

Իմանալու համար, թե որտեղ են գտնվում Kaiser Permanente-ի Ցանցային մատակարարներն, այցելեք մեր կայքը՝ **kp.org/facilities** (անգլերեն) հասցեով կամ զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Առողջության հետ կապված հարցերում օգնություն ստանալու համար Դուք կարող եք զանգահարել նաև **1-833-574-2273 (TTY 711)** հեռախոսահամարով և խոսել առողջապահական խնամքի վկայագրված մասնագետի հետ (օրը 24 ժամ, շաբաթը 7 օր):

Եթե Ձեզ Հրատապ խնամք է հարկավոր, զանգահարեք **1-833-574-2273 (TTY 711)** հեռախոսահամարով: Հրատապ խնամքն այն խնամքն է, որը Ձեզ արագ է անհրաժեշտ, սակայն այն շտապ օգնություն պահանջող իրավիճակ չէ: Այն ներառում է խնամք այնպիսի վիճակների համար, ինչպիսիք են՝ հարբուխը, կոկորդի ցավը, տենդը, ականջի ցավը և ձգված մկանը:

Շտապ օգնության անհրաժեշտության դեպքում զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք:

Բարոյական առարկություն

Որոշ մատակարարներ բարոյական առարկություն ունեն որոշ ապահովագրված ծառայություններ տրամադրելու հարցում: Սա նշանակում է, որ նրանք իրավունք ունեն **չառաջարկել** որոշ ապահովագրված ծառայություններ, եթե բարոյապես համաձայն չեն ծառայությունների հետ: Եթե Ձեր մատակարարը բարոյական առարկություն ունի, նա կօգնի Ձեզ գտնել մեկ այլ մատակարար անհրաժեշտ ծառայությունների համար: Kaiser Permanente-ն



Չանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

նույնպես կարող է օգնել Ձեզ մատակարար գտնելու հարցում: Եթե մեկ այլ մատակարարի այցելելու համար ուղեգրի հարցում օգնության կարիք ունեք, զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Որոշ հիվանդանոցներ և այլ մատակարարներ չեն տրամադրում հետևյալ ծառայություններից մեկը կամ ավելին, որոնք կարող են ապահովագրված լինել Ձեր ծրագրի պայմանագրով, և որոնք կարող են անհրաժեշտ լինել Ձեր կամ Ձեր ընտանիքի անդամի համար՝ ընտանիքի պլանավորում, հակաբեղմնավորման ծառայություններ, ներառյալ՝ շտապ հակաբեղմնավորում, ամլացում, ներառյալ՝ փողերի կապում ծննդաբերության ժամանակ, անպտղության բուժումներ կամ արբորտներ: Դուք պետք է լրացուցիչ տեղեկություն ստանաք նախքան անդամագրվելը: Զանգահարեք Ձեր հնարավոր բժշկին, բժշկական խմբին, անկախ պրակտիկայի ընկերակցությանը կամ զանգահարեք առողջապահական ծրագրին՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով՝ համոզվելու համար, որ կարող եք ստանալ Ձեզ անհրաժեշտ առողջապահական խնամքի ծառայությունները:

Medi-Cal Մատակարարների ցանց

Medi-Cal մատակարարների ցանցը բժիշկների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբն է, որն աշխատում է Kaiser Permanente-ի հետ՝ մեր Անդամներին Medi-Cal ապահովագրված ծառայություններ տրամադրելու համար:

Kaiser Permanente-ն Ձեր առողջապահական խնամքի մատակարար ցանցն է L.A. Care Health Plan-ի միջոցով: Երբ Դուք ընտրում եք Kaiser Permanente-ն, Դուք որոշում եք Ձեր խնամքը ստանալ բժշկական խնամքի մեր ծրագրի միջոցով: Դուք պետք է ծառայությունների մեծ մասը ստանաք մեր Ցանցի մատակարարներից:

Կարող եք գնալ Ցանցից դուրս գործող մատակարարի մոտ առանց ուղեգրի կամ նախնական հաստատման շտապ օգնության կամ ընտանիքի պլանավորման ծառայությունների համար: Կարող եք նաև գնալ Ցանցից դուրս գործող մատակարարի մոտ տարածքից դուրս Հրատապ խնամքի համար, եթե մենք չենք աշխատում Ձեր տարածքում: Ցանցից դուրս բոլոր մնացած ծառայությունների համար պետք է ուղեգիր կամ նախնական հաստատում ստանաք, այլապես դրանք չեն ապահովագրվի:

Նշում. ամերիկացի հնդկացիները կարող են Հնդկացիների առողջապահական կլինիկա (Indian Health Clinic, IHC) ընտրել որպես իրենց PCP, նույնիսկ եթե IHC-ը Kaiser Permanente-ի ցանցում չէ:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Եթե Ձեր Ցանցի մատակարարը, ներառյալ՝ PCP-ն, հիվանդանոցը կամ այլ մատակարարը, բարոյական առարկություն ունի Ձեզ ապահովագրված ծառայություն տրամադրելու հարցում, ինչպես օրինակ՝ ընտանիքի պլանավորում կամ հղիության արհեստական ընդհատում, զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Բարոյական առարկության մասին մանրամասների համար տեսեք Բարոյական առարկություն վերնագիրը վերևում՝ այս գլխում:

Եթե Ձեր մատակարարը բարոյական առարկություն ունի, նա կարող է օգնել Ձեզ գտնել մեկ այլ մատակարար, ով կտրամադրի Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Kaiser Permanente-ն նույնպես կարող է օգնել Ձեզ մատակարար գտնելու հարցում:

Ցանցի մատակարարներ

Ձեր առողջապահական խնամքի կարիքների համար Դուք կօգտվեք Kaiser Permanente-ի ցանցից: Կանխարգելի և սովորական խնամքը Դուք կստանաք Ձեր PCP-ից: Դուք կօգտվեք նաև Kaiser Permanente-ի ցանցի մասնագետների, հիվանդանոցների և այլ մատակարարների ծառայություններից:

Մեր Ցանցի մատակարարների մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև գտնել Kaiser Permanente-ի Ցանցի մատակարարներին և վայրերն առցանց՝ **kp.org/facilities** (անգլերեն) հասցեով:

Շտապ օգնության անհրաժեշտության դեպքում զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք:

Շտապ օգնության խնամքից, Հրատապ խնամքից կամ զգայուն խնամքից բացի՝ մնացած խնամքի համար պետք է նախնական հաստատում ստանաք Kaiser Permanente-ից, նախքան կարող եք մատակարար այցելել Kaiser Permanente-ի ցանցից դուրս: Եթե նախնական հաստատում չստանաք և գնաք ցանցից դուրս մատակարարի մոտ խնամքի համար, որը շտապ օգնության խնամք, Հրատապ խնամք կամ զգայուն խնամք չէ, ապա հնարավոր է, որ ստիպված լինեք վճարել Ցանցից դուրս գործող մատակարարից ստացված ծառայությունների համար: Kaiser Permanente-ի մատակարարները, որոնք Ձեր Բնակության տարածքից դուրս են, համարվում են Ցանցից դուրս գործող մատակարարներ:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ցանցից դուրս կամ Ձեր Բնակության տարածքից դուրս

Ցանցից դուրս մատակարարներ Ձեր Բնակության տարածքում

Ցանցից դուրս գործող մատակարարները պայմանագիր չունեն Kaiser Permanente-ի հետ աշխատելու համար:

Դուք պետք է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանաք, նախքան կայցելեք Ցանցից դուրս գործող մատակարարի Բնակության տարածքում, բացառությամբ հետևյալի՝

- Շտապ օգնության խնամք
- Զգայուն խնամք

Բնակության տարածքում Հրատապ խնամքի համար Դուք պետք է այցելեք Kaiser Permanente Ցանցի մատակարարի: Ձեզ նախնական հաստատում հարկավոր չէ Ցանցի մատակարարից ստացված Հրատապ խնամքի համար:

Բնակության տարածքում Ցանցից դուրս գործող մատակարարից ստացված Հրատապ խնամքի համար Ձեզ նախնական հաստատում է հարկավոր: Եթե նախնական հաստատում չստանաք, ապա պետք է վճարեք Բնակության տարածքում Ցանցից դուրս գործող մատակարարից ստացված Հրատապ խնամքի համար: Շտապ օգնության խնամքի, Հրատապ խնամքի և զգայուն խնամքի ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք այս գլխի համապատասխան վերնագրերը: Եթե ամերիկացի հնդկացի եք կարող եք խնամք ստանալ IHC-ից մեր մատակարար ցանցից դուրս և առանց ուղեգրի:

Եթե Ձեզ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ են հարկավոր, որոնք ապահովագրված են Medi-Cal-ի կողմից, սակայն մատչելի չեն Kaiser Permanente-ի ցանցում, մենք կհաստատենք և ուղեգիր կտրամադրենք Ցանցից դուրս գործող մատակարարին այցելելու համար, որպեսզի ստանաք այդ ծառայությունները: Եթե մենք Ձեզ ուղեգիր ենք տալիս Ցանցից դուրս գործող մատակարարի մոտ, մենք կվճարենք Ձեր խնամքի համար:

Ձեր Հրատապ խնամքի մատակարարը կարող է Ձեզ դեղորայք դուրս գրել՝ որպես Հրատապ խնամքի այցի մի մաս: Եթե դեղորայք ստանաք, մենք կապահովագրենք այն՝ որպես Ձեր ապահովագրված Հրատապ խնամք:

Եթե ցանցից դուրս ստացվող ծառայությունների հետ կապված օգնության կարիք ունեք, քննարկեք Ձեր PCP-ի հետ կամ զանգահարեք **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ձեր Բնակության տարածքից դուրս

Ձեր Բնակության տարածքից դուրս սովորական խնամքը չի ապահովագրվում:

Եթե Դուք գտնվում եք Ձեր Բնակության տարածքից դուրս և խնամքի կարիք ունեք, որը շտապ օգնություն կամ Հրատապ խնամք **չէ**, զանգահարեք **1-833-574-2273 (TTY 711)** հեռախոսահամարով և խոսեք վկայագրված առողջապահական խնամքի մասնագետի հետ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Ձեր Հրատապ խնամքի մատակարարը կարող է Ձեզ դեղորայք դուրս գրել՝ որպես Հրատապ խնամքի այցի մի մաս: Եթե դեղորայք ստանաք, մենք կապահովագրենք այն՝ որպես Ձեր ապահովագրված Հրատապ խնամք:

Medi-Cal-ը չի ապահովագրում Հրատապ խնամքի ծառայություններ Միացյալ Նահանգներից դուրս: Եթե Դուք ճամփորդում եք Միացյալ Նահանգների տարածքից դուրս և Հրատապ խնամքի կարիք ունեք, Medi-Cal-ը չի վճարի Ձեր խնամքի համար:

Շտապ օգնության անհրաժեշտության դեպքում զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք: Kaiser Permanente-ն ապահովագրում է ցանցից դուրս տրամադրվող շտապ օգնության խնամքը: Եթե Դուք ճամփորդում եք Կանադա կամ Մեքսիկա և հոսպիտալացում պահանջող շտապ օգնության ծառայության կարիք ունեք, Kaiser Permanente-ն կապահովագրի Ձեր խնամքը: Եթե Դուք ճամփորդում եք Կանադայից կամ Մեքսիկայից բացի այլ երկրներ և շտապ օգնության խնամքի կարիք ունեք, մենք **չենք** ապահովագրի Ձեր խնամքը:

Նշում. ամերիկացի հնդկացիները կարող են ծառայություններ ստանալ ցանցից դուրս IHC-ից:

Եթե հարցեր ունեք Ցանցից դուրս գործող մատակարարների կամ Ձեր Բնակության տարածքից դուրս մատչելի ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Բժիշկներ

Դուք Ձեզ բժշկին կամ առաջնային խնամքի մատակարարին (PCP) կընտրեք մեր մատակարար ցանցից: Ձեզ մոտիկ գտնվող PCP գտնելու համար այցելեք մեր կայքը՝ **kp.org/facilities** (անգլերեն) հասցեով: Կարող եք նաև զանգահարել մեր Անդամների սպասարկման կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Դուք պետք է զանգահարեք նաև, եթե ցանկանում եք վստահ լինել, որ Ձեր ուզած PCP-ն նոր հիվանդներ է ընդունում:

Եթե Դուք բժիշկ ունեիք նախքան Kaiser Permanente-ի Անդամ դառնալը, Դուք կկարողանաք սահմանափակ ժամանակով պահպանել այդ բժշկին: Սա կոչվում է Խնամքի շարունակականություն: Խնամքի շարունակականության մասին ավելին կարող եք կարդալ այս Անդամի ձեռնարկի Գլուխ 2-ում: Ավելին իմանալու համար զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Եթե Ձեզ մասնագետ է հարկավոր, PCP-ն Ձեզ կուղեգրի մասնագետի մոտ Kaiser Permanente-ի ցանցում:

Հիշեք, եթե Դուք PCP չընտրեք, մենք Ձեր փոխարեն կկատարենք ընտրությունը: Դուք ավելի լավ գիտեք առողջապահական խնամքի Ձեր կարիքներն, այնպես որ լավ կլինի, եթե ինքներդ ընտրեք: Եթե նաև Medicare-ում, նաև Medi-Cal-ում եք, Ձեզ պետք չէ PCP ընտրել:

Եթե ցանկանում եք փոխել Ձեր PCP-ին, Դուք պետք է PCP ընտրեք Kaiser Permanente-ի ցանցից: Համոզվեք, որ PCP-ն ընդունում է նոր հիվանդներ: Որպեսզի իմանաք, թե ինչպես PCP ընտրել կամ փոխել, խնդրում ենք այցելել մեր կայքը՝ **kp.org** (անգլերեն) հասցեով, կամ զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Հիվանդանոցներ

Շտապ օգնություն պահանջող դեպքերում զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց:

Եթե իրավիճակը շտապ օգնություն չի պահանջում և Ձեզ հիվանդանոցային խնամք է հարկավոր, Ձեր PCP-ն կորոշի, թե որ հիվանդանոցն էք գնալու: Ձեզ հարկավոր կլինի գնալ մեր ցանցի հիվանդանոց: Մեր ցանցի հիվանդանոց գտնելու համար այցելեք մեր կայքը՝ **kp.org/facilities** (անգլերեն) հասցեով: Կարող եք նաև զանգահարել մեր Անդամների սպասարկման կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Խնամքի ժամանակին հասանելիություն

Ժամադրության տեսակ	Պետք է ժամադրություն առաջարկվի հետևյալ ժամանակահատվածում
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չեն պահանջում	48 ժամ
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք նախնական հաստատում (նախօրոք լիազորում) են պահանջում	96 ժամ
Ոչ-հրատապ առաջնային խնամքի ժամադրություններ	10 աշխատանքային օրվա ընթացքում
Ոչ-հրատապ մասնագետ	15 աշխատանքային օրվա ընթացքում
Ոչ-հրատապ հոգեկան առողջության մատակարար (ոչ-բժիշկ)	10 աշխատանքային օրվա ընթացքում
Ոչ-հրատապ ժամադրություն օժանդակ (աջակից) ծառայությունների համար՝ վնասվածքի, հիվանդության կամ այլ առողջական վիճակի ախտորոշման կամ բուժման նպատակով	15 աշխատանքային օրվա ընթացքում
Սովորական աշխատանքային ժամերին հեռախոսով սպասելու ժամանակ	10 րոպե
Հիվանդների տեսակավորում – 24/7 ծառայություններ	24/7 ծառայություններ – 30 րոպեից ոչ ավել

Եթե Դուք նախընտրում եք սպասել ավելի ուշ ժամանակվա ժամադրությանը, որն ավելի հարմար կլինի Ձեր ժամանակացույցին, կամ այցելել Kaiser Permanente-ի Ձեր նախընտրած մատակարարին, մենք կհարգենք Ձեր նախասիրությունը: Որոշ դեպքերում հնարավոր է, որ Դուք վերևի աղյուսակում նշված ժամկետից ավելի երկար սպասեք, եթե առողջապահական խնամքի վկայագրված մասնագետը որոշի, որ ավելի ուշ ժամադրությանը Ձեր առողջության վրա բացասական ազդեցություն չի ունենա:

Ժամադրության հասանելիության չափորոշիչները կանխարգելիչ խնամքի ծառայություններին չեն վերաբերվում: Ձեր բժիշկը կարող է կանխարգելիչ



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ժառայությունների համար առանձնահատուկ ժամանակացույց առաջարկել՝ ելնելով Ձեր կարիքներից: Այս չափորոշիչները չեն վերաբերվում նաև շարունակվող վիճակների պարբերաբար կատարվող հետբուժական խնամքին կամ մասնագետների մոտ մշտական ուղեգրերին:

Բանավոր թարգմանչի ծառայություններ

Եթե մեզ զանգահարելիս կամ ապահովագրված ծառայություններ ստանալիս ձեզ բանավոր թարգմանչի ծառայություններ են հարկավոր, խնդրում ենք տեղեկացնել մեզ: Բանավոր թարգմանչի ծառայությունները, ներառյալ՝ նշանների լեզուն, մատչելի են անվճար ձեզ համար աշխատանքային ժամերի ընթացքում: Մենք իսկապես խորհուրդ ենք տալիս չդիմել երեխաներին կամ ընտանիքի անդամներին՝ որպես բանավոր թարգմանիչ հանդես գալու համար: Մեր կողմից առաջարկվող բանավոր թարգմանչի ծառայությունների մասին հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն:

Դեպի խնամքի մատուցման վայրը ճամփորդության ժամանակը և հեռավորությունը

Kaiser Permanente-ն պետք է հետևի Ձեր խնամքի համար ճամփորդության ժամանակի և հեռավորության չափանիշներին: Այդ չափանիշներն օգնում են ապահովել, որպեսզի Դուք կարողանաք խնամք ստանալ առանց Ձեր բնակավայրից շատ երկար և շատ հեռու ճանապարհորդելու: Ճամփորդության ժամանակի և հեռավորության չափանիշները տարբեր են՝ կախված Ձեր բնակության վարչաշրջանից:

Եթե Ձեզ մատակարարի խնամք է հարկավոր, և այս մատակարարը գտնվում է Ձեր բնակավայրից հեռու, Դուք կարող եք զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով՝ Ձեզ ավելի մոտ գտնվող մատակարար գտնելու հարցում օգնություն ստանալու համար: Եթե մենք չկարողանանք ավելի մոտ գտնվող մատակարար գտնել, Դուք կարող եք խնդրել, որպեսզի մենք Ձեզ համար փոխադրում կազմակերպենք դեպի մատակարար, անգամ եթե նա գտնվում է Ձեր բնակավայրից հեռու:

Հեռու է համարվում, եթե Դուք չեք կարող այդ մատակարարին հասնել Ձեր վարչաշրջանի համար սահմանված ժամանակի և հեռավորության չափանիշների շրջանակում, անկախ Ձեր փոստային դասիչի համար կիրառվող որևէ այլընտրանքային հասանելիության չափանիշի:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Առաջնային խնամքի մատակարար («PCP»)

Դուք պետք է PCP ընտրեք Kaiser Permanente-ին Ձեզ կցելուց հետո 30 օրվա ընթացքում:

Ձեզ հարմար բժիշկ ընտրելու հարցում Ձեզ օգնելու համար Դուք կարող եք ուսումնասիրել մեր բժիշկների առցանց պրոֆիլները kp.org/facilities (անգլերեն) կայքում: Կարող եք պարզել, թե որ բժիշկներն են նոր հիվանդներ ընդունում, և ընտրել Ձեզ հարմար մեկին:

Չափահասները կարող են PCP ընտրել հետևյալից՝

- Չափահասների բժշկություն/Ներքին հիվանդությունների բժշկություն
- Ընտանեկան բժշկություն
- Մանկաբարձ-գինեկոլոգ մասնագետներ, ում Southern California Permanente Medical Group-ը («Բժշկական խումբ») նշանակում է որպես PCP-ներ

Ծնողները կարող են Մանկաբուժության/Պատանիների բժշկության կամ Ընտանեկան բժշկության բժիշկ (մինչև 18 տարեկան երեխաների համար) ընտրել որպես իրենց երեխայի PCP:

Ընտանիքի յուրաքանչյուր անդամ կարող է ընտրել իր սեփական անձնական բժշկին: Կախված մատակարարի տեսակից՝ Դուք կկարողանաք ընտրել մեկ PCP Ձեր ամբողջ ընտանիքի համար, ովքեր հանդիսանում են Kaiser Permanente-ի Անդամներ:

Դուք կարող եք նաև որոշել Ձեր առաջնային առողջապահական խնամքը ստանալ Դաշնային որակավորված առողջապահական կենտրոնում (Federally Qualified Health Center, «FQHC») կամ Գյուղական առողջապահական կլինիկայում (Rural Health Clinic, «RHC»): Այս առողջապահական կենտրոնները տեղակայված են այն տարածքներում, որտեղ շատ առողջապահական խնամքի ծառայություններ չկան: Եթե Դուք ցանկանում եք Ձեր առողջապահական խնամքը կանոնավոր կերպով ստանալ FQHC-ում կամ RHC-ում, Դուք պետք է փոխեք Ձեր առողջապահական խնամքի մատակարար ցանցը և ընտրեք FQHC կամ RHC՝ որպես Ձեր PCP L.A. Care Health Plan-ի միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք L.A. Care Health Plan-ի Անդամների ծառայություններ՝ **1-888-839-9909** (TTY **711**) հեռախոսահամարով:

Եթե Դուք կցվելուց հետո 30 օրվա ընթացքում PCP չընտրեք, մենք ինքներս Ձեզ համար PCP կընտրենք:



Չանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն) հասցեով

Դուք կարող եք ցանկացած պահի և ցանկացած պատճառով փոխվել մեկ այլ Kaiser Permanente մատչելի բժշկի: Կարող եք ցանկացած պահի փոխել Ձեր բժշկին առցանց՝ **kp.org** (անգլերեն) կայքում, կամ կարող եք զանգահարել մեր Անդամների սպասարկման կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Ձեր PCP-ն կանի հետևյալը՝

- Կծանոթանա Ձեր առողջության պատմության և կարիքների հետ
- Կպահի Ձեր առողջությանը վերաբերող գրառումները
- Կտրամադրի անհրաժեշտ կանխարգելիչ և սովորական խնամք
- Անհրաժեշտության դեպքում ուղեգիր կտա (կուղարկի) մասնագետի մոտ
- Անհրաժեշտության դեպքում կկազմակերպի հիվանդանոցային խնամք

Ձեզ մոտիկ գտնվող PCP գտնելու համար այցելեք մեր կայքը՝ **kp.org/facilities** (անգլերեն) հասցեով: Կարող եք նաև զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Բժիշկների և այլ մատակարարների ընտրություն

Դուք ավելի լավ գիտեք խնամքի Ձեր կարիքներն, այնպես որ լավ կլինի, եթե ինքներդ ընտրեք Ձեր PCP-ին:

Լավ է մնալ մեկ PCP-ի հետ, որպեսզի նա կարողանա ծանոթանալ Ձեր առողջապահական խնամքի կարիքներին: Այնուամենայնիվ, եթե ցանկանում եք նոր PCP ընտրել, Դուք կարող եք դա անել որևէ պահի: Դուք կարող եք PCP ընտրել, ով Kaiser Permanente-ի սպասարկման ցանցում է և նոր հիվանդներ է ընդունում:

Ձեր PCP-ին ընտրելու կամ փոխելու համար զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Մենք կարող ենք խնդրել Ձեզ փոխել Ձեր PCP-ին, եթե PCP-ն նոր հիվանդներ չի ընդունում, հեռացել է ցանցից կամ Ձեր տարիքի հիվանդներին խնամք չի տրամադրում: Մենք կարող ենք նաև L.A. Care Health Plan-ին խնդրել L.A. Care Health Plan-ի ցանցից մեկ ուրիշ մատակարար տրամադրել, եթե չեք կարողանում շփվել կամ համաձայնվել Ձեր PCP-ի հետ, կամ եթե չեք ժամանում կամ ուշանում եք ժամադրություններից: Եթե L.A. Care Health Plan-ը Ձեզ մեկ այլ մատակարար է նշանակում, նրանք այդ մասին գրավոր կտեղեկացնեն Ձեզ:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ժամադրություններ

Երբ Ձեզ խնամք է հարկավոր՝

- Զանգահարեք Ձեր PCP-ին
- Զանգահարելիս պատրաստ ունեցեք Ձեր Kaiser Permanente բժշկական գրառումների համարը (գտնվում է Ձեր Kaiser Permanente ID քարտի վրա)
- Եթե գրասենյակը փակ է, թողեք հաղորդագրություն Ձեր անունով և հեռախոսահամարով
- Ձեր ժամադրությանը Ձեզ հետ տարեք Ձեր BIC քարտը, L.A. Care Health Plan ID քարտը և Kaiser Permanente-ի ID քարտը, ինչպես նաև Ձեր անձը հաստատող փաստաթուղթ՝ լուսանկարով:
- Ժամադրության համար փոխադրում խնդրեք, եթե հարկավոր է
- Լեզվական աջակցություն կամ բանավոր թարգմանչի ծառայություններ խնդրեք, եթե հարկավոր է
- Ժամանակին ներկայացեք Ձեր ժամադրությանը
- Անմիջապես զանգահարեք, եթե չեք կարող գալ ժամադրությանը կամ ուշանում եք
- Պատրաստ ունեցեք Ձեր հարցերն ու դեղերի վերաբերյալ տեղեկությունները

Եթե Դուք շտապ օգնություն պահանջող իրավիճակ ունեք, զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք:

Վճարումներ

Դուք ստիպված **չեք** վճարել ապահովագրված ծառայությունների համար: Հիմնականում, Դուք հաշիվ չեք ստանալու մատակարարից: Դուք կարող եք նպաստների բացատրություն (Explanation of Benefits, «EOB») կամ հաշվետվություն ստանալ Kaiser Permanente-ից կամ մատակարարից: EOB-ները և հաշվետվությունները հաշիվներ չեն:

Եթե հաշիվ եք ստանում, զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հայտնեք մեզ պահանջված գումարը, սպասարկման



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

ամսաթիվը և հաշվի պատճառը: Դուք պատասխանատու **չեք** վճարելու մատակարարին որևէ գումար, որը Kaiser Permanente-ի պարտքն է ապահովագրված ծառայության համար:

Դուք պետք է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանաք, նախքան կայցելեք Ցանցից դուրս գործող մատակարարի, բացառությամբ հետևյալի՝

- Շտապ օգնության խնամք
- Հրատապ խնամք (Ձեր Բնակության տարածքում, ցանցից դուրս հրատապ խնամքը նախնական հաստատում է պահանջում)
- Զգայուն խնամք

Եթե Դուք նախնական հաստատում չստանաք, Դուք հավանաբար ստիպված կլինեք վճարել ցանցից դուրս գործող մատակարարների կողմից մատուցված ծառայությունների համար: Շտապ օգնության խնամքի, Հրատապ խնամքի և զգայուն խնամքի ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք այս գլխի համապատասխան վերնագրերը:

Եթե Ձեզ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ են հարկավոր, որոնք ապահովագրված են Medi-Cal-ի կողմից, սակայն մատչելի չեն Kaiser Permanente-ի ցանցում, մենք կհաստատենք և ուղեգիր կտրամադրենք Ցանցից դուրս գործող մատակարարին այցելելու համար, որպեսզի ստանաք այդ ծառայությունները:

Եթե Դուք հաշիվ ստանաք կամ Ձեզ խնդրեն համավճար վճարել, երբ կարծում եք, որ չպետք է դա անեք, Դուք կարող եք նաև պահանջագիր ներկայացնել: Դուք պետք է գրավոր տեղեկացնեք մեզ, թե ինչու ստիպված եղաք վճարել պարագայի կամ ծառայության համար: Մենք կժանոթանանք Ձեր պահանջագրին և կորոշենք, թե արդյոք կարող եք հետ ստանալ Ձեր գումարը: Պահանջագրի ձևաթուղթը կարող եք ստանալ առցանց՝ այցելելով **kp.org** (անգլերեն) կայքը: Կարող եք նաև զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Եթե Ձեզ օգնություն անհրաժեշտ լինի պահանջագիրը լրացնելու հարցում, մենք ուրախությամբ կօգնենք Ձեզ:

Ուղեգրեր

Անհրաժեշտության դեպքում Ձեր PCP-ն Ձեզ ուղեգիր կտա մասնագետին այցելելու համար: Մասնագետը բժիշկ է, ով լրացուցից կրթություն է ստացել բժշկության մեկ բնագավառում: Ձեր PCP-ն կհամագործակցի Ձեզ հետ մասնագետի ընտրության հարցում: Ձեր PCP-ի գրասենյակը կարող է օգնել Ձեզ ժամադրություն նշանակել մասնագետին այցելելու համար:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ուղեգիր պահանջող մասնագետների օրինակներն են՝

- Վիրաբուժություն
- Օրթոպեդիա
- Սրտաբանություն
- Ուռուցքաբանություն
- Մաշկաբանություն
- Ֆիզիոթերապիա, աշխատանքային և խոսքի թերապիաներ

Բացի այդ, Ձեր PCP-ն պետք է ուղեգիր տրամադրի, նախքան կկարողանաք խնամք ստանալ աուտոիդմի ծառայության որակավորված մասնագետների մոտ:

Եթե Դուք առողջական խնդիրներ ունեք, որոնք հատուկ երկարաժամկետ բժշկական խնամք են պահանջում, Ձեզ հարկավոր է երկարաժամկետ ուղեգիր: Սա նշանակում է, որ Դուք կկարողանաք այցելել միևնույն մասնագետի մեկից ավելի անգամ՝ առանց յուրաքանչյուր անգամ ուղեգիր ստանալու:

Եթե խնդիրներ ունեք երկարաժամկետ ուղեգիր ստանալու հարցում կամ ցանկանում եք ստանալ Kaiser Permanente-ի ուղեգրերի քաղաքականության կրկնօրինակը, զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Ձեզ ուղեգիր հարկավոր չէ հետևյալի համար՝

- Այցելություններ PCP-ին
- Չափահասներին սպասարկող ընդհանուր բժիշկներ, ընտանեկան բժիշկներ և մանկաբույժներ
- Օպտոմետրիայի մասնագետներ
- Հոգեկան առողջության ծառայություններ՝ թերևից միջին վիճակների համար, ներառյալ՝ հոգեկան առողջության սկզբնական գնահատումներ
- Մանկաբարձության/գինեկոլոգիայի (Obstetrics/Gynecology, «OB/GYN») այցելություններ
- Հրատապ և շտապ օգնության այցելություններ



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

3 | Ինչպես խնամք ստանալ

- Ընտանիքի պլանավորում (ավելին իմանալու համար զանգահարեք Ընտանիքի պլանավորման տեղեկությունների և ուղեգրի ծառայության գրասենյակ՝ **1-800-942-1054** հեռախոսահամարով)
- ՄԻԱՎ ստուգում և խորհրդատվություն (12 տարեկան և ավելի բարձր տարիքի)
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների ծառայություններ (12 տարեկան և ավելի բարձր տարիքի)
- Մանուալ թերապիայի ծառայություններ (կարող է ուղեգիր պահանջվել ցանցից դուրս FQHC-ների, RHC-ների և IHC-ների համար)

Անչափահասներին ուղեգիր հարկավոր չէ նաև հետևյալի համար.

- Ամբուլատոր հոգեկան առողջության ծառայություններ (միայն 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անչափահասներ) հետևյալի համար՝
 - ◆ Սեռական կամ ֆիզիկական չարաշահում
 - ◆ Երբ կարող եք վնասել ինքներդ Ձեզ կամ ուրիշներին
- Հղիության ստուգում և խորհրդատվություն
- Սեռական բռնարարք, ներառյալ՝ բռնաբարություն
- Թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայություններ (միայն 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անչափահասներ)
 - ◆ Թմրամիջոցների օգտագործման խանգարման բուժման ծառայություններն ապահովագրված չեն այս Անդամի ձեռնարկի ներքո: Սրանք ապահովագրվում են վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերի կողմից:

Ոչ բոլոր ամբուլատոր հոգեկան առողջության ծառայություններն են ապահովագրված այս Անդամի ձեռնարկի ներքո: Տեսեք Գլուխ 4-ի «Հոգեկան առողջության ծառայություններ» վերնագիրն ապահովագրված ծառայությունների մանրամասների համար:

Չնայած վերը նշված մատակարարներից խնամք ստանալու համար մեծ մասամբ ուղեգիր կամ նախնական հաստատում չի պահանջվում, հետևյալ իրավիճակներում կարող է ուղեգիր պահանջվել՝



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- Մատակարարին անհրաժեշտ կլինի նախնական հաստատում ստանալ որոշ ծառայությունների համար
- Հնարավոր է, որ մատակարարից պահանջվի Ձեզ ուղարկել Ձեր հիվանդության կամ առողջական վիճակի կլինիկական փորձ ունեցող մասնագետի մոտ

Նախնական հաստատում (նախօրոք լիազորում)

Որոշ տեսակի խնամքի համար Ձեր PCP-ին կամ մասնագետին անհրաժեշտ կլինի ստանալ Southern California Permanente Medical Group-ի թույլտվությունը, նախքան Դուք կստանաք այդ խնամքը: Սա կոչվում է նախօրոք լիազորում, նախօրոք հաստատում կամ նախնական հաստատում խնդրել: Դա նշանակում է, որ Southern California Permanente Medical Group-ը պետք է վստահ լինի, որ խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ կամ պետքական է:

Խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե դա ողջամիտ և անհրաժեշտ է պաշտպանելու համար Ձեր կյանքը, Ձեզ պաշտպանելու համար լրջորեն հիվանդանալուց կամ հաշմանդամ դառնալուց կամ նվազեցնելու համար սաստիկ ցավը՝ հիվանդության կամ վնասվածքի ախտորոշման միջոցով:

Հետևյալները ծառայությունների օրինակներ են, որոնք մշտապես պահանջում են նախնական հաստատում՝

- Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ
- Ստոմայական և ուրոլոգիական հարմարանքներ
- Ծառայություններ, որոնք մատչելի չեն Ցանցի մատակարարներից
- Փոխպատվաստումներ
- Ցանցից դուրս տրամադրվող ծառայություններ, ներառյալ՝ հոսպիտալացում

Նախնական հաստատում պահանջող ծառայությունների ամբողջական ցանկի և լիազորման որոշումներ կայացնելու ժամանակ մեր կողմից օգտագործվող չափանիշների համար խնդրում ենք այցելել մեր կայքը՝ **kp.org/UM** (անգլերեն) կամ զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Ձեզ երբեք նախնական հաստատում հարկավոր չէ շտապ օգնության խնամք կամ Հրատապ խնամք ստանալու համար, անգամ եթե դա ցանցից դուրս կամ



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ձեր Բնակության տարածքից դուրս է տրամադրվում: Սա ներառում է երկունք և ծծնդաբերություն, եթե հղի եք: Զգայուն շատ ծառայությունների համար Ձեզ նախնական հաստատում հարկավոր չէ: Զգայուն ծառայությունների մասին մանրամասների համար կարդացեք այս գլխի «Զգայուն խնամք» հատվածը:

Որոշ ծառայությունների համար Ձեզ անհրաժեշտ է ստանալ նախնական հաստատում (նախօրոք լիազորում): Համաձայն Առողջության և անվտանգության մասին օրենքի (Health and Safety Code) Բաժին 1367.01(h)(1)՝ Southern California Permanente Medical Group-ը որոշում կկայացնի սովորական նախնական հաստատումների վերաբերյալ Southern California Permanente Medical Group-ի կողմից որոշում կայացնելու համար ողջամտորեն անհրաժեշտ տեղեկություններն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Այն խնդրանքների դեպքում, երբ մատակարարը նշում է կամ Բժշկական խումբ համապատասխան նշանակված անձը որոշում է, որ սովորական ժամանակացույցին հետևելը կարող է լրջորեն վտանգի ենթարկել Ձեր կյանքը, կամ առողջությունը, կամ առավելագույն ֆունկցիոնալ վիճակ ձեռք բերելու, պահպանելու կամ վերադարձնելու Ձեր կարողությունը, Southern California Permanente Medical Group-ն արագացված (արագ) լիազորման որոշում կկայացնի: Մենք ծանուցում կտրամադրենք այնքան արագ, որքան որ պահանջում է Ձեր առողջական վիճակը, և ծառայությունների խնդրանքը ստանալուց հետո 72 ժամից ոչ ուշ:

Kaiser Permanente-ն չի վճարում վերանայողներին ապահովագրությունը կամ ծառայությունները մերժելու համար: Եթե Southern California Permanente Medical Group-ը չի հաստատում խնդրանքը, մենք Ձեզ Գործողության ծանուցման (Notice of Action, «NOA») նամակ կուղարկենք: NOA նամակը կտեղեկացնի Ձեզ, թե ինչպես բողոքարկում ներկայացնել, եթե Դուք չհամաձայնեք որոշման հետ:

Մենք Ձեզ հետ կկապվենք, եթե Southern California Permanente Medical Group-ին լրացուցիչ տեղեկություններ անհրաժեշտ լինեն Ձեր խնդրանքն ուսումնասիրելու համար:

Երկրորդ կարծիքներ

Հնարավոր է, որ Ձեզ երկրորդ կարծիք անհրաժեշտ լինի Ձեր մատակարարի կողմից առաջարկված խնամքի կամ Ձեր ախտորոշման կամ բուժման պլանի վերաբերյալ: Օրինակ՝ Ձեզ միգուցե երկրորդ կարծիք հարկավոր լինի, եթե Դուք վստահ չեք, թե արդյոք Ձեզ հարկավոր է նշանակված բուժումը կամ վիրահատությունը, կամ երբ Դուք փորձել եք հետևել բուժման պլանին, սակայն դա ազդեցություն չի ունեցել:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Երկրորդ կարծիք ստանալու համար զանգահարեք Ձեր PCP-ին: Ձեր PCP-ն կարող է Ձեզ ուղեգիր տալ Ցանցի մատակարարի մոտ, ով պատշաճ կերպով որակավորված բժշկական մասնագետ է Ձեր առողջական վիճակի վերաբերյալ երկրորդ կարծիք հայտնելու համար: Ցանցի մատակարարի հետ սա կազմակերպելու հարցում օգնության համար Դուք կարող եք նաև զանգահարել մեզ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Մենք կվճարենք երկրորդ կարծիքի համար, եթե Դուք կամ Ձեր Ցանցի մատակարարը խնդրեք այն, և Դուք երկրորդ կարծիք կստանաք Ցանցի մատակարարից: Ցանցի մատակարարից երկրորդ կարծիք ստանալու համար Դուք թույլտվություն ստանալու կարիք չունեք:

Եթե Kaiser Permanente-ի ցանցում երկրորդ կարծիք հայտնող մատակարար չկա, մենք կվճարենք Ցանցից դուրս գործող մատակարարի երկրորդ կարծիքի համար: Եթե չկա Ցանցի մատակարար, ով համապատասխան ձևով որակավորված բժշկական մասնագետ է Ձեր առողջական վիճակի համար, Անդամների ծառայությունները կօգնեն Ձեզ խորհրդատվություն կազմակերպել Ցանցից դուրս գործող մատակարարի հետ՝ երկրորդ կարծիք ստանալու նպատակով: Մենք կտեղեկացնենք Ձեզ 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե երկրորդ կարծիքի համար Ձեր ընտրած մատակարարը հաստատվել է: Եթե ունեք քրոնիկական, ծանր կամ լուրջ հիվանդություն, կամ Ձեր առողջությանն անհապաղ և լուրջ վտանգ է սպառնում, ներառյալ, սակայն առանց սահմանափակման, կյանքի, վերջույթի կամ մարմնի կարևոր մասի կամ մարմնական գործառույթի կորուստ, մենք որոշում կկայացնենք 72 ժամվա ընթացքում:

Եթե մենք մերժում ենք երկրորդ կարծիքի Ձեր խնդրանքը, Դուք կարող եք բողոքարկում (կամ գանգատ) ներկայացնել: Բողոքարկումների մասին ավելին իմանալու համար տեսեք այս Անդամի ձեռնարկի Գլուխ 6-ը («Խնդիրների մասին տեղեկացնելն ու դրանք լուծելը»):

Կանացի առողջության մասնագետներ

Դուք կարող եք այցելել Kaiser Permanente-ի ցանցում գործող կանացի առողջության մասնագետի կանացի սովորական և կանխարգելիչ խնամքի ծառայությունների համար անհրաժեշտ ապահովագրված խնամք ստանալու համար: Նման ծառայությունների համար Ձեզ հարկավոր չէ ստանալ ուղեգիր Ձեր PCP-ից: Կանացի առողջության մասնագետ գտնելու հարցում օգնության համար կարող եք զանգահարել **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև զանգահարել **1-833-574-2273 (TTY 711)** հեռախոսահամարով և խոսել առողջապահական խնամքի վկայագրված մասնագետի հետ (օրը 24 ժամ, շաբաթը 7 օր):



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

4. Նպաստներ և ծառայություններ

Ինչ է ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը

Այս բաժինը բացատրում է Ձեր՝ որպես Kaiser Foundation Health Plan, Inc.-ի Անդամի բոլոր ապահովագրված ծառայությունները: Ձեր ապահովագրված ծառայություններն անվճար են, եթե դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և մատուցվում են այս Անդամի ձեռնարկում նշված կանոնների համաձայն: Դուք պետք է ծառայությունների մեծ մասը ստանաք Ցանցի մատակարարներից: Որոշ դեպքերում մենք կարող ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ ապահովագրել Ցանցից դուրս գործող մատակարարից: Դուք պետք է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) խնդրեք, եթե խնամքը ցանցից դուրս է, բացի զգայուն ծառայություններից, շտապ օգնության և հրատապ խնամքի ծառայություններից:

Խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե դա ողջամիտ և անհրաժեշտ է պաշտպանելու համար Ձեր կյանքը, Ձեզ պաշտպանելու համար լրջորեն հիվանդանալուց կամ հաշմանդամ դառնալուց կամ նվազեցնելու համար ցավը՝ հիվանդության կամ վնասվածքի ախտորոշման միջոցով: Ձեր ապահովագրված ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Դուք պետք է ծառայությունների մեծ մասը ստանաք Kaiser Permanente-ի Ցանցի մատակարարներից: Ցանցից դուրս գործող մատակարարներից կարող եք ստանալ միայն հետևյալ ծառայությունները՝

- Ընդկացիների առողջապահական ծառայությունների հաստատություններում տրամադրվող խնամք
- Շտապ օգնության բժշկական փոխադրման ծառայություններ



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

4 | Նպաստներ և ծառայություններ

- Շտապ օգնության ծառայություններ և հետկայունացման խնամք
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ
- Հրատապ խնամք սպասարկման տարածքից դուրս
- Ուղեգրեր Ցանցից դուրս գործող մատակարարների մոտ
- Որոշ զգայուն ծառայություններ՝ ինչպես նկարագրվում է Գլուխ 3-ի «Զգայուն խնամք» հատվածում

Նշում. Դուք միգրացե կարողանաք որոշ ծառայություններ ստանալ ցանցից դուրս Դաշնային որակավորված առողջապահական կենտրոնում (Federally Qualified Health Center, «FQHC») կամ Գյուղական առողջապահական կլինիկայում (Rural Health Clinic, «RHC»): FQHC և RHC ծառայությունների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք L.A. Care Health Plan:

Հետևյալը մեր կողմից ապահովագրվող ծառայությունների օրինակներն են՝

- Ամբուլատոր ծառայություններ
- Ամբուլատոր դեղատոմսով դեղեր, պարագաներ և հավելումներ
- Շտապ օգնության ծառայություններ
- Հոսպիս և պալիատիվ խնամք
- Հոսպիտալացում
- Հետազոտական ծառայություններ
- Լաբորատոր և ճառագայթման ծառայություններ, օրինակ՝ ռենտգեն
- Կառավարվող երկարաժամկետ խնամքի ծառայություններ և օժանդակություն (Managed Long-term services and supports, «MLTSS»)
- Նոր ծննդաբերած մոր և մանկան խնամք
- Հոգեկան առողջության ծառայություններ՝ թերևից միջին վիճակների համար, ներառյալ՝ հոգեկան առողջության սկզբնական գնահատումներ
- Ոչ շտապ օգնության բժշկական փոխադրումներ (Non-emergency medical transportation, «NEMT»)



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

4 | Նպաստներ և ծառայություններ

- Ոչ բժշկական փոխադրումներ (Non-medical transportation, «NMT»)
- Մանկաբուժական ծառայություններ
- Կանխարգելիչ և բարեկեցության ծառայություններ և քրոնիկական հիվանդությունների կառավարում
- Վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման (թերապիա) ծառայություններ և սարքեր
- Վերականգնողական վիրահատություններ
- Թմրամիջոցների օգտագործման խանգարումների զննման ծառայություններ
- Հեռակա առողջապահության ծառայություններ Kaiser Permanente-ի Ցանցի մատակարարներից
- Ակնաբուժական ծառայություններ

Կարդացեք ստորև ներկայացված բոլոր բաժինները, որպեսզի ավելին իմանաք այն ծառայությունների մասին, որոնք կարող եք ստանալ:

Kaiser Permanente-ի Անդամներին տրամադրվող առողջապահական խնամքի ծառայությունները ենթական են Kaiser Foundation Health Plan, Inc.-ի և L.A. Care Health Plan-ի միջև կնքված պայմանագրի պայմաններին, սահմանափակումներին և բացառություններին, և նշված են այս Անդամի ձեռնարկում և որևէ հավելվածներում:

Ապահովագրված ծառայություններ ստանալու նպատակով նպաստների քաղաքականություններն ու գործընթացները կարող են տարբեր լինել L.A. Care Health Plan-ի մատակարար ցանցերում: Եթե մատակարար ցանցը փոխելու վերաբերյալ տեղեկություններ են հարկավոր, զանգահարեք L.A. Care Health Plan-ի Անդամների ծառայություններ՝ **1-888-839-9909** (TTY **711**) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Առողջապահական ծրագիրը կողմից ապահովագրվող Medi-Cal նպաստները

Ամբուլատոր ծառայություններ

Չափահասների պատվաստումներ

Դուք կարող եք առանց նախնական հաստատման չափահասի պատվաստումներ (սրկուցներ) ստանալ Ցանցի մատակարարից: Մենք ապահովագրում ենք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, «CDC») Պատվաստման գործելակերպերի խորհրդատվական կոմիտեի (Advisory Committee on Immunization Practices, «ACIP») կողմից առաջարկվող պատվաստումները:

Մանկական պատվաստումների համար տեսեք ներքևում այս Գլուխ 4-ի «Մանկաբուժական ծառայություններ» վերնագիրը:

Ալերգիայի խնամք

Մենք ապահովագրում ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ալերգիայի թեստավորումն ու բուժումը, ներառյալ՝ ալերգիայի դեսենսիբիլիզացիա, հիպոսենսիբիլիզացիա կամ իմունոթերապիա:

Անեսթեզիոլոգիական ծառայություններ

Մենք ապահովագրում ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ անեսթեզիոլոգիական ծառայություններ, երբ ստանում եք ամբուլատոր խնամք:

Ատամնաբուժական ընթացակարգերի համար մենք ապահովագրում ենք հետևյալ ծառայությունները, երբ դրանք լիազորված են Southern California Permanente Medical Group-ի կողմից՝

- Բժշկի կողմից տրամադրվող՝ քնաբերի ներերակային (intravenous, IV) ներարկման և ընդհանուր անզգայացման ծառայություններ
- Հաստատության ծառայություններ, որոնք կապված են քնաբեր դեղի ներարկման կամ անզգայացման հետ, ամբուլատոր վիրաբուժական կենտրոնում, Դաշնային որակավորված առողջապահական կենտրոնում («FQHC»), ատամնաբույժի ընդունարանում կամ հիվանդանոցում

Մենք չենք վճարում որևէ այլ տեսակի ատամնաբուժական ծառայությունների համար, օրինակ՝ ատամնաբույժի ծառայություններ:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Մանուալ թերապիայի ծառայություններ

Մենք ապահովագրում ենք մանուալ թերապիայի ծառայություններ, որն սահմանափակվում է ողնաշարի բուժմամբ՝ մանուալ մանիպուլյացիաների միջոցով: Մանուալ թերապիայի ծառայություններն սահմանափակվում է ամսական երկու ծառայությունով՝ ասեղնաբուժության, ատոլիոլոգիայի, աշխատանքային թերապիայի և խոսքի թերապիայի ծառայությունների համակցությամբ: Մենք կարող ենք ապահովագրել լրացուցիչ այցեր՝ ինչպես անհրաժեշտ է բժշկական տեսանկյունից:

■ **Մանուալ թերապիայի ծառայություններ American Specialty Health Ցանցի մատակարարներից**

Մենք համագործակցում ենք American Specialty Health-ի հետ մանուալ թերապիայի ծառայությունները կազմակերպելու համար: Մանուալ թերապիայի ծառայությունների մասին մանրամասների համար խնդրում ենք զանգահարել American Specialty Health՝ **1-800-678-9133 (TTY 711)** հեռախոսահամարով: Հետևյալ Անդամներն իրավասու են ստանալու մանուալ թերապիայի ծառայություններ American Specialty Health Ցանցի մատակարարներից՝

- 21 տարեկանից ցածր տարիքի երեխաներ,
- Հղի կանայք՝ մինչև հղիության ավարտին հաջորդող 60 օրը ներառող ամսի վերջը,
- Հմուտ բուժքույրական խնամքի հաստատության, միջանկյալ խնամքի հաստատության կամ ենթասուր խնամքի հաստատության բնակիչներ

■ **Մանուալ թերապիայի ծառայություններ FQHC-ներից և RHC-ներից**

Medi-Cal-ը կարող է մանուալ թերապիայի ծառայություններ ապահովագրել բոլոր տարիքի Անդամների համար, եթե դրանք մատուցվում են L.A. Care Health Plan-ի ցանցի FQHC-ում կամ RHC-ում: FQHC-ները կամ RHC-ները կարող են ուղեգիր պահանջել ծառայությունների համար: FQHC-ում կամ RHC-ում մատչելի ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք L.A. Care Health Plan-ի Անդամների ծառայություններ՝ **1-888-839-9909 (TTY 711)** հեռախոսահամարով:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Դիալիզի/հեմոդիալիզի ծառայություններ

Մենք ապահովագրում ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ դիալիզի բուժումներ: Մենք ապահովագրում ենք նաև հեմոդիալիզի (քրոնիկական դիալիզ) և ներորովայնային դիալիզի ծառայություններ: Դուք պետք է համապատասխանեք Southern California Permanente Medical Group-ի և դիալիզ կատարող կենտրոնի կողմից սահմանված բոլոր բժշկական չափանիշներին:

Մենք չենք ապահովագրում

- Լավ ինքնազգացողության, հարմարավետության կամ շքեղության սարքավորումներ, պարագաներ և հատկանիշներ
- Ոչ բժշկական պարագաներ, օրինակ՝ ուղևորություններ կատարելու համար դիալիզի տնային սարքավորումը դյուրակիր դարձնող գեներատորներ կամ այլ պարագաներ

Ամբուլատոր վիրահատություններ և այլ ամբուլատոր ընթացակարգեր

Մենք ապահովագրում ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ամբուլատոր վիրահատություններ և այլ ամբուլատոր ընթացակարգեր:

Բժշկի ծառայություններ

Մենք ապահովագրում ենք բժշկի ծառայություններ, երբ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Որոշ ծառայություններ կարող են տրամադրվել խմբակային ժամադրության ընթացքում:

Պոդիատրիայի (ոտքերի) ծառայություններ

Մենք ապահովագրում ենք պոդիատրիայի ծառայություններն, ինչպես անհրաժեշտ է բժշկական տեսանկյունից, ախտորոշման և մարդու ոտքի բժշկական, վիրաբուժական, մեխանիկական, մանիպուլյատիվ և էլեկտրական բուժման համար: Սա ներառում է ոտնաթաթի կոճը և ջիլերն, ինչպես նաև ոտնաթաթի գործառույթները ղեկավարող ոտքի մկանների և ջիլերի ոչ վիրաբուժական բուժումը:

Բուժման թերապիաներ

Մենք ապահովագրում ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բուժման թերապիաները, ներառյալ՝

- Քիմիաթերապիա



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- Ծառագայթաբուժություն
- Ներարկվող դեղեր և պարագաներ Սա այն դեղերն ու պարագաներն են, որոնք պետք է ներակվեն և դիտարկվեն առողջապահական խնամքի մատակարարի կողմից: Մենք ապահովագրում ենք դրանք, երբ նշանակված են Ցանցի մատակարարի կողմից՝ մեր դեղերի ղեղացուցակի ուղեցույցների համաձայն: Պարագաները պետք է ներարկվեն Ծրագրի հաստատությունում կամ տան այցելության ժամանակ, որպեսզի ապահովագրվեն: Մեր ապահովագրված ներարկվող դեղերի օրինակները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝
 - ◆ Ամբողջական արյուն, արյան կարմիր բջիջներ, պլազմա և տրոմբոցիտներ
 - ◆ Քաղցկեղի քիմիաբուժական դեղեր
 - ◆ Ալերգիայի հակածիններ
 - ◆ Դեղեր և պարագաներ, որոնք ներարկվում են ներերակային թերապիայի կամ սրկման միջոցով

Մեր դեղերի ղեղացուցակի մասին մանրամասների համար կարդացեք այս Գլուխ 4-ի «Ամբուլատոր դեղատոմսով դեղեր, պարագաներ և հավելումներ» վերնագիրը:

Հեռակա առողջապահության ծառայություններ

Kaiser Permanente-ն կարող է որոշ ծառայություններ տրամադրել հեռակա առողջապահության միջոցով: Հեռակա առողջապահությունը ծառայություններ ստանալու տարբերակ է, երբ ֆիզիկապես Ձեր մատակարարի հետ նույն վայրում չեք: Հեռակա առողջապահությունը կարող է ներառել կենդանի զրույց Ձեր մատակարարի հետ: Հեռակա առողջապահությունը կարող է նաև ներառել տեղեկատվության կիսում Ձեր մատակարարի հետ առանց կենդանի զրույցի: Կարևոր է, որ նաև Դուք, նաև Ձեր մատակարարը համաձայնվեք, որ հեռակա առողջապահության օգտագործումը հարմար է Ձեզ համար: Հեռակա առողջապահության այցելությունները մատչելի չեն բոլոր առողջական վիճակների կամ բոլոր ապահովագրված ծառայությունների համար: Կարող եք հարցնել Ձեր բժշկից, եթե հեռակա առողջապահությունը մատչելի է Ձեր բժշկական վիճակի համար: Պարտադիր չէ, որ Դուք օգտվեք հեռակա առողջապահության ծառայություններից:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Հոգեկան առողջության ծառայություններ

Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ

Մենք ապահովագրում ենք հոգեկան առողջության ծառայություններ, որոնք տրամադրվում են Ցանցի մատակարարի կողմից: Ձեզ ուղեգիր հարկավոր չէ հոգեկան առողջության մատակարարի համար Kaiser Permanente-ի ցանցում: Կարող եք հոգեկան առողջության նախնական գնահատում ստանալ առանց նախնական հաստատման կամ ուղեգրի: Եթե Ձեր հոգեկան առողջության մատակարարը որոշում է, որ ունեք թեթև կամ միջին հոգեկան առողջության վիճակ, կամ հոգեկան, հուզական կամ վարվեցողական խանգարում ունեք, մենք կարող ենք հոգեկան առողջության ծառայություններ տրամադրել Ձեզ:

Եթե Ձեր հոգեկան առողջության մատակարարը որոշում է, որ Ձեզ անհրաժեշտ է հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ (specialty mental health services, «SMHS»), Ձեր բժիշկը Ձեզ ուղեգիր կտա վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին՝ գնահատում ստանալու նպատակով:

Մենք ապահովագրում ենք հետևյալ ծառայությունները թեթևից միջին հոգեկան առողջության վիճակների համար՝

- Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ
 - ◆ Հոգեկան առողջության անհատական և խմբային գնահատում և բուժում (հոգեբուժություն)
 - ◆ Հոգեբանական թեստավորում, երբ այն անհրաժեշտ է հոգեկան առողջության որևէ խնդիր գնահատելու համար
 - ◆ Իմացական հմտությունների զարգացում՝ ուշադրության, հիշողության և խնդիրների լուծման ունակության բարելավման համար
 - ◆ Դեղաբուժությունը հսկելու նպատակով տրամադրվող ամբուլատոր ծառայություններ
 - ◆ Հոգեբուժական խորհրդատվություն
- Ձեր հոգեկան առողջության վիճակը բուժելու հետ կապված պատկերման և լաբորատոր ծառայություններ (տե՛ս «Լաբորատոր և ճառագայթման ծառայություններ»)

Medi-Cal-ն ապահովագրում է ծառայություններ՝ ախտորոշելու և բուժելու համար հոգեկան առողջության վիճակներ, որոնք համարվում են «հոգեկան խանգարում» ամենաթարմ Հոգեկան խանգարումների ախտորոշիչ և վիճակագրական ձեռնարկում (Diagnostic and Statistical Manual of Mental Disorders, «DSM»): Medi-Cal-ը չի ապահովագրում ծառայություններն այն



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

վիճակների համար, որոնք DSM-ը «հոգեկան խանգարում» չի համարում: Օրինակ՝ մարդկանց փոխհարաբերություններում ծագած խնդիրները DSM-ը սահմանում է որպես «հոգեկան խանգարումից» տարբեր խնդիր, ուստի մենք չենք ապահովագրում փոխհարաբերություններում ծագած խնդիրների ծառայությունները (ինչպիսիք են՝ ամուսնական զույգին տրամադրվող խորհրդատվությունը կամ ընտանեկան խորհրդատվությունը):

Kaiser Permanente-ի կողմից տրամադրվող հոգեկան առողջության ծառայությունների մասին ավելին իմանալու համար կարող եք զանգահարել **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Շտապ օգնության ծառայություններ

Հիվանդանոցային և ամբուլատոր ծառայություններ, որոնք անհրաժեշտ են բժշկական շտապ օգնություն պահանջող վիճակը բուժելու համար

Մենք ապահովագրում ենք բոլոր ծառայությունները, որոնք անհրաժեշտ են բժշկական արտակարգ վիճակը բուժելու համար ԱՄՆ-ում կամ շտապ հոսպիտալացում Կանադայում կամ Մեքսիկայում: Բժշկական շտապ օգնություն պահանջող վիճակն առողջական վիճակ է՝ ուժեղ ցավով կամ լուրջ վնասվածքով: Վիճակն այնքան լուրջ է, որ եթե դրան անմիջապես բժշկական ուշադրություն չտրամադրեն, առողջության և բժշկության մասին միջին գիտելիքներով ողջամիտ (խոհեմ) անձը (ոչ առողջապահական խնամքի մասնագետ) կարող է ակնկալել, որ դա կհանգեցնի հետևյալից մեկին՝

- Լուրջ վտանգ Ձեր առողջությանը
- Լուրջ վնաս մարմնական ֆունկցիաներին
- Որևէ օրգանի կամ մարմնի մասի լուրջ անդամալուծություն
- Ակտիվ երկունքի փուլում գտնվող հղի կնոջ դեպքում, դա նշանակում է երկունք այն պահին, երբ հետևյալներից որևէ մեկը տեղի կունենա՝
 - ◆ Նախքան ծննդաբերություն բավարար ժամանակ չկա Ձեզ անվտանգ կերպով հիվանդանոց տեղափոխելու համար
 - ◆ Փոխադրումը կարող է վտանգել Ձեր կամ Ձեր չծնված մանկան առողջությունը կամ անվտանգությունը

Ապահովագրված շտապ օգնության ծառայությունները ներառում են դեղատոմսով դեղի մինչև 72 ժամվա շտապ պաշար, եթե դեղագործը կամ հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունքը Ձեզ տալիս է այդ դեղորայքը՝ որպես Ձեր շտապ օգնության այցի մի մաս:



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Շտապ օգնության փոխադրման ծառայություններ

Մենք ապահովագրում ենք շտապ օգնության մեքենայի ծառայությունները՝ շտապ օգնություն պահանջող իրավիճակում Ձեզ մոտակա խնամքի վայր հասցնելու համար: Սա նշանակում է, որ Ձեր վիճակը բավական լուրջ է, որ այդ վայրն այլ ձևերով հասնելը կարող է վտանգել Ձեր առողջությունը կամ կյանքը: ԱՄՆ-ից դուրս ծառայությունները չեն ապահովագրվում, բացի շտապ օգնության ծառայություններից, երբ Ձեզ անհրաժեշտ է հոսպիտալացում Կանադայում կամ Մեքսիկայում:

Շտապ օգնության բաժանմունքի ծառայություններ

Մենք ապահովագրում ենք շտապ օգնության բաժանմունքի ծառայությունները, որոնք անհրաժեշտ են բժշկական շտապ օգնություն պահանջող վիճակը բուժելու համար: Հիշեք, բժշկական շտապ օգնություն պահանջող վիճակն առողջական վիճակ է՝ ուժեղ ցավով կամ լուրջ վնասվածքով: Վիճակն այնքան լուրջ է, որ, եթե այն անմիջապես բժշկական միջամտության չենթարկվի, այն կարող է հանգեցնել Ձեր առողջության կամ մարմնի լուրջ վնասի: ԱՄՆ-ից դուրս ծառայությունները չեն ապահովագրվում, բացի շտապ օգնության ծառայություններից, երբ Ձեզ անհրաժեշտ է հոսպիտալացում Կանադայում կամ Մեքսիկայում:

Առողջապահական կրթություն

Մենք ապահովագրում ենք մի շարք առողջապահական կրթության խորհրդատվություններ, ծրագրեր և նյութեր, որոնք ժամադրության կամ այցելության ժամանակ տրամադրվում են Ձեր Առաջնային խնամքի մատակարարի (Primary Care Provider, PCP) կամ այլ մատակարարների կողմից:

Մենք ապահովագրում ենք նաև մի շարք առողջապահական կրթության խորհրդատվություններ, ծրագրեր և նյութեր, որպեսզի օգնենք Ձեզ ակտիվորեն ներգրավվել Ձեր առողջության պաշտպանության և բարելավման գործում, ներառյալ ծխելը թողնելու, սթրեսի կառավարման և քրոնիկական վիճակների ծրագրերը (ինչպես օրինակ՝ շաքարախտներն ու ասթման):

Մեր առողջապահական կրթության խորհրդատվությունների, ծրագրերի և նյութերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել առողջապահական կրթության բաժնի հետ Ձեր տեղական ծրագրի հաստատությունում: Կարող եք նաև զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով կամ այցելել մեր կայքը՝ **kp.org** (անգլերեն) հասցեով:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Diabetes Prevention Program («DPP»)

Diabetes Prevention Program («DPP») փաստերի վրա հիմնված ապրելակերպի փոփոխության ծրագիր է, որը նախատեսված է կանխարգելելու կամ հետաձգելու 2-րդ տիպի շաքարախտի զարգացումը նախաշաքարախտի ախտորոշում ունեցող անձանց մոտ: Ծրագիրը տևում է մեկ տարի և կարող է շարունակվել ևս մեկ տարի որակավորվող Անդամների համար: Ծրագիրն օգտագործում է ապրելակերպի հաստատված փոփոխություններ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝

- Տրամադրում է հավասարակից մարզիչ
- Սովորեցնում է ինքնադիտարկում և խնդիրների լուծում
- Տրամադրում է խրախուսում և հետադարձ կապ
- Տրամադրում է տեղեկատվական նյութեր՝ նպատակներին աջակցելու համար
- Հետևում է քաշի պարբերական գրանցմանը՝ նպատակներին հասնելու օգնության համար

DPP-ով հետաքրքրված անդամները պետք է համապատասխանեն ծրագրի իրավունակության չափանիշներին: Ծրագրի և իրավունակության մասին լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն:

Հոսպիս և պալիատիվ խնամք

Խնամք հոսպիսում

Խնամքը հոսպիսում նպաստ է մահացու հիվանդություն ունեցող անդամների համար: Այն հիմնականում կենտրոնանում է ցավի և ախտանիշների կառավարման, այլ ոչ թե կյանքը երկարացնելու նպատակով բուժման վրա:

Եթե Դուք որոշեք խնամք ստանալ հոսպիսում, ապա՝

- 21 տարեկան կամ ավելի բարձր տարիքի չափահասները այնպիսի խնամք են ստանում, որը մեղմում է ցավը և ավարտական փուլում գտնվող անբուժելի հիվանդության այլ ախտանշանները, բայց չի բուժում հիվանդությունը: Չափահասները չեն կարող միաժամանակ ստանալ և՛ հոսպիսային խնամք, և՛ պալիատիվ խնամք:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

4 | Նպաստներ և ծառայություններ

- Մինչև 21 տարեկան երեխաներն այնպիսի խնամք են ստանում, որը մեղմում է ցավը և ավարտական փուլում գտնվող անբուժելի հիվանդության այլ ախտանշանները և, եթե ցանկանան, կարող են նաև բուժում ստանալ իրենց հիվանդությունից:

Դուք կարող եք ցանկացած ժամանակ փոխել հոսպիտում խնամք ստանալու Ձեր որոշումը: Հոսպիտում խնամքը սկսելու կամ դադարեցնելու մասին որոշումը պետք է լինի գրավոր և Medi-Cal-ի կանոնների համաձայն:

Մենք ապահովագրում ենք հոսպիտի խնամքը, եթե հետևյալ բոլոր պահանջները բավարարված են՝

- Ցանցում գործող բժիշկը Ձեզ մոտ ախտորոշել է մահացու հիվանդություն և պարզել, որ Ձեր կյանքի ակնկալվող տևողությունը 6 ամիս կամ պակաս է
- Ծառայությունները տրամադրվում են Ձեր Բնակության տարածքում
- Ծառայությունները տրամադրվում են արտոնագրված հոսպիտային կազմակերպության կողմից, որը Ցանցի մատակարար է
- Ցանցի բժիշկը որոշում է, որ այդ ծառայությունները բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են ցավի ամոքման և ավարտական փուլում գտնվող Ձեր անբուժելի հիվանդության ու դրա հետ կապված առողջական խնդիրների կառավարման համար

Եթե վերոնշյալ բոլոր պահանջները բավարարվել են, մենք ապահովագրում ենք հոսպիտի հետևյալ ծառայությունները՝

- Ցանցի բժիշկների ծառայություններ
- Հմուտ բուժքույրական խնամք, ներառյալ՝ բուժքույրական խնամքի անհրաժեշտության գնահատում և գործի կառավարում, ցավի ամոքում և ախտանշանների կառավարում, բարոյական աջակցություն՝ Ձեզ և Ձեր ընտանիքին, և ցուցումներ խնամողներին
- Ֆիզիոթերապիա, աշխատանքային թերապիա և խոսքի թերապիա՝ ախտանշանները կառավարելու կամ կենսագործունեությունը պահպանելու հարցում օգնելու համար
- Շնչառական օրգանների թերապիա
- Բժշկական սոցիալական ծառայություններ



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- Տանը մատուցվող առողջապահական խնամքի աջակցություն և օգնություն ուտելու, լոգանք ընդունելու և հագնվելու հարցում
- Դեղեր՝ ցավի վերահսկման և Ձեր մահացու հիվանդության այլ ախտանիշները մեղմելու համար:
 - ◆ Մենք ապահովագրում ենք ներարկվող դեղերը՝ համաձայն մեր դեղերի դեղացուցակի ուղեցույցների
 - ◆ Մենք ապահովագրում ենք ամբուլատոր դեղեր, որոնք ուղղակիորեն կապված են Ձեր հոսպիտալին ապահովագրված ծառայությունների հետ: Դուք պետք է այս դեղերը ձեռք բերեք Kaiser Permanente-ի ցանցի դեղատնից: Որոշ դեղերի դեպքում՝ մենք յուրաքանչյուր 30-օրյա ժամանակաշրջանում վճարում ենք 30 օրվա պաշարի համար:
- Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ
- Խնամողի կարճատև փոխարինում, երբ այն անհրաժեշտ է, որպեսզի Ձեր խնամողները մի փոքր հանգստանան: Խնամողի կարճատև փոխարինումը երբեմն տրամադրվող կարճատև ստացիոնար խնամքն է, որը կարող է միանգամից ոչ ավել քան հինգ անընդմեջ օր տևել
- Խորհրդատվություն կորստի հետ օգնության հարցում
- Խորհրդատվություն սննդակարգի վերաբերյալ

Մենք վճարում ենք նաև հետևյալ հոսպիտալին ծառայությունների համար, բայց միայն ճգնաժամային պահերին, երբ դրանք բժշկական առումով անհրաժեշտ են՝ ամոքման կամ սուր բժշկական ախտանշանների կառավարման համար՝

- Շարունակական հիմքով բուժքույրական խնամք մինչև օրը 24 ժամ, որքան որ անհրաժեշտ է Ձեզ տանը պահելու համար
- Կարճաժամկետ ստացիոնար խնամք հիվանդանոցում՝ այնպիսի մակարդակով, որը չի կարող տան պայմաններում ապահովվել

Պալիատիվ խնամք

Մենք ապահովագրում ենք պալիատիվ խնամքն այն Անդամների համար, ովքեր համապատասխանում են այս ծառայությունների համար Medi-Cal-ի իրավունակության պահանջներին: Պալիատիվ խնամքը լուրջ հիվանդություններ ունեցող Անդամի մոտ նվազեցնում է ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհարմարությունները:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

21 և ավելի բարձր տարիքի չափահասները չեն կարող միաժամանակ ստանալ և պալիատիվ խնամք, և հոսպիտալին խնամք: Եթե Դուք պալիատիվ խնամք եք ստանում և համապատասխանում եք հոսպիտալին խնամքի չափանիշներին, Դուք կարող եք ցանկացած պահի խնդրել տեղափոխվել հոսպիտալին խնամքի:

Հետազոտական ծառայություններ

Հետազոտական ծառայություններն են դեղերը, սարքավորումները, բուժգործողությունները և այլ բժշկական ծառայությունները, որոնք փորձարկվում են մարդկանց վրա՝ պարզելու համար, թե արդյոք դրանք արդյունավետ և անվտանգ են: Մենք ապահովագրում ենք հետազոտական ծառայությունները միայն, երբ դրանք համապատասխանում են հետևյալ բոլոր պայմաններին՝

- Սովորական բուժումը պատշաճ կերպով չի բուժում վիճակը
- Սովորական բուժումը չի կանխում զարգացող հաշմանդամությունը կամ վաղաժամ մահը
- Ծառայության մատակարարն ունի անվտանգության և հաջողության լուրջ պատմություն
- Ծառայությունը հետազոտական ուսումնասիրության արձանագրության մաս չի կազմում
- Ողջամիտ ակնկալիքներ կան, որ ծառայությունը զգալիորեն կերկարաձգի կյանքը, կամ կպահպանի կամ կվերականգնի առօրյա գործողությունների կարողությունը

Բոլոր հետազոտական ծառայությունների համար պահանջվում է նախնական հաստատում: Հետազոտական ծառայությունների համար ներկայացված հայցերի անկախ բժշկական վերանայման մասին կարող եք կարդալ «Անկախ բժշկական վերանայում» վերնագրի տակ՝ Գլուխ 6-ում («Խնդիրների մասին տեղեկացնելն ու դրանք լուծելը»):

Հոսպիտալացում

Անեսթեզիոլոգիական ծառայություններ

Մենք ապահովագրում ենք հիվանդանոցում մնալու ընթացքում բժշկական տեսանկյունից անհրաժեշտ անեսթեզիոլոգիական ծառայությունները: Անեսթեզիոլոգը մատակարար է, ով մասնագիտացված է հիվանդներին անեսթեզիա տրամադրելու մեջ: Անեսթեզիան դեղի մի տեսակ է, որն օգտագործվում է որոշ բժշկական բուժգործողությունների ժամանակ:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ

Մենք ապահովագրում ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ հիվանդանոցային խնամք, երբ Ձեզ ընդունում են ցանցի հիվանդանոց: Ծառայությունները ներառում են՝ հիվանդասենյակ և սնունդ, դեղեր, սարքավորումներ, պատկերման և լաբորատոր ծառայություններ և այլ ծառայություններ, որոնք հիմնականում տրամադրում են հիվանդանոցները: Եթե Ձեզ ընդունում են ցանցի հիվանդանոց, Դուք պետք է մեզանից հաստատում ստանաք Ձեր վիճակի կայանացումից հետո ստացված խնամքի համար: Եթե հաստատում չստանաք, ապա հիվանդանոցում Ձեր մնալը չի ապահովագրվի:

Վիրահատության ծառայություններ

Մենք ապահովագրում ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ վիրահատություններ, որոնք իրականացվում են հիվանդանոցում:

Նոր ծննդաբերած մոր և մանկան խնամք

Կրծքով կերակրման կրթություն

Մենք ապահովագրում ենք լակտացիայի համապարփակ աջակցություն:

Կրծքի պոմպեր և պարագաներ

Մենք ապահովագրում ենք սպառողական մակարդակի կրծքի պոմպ մեկ հղիության համար, ինչպես նաև այդ պոմպի պարագաների մեկ փաթեթ: Եթե բժշկական տեսանկյունից Ձեզ անհրաժեշտ է հիվանդանոցային մակարդակի կրծքի պոմպ օգտագործել, մենք կապահովագրենք դրա վարձակալումը կամ գնումը: Հիվանդանոցային մակարդակի կրծքի պոմպերը երկարատև օգտագործման բժշկական սարքավորում են (Durable Medical Equipment, «DME») և պետք է նախապես հաստատվեն Ձեզ համար: Մենք վաճառող կընտրենք, իսկ Դուք պետք է վերադարձնեք հիվանդանոցային մակարդակի կրծքի պոմպը, երբ այլևս չեք օգտագործում այն:

Ծննդաբերություն և հետ-ծննդաբերական խնամք

Մենք ապահովագրում ենք ծննդաբերությունն ու հետ-ծննդաբերական խնամքը:

Նախածննդյան խնամք

Մենք ապահովագրում ենք նախածննդյան խնամքի մի շարք քննություններ:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ծննդաբերական կենտրոնի ծառայություններ

Մենք ապահովագրում ենք ծառայություններ ծննդաբերական կենտրոններում, որոնք համարվում են Medi-Cal-ի կողմից արտոնագրված Comprehensive Perinatal Services Program-ի («CPSP») մատակարար: Ծննդաբերական կենտրոնի ծառայությունները հիվանդանոցային մայրության խնամքի այլընտրանք են, երբ պատշաճ է բժշկական տեսանկյունից:

Հավաստագրված բուժքույր-մանկաբարձի (Certified Nurse Midwife, «CNM») ծառայություններ

Մենք ապահովագրում ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները, որոնք տրամադրվում են հավաստագրված բուժքույր-մանկաբարձների կողմից:

Արտոնագրված մանկաբարձ (Licensed Midwife, «LM»)

Մենք ապահովագրում ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները, որոնք տրամադրվում են արտոնագրված մանկաբարձների կողմից:

Ծագումնաբանական խանգարումների ստուգում և խորհրդատվություն

Մենք ապահովագրում ենք պտղի ծագումնաբանական խանգարումներին վերաբերող ստուգումների և խորհրդատվության համար

Ժամանակավոր հետ-ծննդաբերական խնամքի երկարացման ծրագիր

Provisional Postpartum Care Extension («PPCE») Program-ը երկարացված ապահովագրում է տրամադրում Medi-Cal անդամներին, ովքեր ունեն մայրական հոգեկան առողջության վիճակ հղիության ընթացքում կամ հղիությունից հետո ընկած ժամանակահատվածում:

Մենք ապահովագրում ենք մայրական հոգեկան առողջության խնամքը կանանց համար հղիության ընթացքում և մինչև երկու ամիս հղիությունից հետո: PPCE ծրագիրը երկարացնում է այդ ապահովագրումը ևս 12 ամսով՝ ախտորոշումից հետո կամ հղիության ավարտից հետո, ինչը որ ավելի ուշ է տեղի ունենում:

PPCE ծրագրի համար որակավորվելու նպատակով Ձեր բժիշկը պետք է հաստատի մայրական հոգեկան առողջության վիճակի Ձեր ախտորոշումը Ձեր հղիության ավարտից հետո 150 օրվա ընթացքում: Հարցրեք Ձեր բժշկին այս ծառայությունների մասին, եթե կարծում եք, որ դրանց կարիքն ունեք: Եթե Ձեր բժիշկը համարում է, որ պետք է օգտվեք PPCE ծառայություններից, նա լրացնում և ներկայացնում է ձևաթղթերը Ձեզ համար:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Հոգեկան առողջության ծառայությունների մանրամասների համար կարդացեք Ձեր Անդամի ձեռնարկի Գլուխ 4-ի «Հոգեկան առողջության ծառայություններ» վերնագիրը:

Ամբուլատոր դեղատոմսով դեղեր, պարագաներ և հավելումներ

Ապահովագրված դեղեր

Մենք ապահովագրում ենք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ պարագաներ, որոնք պահանջում են դեղատոմս և որոշակի պարագաներ, որոնք մատչելի են ազատ վաճառքում: Մենք ապահովագրում ենք ցանցի մատակարարների կողմից նշանակված պարագաներ, որոնք նշանակվել են իրենց արտոնագրի ու գործունեության շրջանակներում և մեր դեղացուցակի կանոնների համաձայն:

Մեր դեղերի դեղացուցակը ներառում է մեր Անդամների համար հաստատված դեղերի ցանկը: Այն երբեմն կոչվում է նախընտրելի դեղերի ցանկ:

Դեղացուցակում պարունակվող դեղերն անվտանգ և արդյունավետ են: Այս ցանկը պարբերաբար թարմացվում է բժիշկների և դեղագործների խմբի կողմից: Այս ցանկի թարմացումն օգնում է ապահովել, որպեսզի այնտեղ տեղ գտած դեղերը լինեն ապահով և ազդեցիկ: Մենք ապահովագրում ենք դեղացուցակում չներառված դեղը Ձեր առողջական վիճակի համար, եթե Ձեր բժիշկը կարծում է, որ այն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է Ձեզ համար:

Մենք ապահովագրում ենք նաև ապրանքներ, որոնք նշանակվել են ցանցում չգործող հետևյալ մատակարարների կողմից՝

- Ատամնաբույժներ, եթե դեղն ատամների խնամքի համար է
- Ցանցից դուրս գործող բժիշկներ, եթե Southern California Permanente Medical Group-ը լիազորում է գրավոր ուղեգիրը ցանցից դուրս գործող բժշկի մոտ, և պարագան ապահովագրված է որպես այդ ուղեգրի մի մաս
- Ցանցից դուրս գործող բժիշկներ, եթե պարագան ապահովագրված շտապ օգնության ծառայություններ են կամ սպասարկման տարածքից դուրս գտնվող հրատապ խնամք է
 - ◆ Ցանցում չգործող դեղագործը կամ հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունքը կարող է տրամադրել Ձեզ մինչև 72 ժամվա արտակարգ իրավիճակի պաշար
- Ցանցից դուրս գործող բժիշկներ, եթե դեղն առնչվում է Short-Doyle հոգեկան առողջության ծառայություններին



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- Ցանցից դուրս գործող բժիշկներ, եթե դեղն առնչվում է հատուկ հոգեկան առողջության ծառայություններին

Պարզելու համար, եթե դեղը դեղացուցակի մաս է կազմում, կամ դեղացուցակի կրկնօրինակը ստանալու համար, զանգահարեք **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև այցելել մեր կայքը՝ **kp.org/formulary** (անգլերենով) հասցեով: Նշում. այն հանգամանքը, որ որևէ դեղ ընդգրկված է ցուցակում, դեռ չի նշանակում, որ Ձեր բժիշկն անպայման նշանակելու է այն որոշակի հիվանդության կամ առողջական խնդրի համար:

Օրական պաշարի սահմանափակում

Գոյություն ունի սահմանափակում, թե որքան դեղ կամ այլ պարագաներ կարող է տրամադրվել մեկ անգամ:

■ **Հորմոնալ հակաբեղմնավորիչներ**

Նշանակող բժիշկը որոշում է, թե որքան հակաբեղմնավորիչ դեղ կամ պարագա նշանակել: Օրական պաշարի ապահովագրության սահմանափակումների նպատակով ցանցի բժիշկները որոշում են Ձեզ համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ հակաբեղմնավորիչների 30-օրյա, կամ 100-օրյա, կամ 365-օրյա պաշար: Մեկ անգամվա հակաբեղմնավորիչների առավելագույն քանակը, որը կարող եք ստանալ, 365-օրյա պաշարն է:

■ **Բոլոր այլ պարագաները**

Նշանակող բժիշկը կամ ատամնաբույժն է որոշում նշանակվող դեղի, պաշարի կամ հավելման քանակը: Ցանցի բժիշկները որոշում են դեղի, պաշարի կամ հավելման այն քանակը, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ 30-օրյա կամ 100-օրյա պաշարն է Ձեզ համար: Ապահովագրված պարագայի առավելագույն քանակը, որը կարող եք ստանալ մեկ անգամ կամ 30 օրում 30-օրյա պաշարն է, կամ 100 օրում 100-օրյա պաշարն է: Օրական պաշարի սահմանափակումը գերազանցող դեղերի կամ պարագաների համար մենք չենք վճարում:

Դեղատուները կարող է կրճատել օրական պաշարը 30-օրյա պաշարի որևէ 30 օրվա ժամանակահատվածում, եթե համարի, որ տվյալ դեղը կամ պարագան սահմանափակ քանակությամբ է առկա շուկայում կամ հատուկ դեղ է (ցանցի դեղատուները կարող է ասել, եթե Ձեր ընդունած դեղն այդ շարքից է):



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Դեղատներ

Դուք Ձեր դեղերը պետք է ցանցի դեղատանը կամ մեր փոստային առաքման ծառայության միջոցով ստանաք (բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ապահովագրված են՝ որպես շտապ օգնության ծառայություններ կամ սպասարկման տարածքից դուրս տրամադրվող հրատապ խնամք): Ձեր տարածքում ցանցի դեղատների հասցեների և աշխատանքային ժամերի համար տես Մատակարարների հասցեագիրքը (Provider Directory) մեր կայքում՝ **kp.org/facilities** (անգլերենով) հասցեով կամ զանգահարեք անդամների ծառայություններ՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով:

Երբ Դուք ցանցի դեղատուն ընտրեք, Ձեր դեղատոմսը Ձեզ հետ տարեք դեղատուն: Դեղատանը ներկայացրեք Ձեր դեղատոմսը՝ Ձեր Kaiser Permanente նույնականացման (Identification, ID) քարտի հետ միասին: Անպայման տեղեկացրեք դեղատանը Ձեր կողմից ընդունվող բոլոր դեղերի և Ձեր ունեցած ավերգիաների մասին: Եթե որևէ հարց ունեք դեղատոմսի վերաբերյալ, անպայման հարցրեք դեղագործին:

Երբ Ձեզ հարկավոր է համալրել դեղերը, Դուք կարող եք նախապես զանգահարել, փոստային առաքում պատվիրել կամ դրանք առցանց պատվիրել: Որոշ դեղատներ դեղերի ապահովագրված համալրում չեն կատարում, և ո՛չ բոլոր դեղերն են, որ կարող են ուղարկվել մեր փոստային առաքման ծառայության միջոցով: Ստուգեք Ձեր ցանցի դեղատանը կամ մեր կայքի Մատակարարների հասցեագրքում՝ **kp.org/facilities** (անգլերեն) հասցեով, եթե հարցեր ունեք այն մասին, թե արդյոք դեղատոմսով դեղը կարող է Ձեզ փոստով ուղարկվել կամ ձեռք բերվել ցանցի դեղատանը: Մեր փոստային առաքման ծառայության միջոցով առաքվող պարագաների ցուցակը կարող է փոփոխվել ցանկացած պահի՝ առանց նախազգուշացման:

Ցուցակ II դեղեր

Դուք կամ Ձեր բժիշկը կարող եք խնդրել դեղատնից Ձեզ մեկ անգամ տրամադրել ապահովագրված Ցուցակ II դեղի դեղատոմսով նշանակված քանակից պակաս: Եթե Դուք չգիտեք, թե արդյոք դեղատոմսը Ցուցակ II դեղի համար է, Դուք կարող եք հարցնել Ձեր դեղատանը:

Medicare Մաս D

Եթե Դուք Medi-Cal-ի ապահովագրություն ունեք և իրավասու եք կամ անդամակցում եք Medicare-ի Մաս D ապահովագրությանն, ապա առաջինը վճարում է Medicare-ի Մաս D-ն: Երբեմն Medi-Cal-ի կողմից ապահովագրված դեղը կարող է ապահովագրված չլինել Medicare Մաս D-ի կողմից: Եթե



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Medicare-ը չի վճարում մի դեղի համար, որի համար վճարում է Medi-Cal-ը, հնարավոր է, որ Medi-Cal-ը շարունակի վճարել դրա համար: Եթե Դուք Kaiser Permanente Senior Advantage-ի անդամ եք և ցանկանում եք ավելին իմանալ Medicare-ի Մաս D-ի դեղերի ապահովագրության մասին, կարդացեք Ձեր Senior Advantage-ի Ապահովագրության ապացույցը: Դուք կարող եք կարդալ նաև այն մասին, թե ինչպես լրացուցիչ օգնություն ստանալ Ձեր գրպանից վճարվող ծախսերը վճարելու համար:

Medicare-ի Մաս D-ի մասին ավելին իմանալու համար (այդ թվում՝ ինչպես անդամագրվել Մաս D-ին) խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայություններ՝ **1-800-443-0815** (TTY **711**) հեռախոսահամարով: Կարող եք նաև անվճար զանգահարել Medicare՝ **1-800-MEDICARE (1-800-633-4227)** հեռախոսահամարով (TTY **1-877-486-2048**) կամ այցելել իրենց կայքը՝ **www.medicare.gov** (անգլերենով) հասցեով:

Վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման («թերապիա») ծառայություններ և սարքեր

Մենք ապահովագրում ենք վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման ծառայությունները, որոնք նկարագրված են ստորև, եթե բավարարվում են ստորև նշված բոլոր պահանջները՝

- Ծառայությունները բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են
- Ծառայությունները տրամադրվում են առողջական վիճակի համար
- Ծառայությունների նպատակն է օգնել Ձեզ պահպանել, ձևավորել կամ կատարելագործել առօրյա կյանքի համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ
- Դուք ծառայությունները ստանում եք ցանցի հաստատությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ ցանցի բժիշկը որոշում է, որ Ձեզ համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է ծառայությունները որևէ այլ վայրում ստանալ

Մենք ապահովագրում ենք այս հատվածում նկարագրված վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման ծառայությունները:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ասեղնաբուժություն

Մենք ապահովագրում ենք ասեղնաբուժության ծառայություններ, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են՝ համընդհանուր ճանաչված առողջական վիճակի արդյունքում առաջացած ուժեղ մշտական քրոնիկական ցավը կանխելու, փոփոխելու կամ մեղմելու համար: Ամբուլատոր ասեղնաբուժության ծառայությունները (ասեղների էլեկտրական ստիմուլյացիայով կամ առանց դրա) սահմանափակվում է ամսական երկու ծառայությունով՝ աուդիոլոգիայի, մանուալ թերապիայի, աշխատանքային թերապիայի և խոսքի թերապիայի ծառայությունների համակցությամբ: Բժշկական տեսանկյունից անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք նախնական հաստատել լրացուցիչ ծառայություններ:

Ասեղնաբուժության ծառայություններն ապահովագրվում են, երբ տրամադրվում են Ցանցի մատակարարի կողմից կամ American Specialty Health-ի ցանցի մատակարարի կողմից: Ասեղնաբուժության ծառայությունների մասին մանրամասների համար խնդրում ենք զանգահարել American Specialty Health՝ **1-800-678-9133** (TTY **711**) հեռախոսահամարով:

Աուդիոլոգիա (լսողություն)

Մենք ապահովագրում ենք լսողության ծառայությունները: Ամբուլատոր աուդիոլոգիան սահմանափակվում է ամսական երկու ծառայությունով՝ ասեղնաբուժության, մանուալ թերապիայի, աշխատանքային թերապիայի և խոսքի թերապիայի ծառայությունների համակցությամբ: Բժշկական տեսանկյունից անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք նախնական հաստատել լրացուցիչ ծառայություններ:

Լսողական սարքերի մասին մանրամասների համար կարդացեք այս Գլուխ 4-ի «Լսողական սարքեր» վերնագիրը ներքևում:

Վարվեցողական առողջության բուժումներ

Վարվեցողական առողջության բուժումը (Behavioral health treatment, «BHT») ներառում է ծառայությունների և բուժման ծրագրեր, ինչպես օրինակ՝ վարքագծի կիրառական վերլուծություն և փաստերի վրա հիմնված վարքագծի միջամտության ծրագրեր, որոնք հնարավորինս լավագույն ձևով զարգացնում կամ վերականգնում են անձի ֆունկցիոնալ վիճակը:

Մենք ապահովագրում ենք BHT ծառայություններ, եթե Դուք 21 տարեկանից ցածր տարիքի եք, այնպիսի վարք եք դրսևորում, որը զգալիորեն խանգարում է տան կամ համայնքի կյանքին (որոշ օրինակներ ներառում են՝ զայրույթ, ուժի



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

գործադրում, ինքն իրեն վնաս հասցնելը, փախչելը կամ ապրելու, խաղալու և/կամ հաղորդակցվելու հմտությունների հետ կապված դժվարություններ) և բժշկական տեսանկյունից կայուն վիճակ ունեք:

BHT ծառայությունները հմտություններ են սովորեցնում՝ վարքագծային դիտարկում և ամրապնդում օգտագործելով կամ սովորեցնելով թիրախային վարքի յուրաքանչյուր քայլ: BHT ծառայությունները հիմնված են վստահելի ապացույցների վրա և փորձարարական չեն: BHT ծառայությունների օրինակները ներառում են վարքագծային միջամտություններ, ճանաչողական վարքագծային միջամտության փաթեթներ, վարքագծի համապարփակ բուժում և կիրառական վարքային վերլուծություն:

BHT ծառայությունները պետք է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինեն, նշանակված լինեն վկայագրված բժշկի կամ հոգեբույժի կողմից, հաստատված լինեն Southern California Permanente Medical Group-ի կողմից և տրամադրվեն հաստատված բուժման ծրագրի համաձայն:

Բուժման ծրագիր՝

- Պետք է մշակվի այնպիսի Ցանցի մատակարարի կողմից, որը հանդիսանում է աուտիզմի ծառայությունների որակավորված մատակարար և կարող է իրականացվել աուտիզմի ծառայությունների որակավորված մատակարարի, աուտիզմի ծառայությունների որակավորված մասնագետի, աուտիզմի ծառայությունների որակավորված պարամասնագետի կողմից
- Որոշակի ժամանակահատվածի համար սահմանված չափերի անձնական նպատակներ է պարունակում, որոնք մշակվում և հաստատվում են Անդամի համար՝ աուտիզմի ծառայությունների որակավորված մատակարարի կողմից
- Առնվազն վեց ամիսը մեկ վերանայվում է աուտիզմի ծառայությունների որակավորված մատակարարի կողմից և փոփոխվում, երբ դրա անհրաժեշտությունը կա
- Ապահովում է, որ միջամտությունները համապատասխանում են ապացույցների վրա հիմնված BHT մեթոդներին
- Պարունակում է ծնողների կամ խնամող(ներ)ի, դպրոցի, հաշմանդամության նահանգային ծրագրերի և, անհրաժեշտության դեպքում, այլ անձանց հետ խնամքի համակարգում
- Նախատեսում է ծնողի/խնամողի վերապատրաստություն, աջակցություն և մասնակցություն



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

4 | Նպաստներ և ծառայություններ

- Նկարագրում է Անդամի վարվեցողական առողջության խանգարումները, որոնք պետք է կարգավորվեն տվյալ ծրագրով, և արդյունքների գնահատման չափորոշիչները, որոնց օգնությամբ պետք է գնահատվի, թե ինչ չափով են իրականացվել վարքի կարգավորման հարցում սահմանված նպատակները
- Պարունակում է ծրագրի նպատակի և խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ծառայության տեսակը, դրա տրամադրման ժամերի քանակը և ծնողի մասնակցությունը դրանում, ինչպես նաև հաճախականությունը, որով գնահատվում և զեկուցվում է Անդամի առաջընթացը
- Կիրառում է ապացույցների վրա հիմնված այնպիսի մեթոդներ, որոնք զարգացման ընդհանուր խանգարումը կամ աուտիզմը բուժելու հարցում կլինիկական արդյունավետություն են ցույց տվել

Medi-Cal-ի ապահովագրությունը չի ներառում՝

- BHT, որը տրամադրվում է, երբ շարունակվող կլինիկական օգուտ չի ակնկալվում
- Հիմնականում խնամողին փոխարինելու, ցերեկային խնամքի կամ ուսումնական ծառայություններ
- Փոխհատուցում բուժման ծրագրին ծնողի մասնակցության համար
- Բուժում, որի նպատակն է աշխատանքի տեղավորումը կամ ազատ ժամանցի միջոցառումները
- Խնամակալական խնամք, որը հիմնականում (i) տրամադրվում է առօրյա կյանքում անհրաժեշտ գործողությունների (օրինակ՝ լոգանք ընդունել, հագնվել, սնվել և անձնական հիգիենա պահպանել) հարցում օգնություն ցույց տալու նպատակով, (ii) տրամադրվում է Անդամի կամ այլ անձանց ապահովությունը պահպանելու նպատակով և (iii) կարող է տրամադրվել մասնագիտական հմտություններ կամ վերապատրաստում չունեցող անձանց կողմից
- Ոչ ավանդական միջավայրում, օրինակ՝ հանգստյան տներում, սպաներում, ճամբարներում և նման այլ վայրերում տրամադրվող ծառայություններ, պաշարներ կամ ընթացակարգեր
- Ծնողի, օրինական խնամակալի կամ օրենքով պատասխանատու որևէ այլ անձի կողմից տրամադրված ծառայություններ

Հարցերի դեպքում զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Սրտի վերականգնում

Մենք ապահովագրում ենք սրտի վերականգնման ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ:

Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ

Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումները պահանջում են նախնական հաստատում: Մենք ապահովագրում ենք բժշկի կողմից Ձեզ նշանակված բժշկական տեսանկյունից անհրաժեշտ իրեր: Իրը պետք է լինի անհրաժեշտ՝ Ձեզ օգնելու համար առօրյա գործունեության մեջ կամ կանխելու համար ֆիզիկական լուրջ հաշմանդամությունը: Տեսեք այս Անդամի ձեռնարկի Գլուխ 7-ը «Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ»-ի սահմանման համար:

Մենք ապահովագրում ենք բժշկական պարագաների, սարքավորումների և այլ ծառայությունների ձեռքբերումն ու վարձակալությունը՝ բժշկի նշանակմամբ, եթե ապրանքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, և այն նախնական հաստատվել է Ձեզ համար: Ապահովագրությունը սահմանափակված է Ձեր բժշկական կարիքները պատշաճ կերպով բավարարող ամենաէժանազին հարմարանքով: Մենք ենք ընտրում մատակարարին: Դուք պետք է վերադարձնեք սարքավորումը կամ մեզ վճարեք արդար շուկայական գինը, երբ մենք այլևս չապահովագրենք այն:

Medi-Cal ծրագրի ապահովագրությունը չի ներառում հետևյալը՝

- Լավ ինքնազգացողության, հարմարավետության կամ շքեղության սարքավորումներ կամ հատկանիշներ, բացառությամբ սպառողական մակարդակի կրծքի պոմպեր, ինչպես նկարագրված էր այս գլխի «Մայրություն և նորածնի խնամք» վերնագրի «Կրծքի պոմպեր և պարագաներ» ենթավերնագրի ներքո
- Ապրանքներ, որոնց նպատակն առօրյա կյանքի սովորական գործունեությունը պահպանելը չէ, ինչպես օրինակ մարզանքի սարքավորումները (այդ թվում՝ այն հարմարանքների, որոնց նպատակն է լրացուցիչ նեցուկ ապահովել ազատ ժամանցի կամ մարզական խաղերի ժամանակ)
- Հիգիենայի սարքավորումներ, բացի բժշկական տեսանկյունից անհրաժեշտից 21 տարեկանից ցածր տարիքի Անդամի համար
- Ոչ բժշկական ապրանքներ, ինչպես օրինակ՝ սաունայի լոգարաններ կամ վերելակներ
- Ձեր տան կամ ավտոմեքենայի ձևափոխություն



Խարդախության, վատնման և չարաշահման մասին հայտնելու համար գրի առեք խարդախություն, վատնում և չարաշահում կատարած անձի անունը, հասցեն և ID համարը: Հնարավորինս շատ տեղեկություններ տրամադրեք անձի վերաբերյալ, օրինակ՝ հեռախոսահամար կամ մասնագիտացում, եթե նա մատակարար է: Ներկայացրեք դեպքերի ամսաթվերը և ամփոփ նկարագրեք, թե իրականում ինչ է կատարվել:

Եթե Դուք հնարավոր վատ վարքագծի նշաններ եք տեսնում, զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (փակ է տոն օրերին):

Պարտադրող իրավարարություն

Պարտադրող իրավարարությունը չեզոք երրորդ կողմի օգնությամբ խնդիրներ լուծելու եղանակ է: Այդ երրորդ կողմը լսում է երկու կողմերին և որոշում կայացնում, որը երկու կողմն էլ պարտավոր են ընդունել: Երկու կողմն էլ հրաժարվում են դատարան դիմելու իրենց իրավունքից: Մենք պարտադրող իրավարարության միջոցով կկարգավորենք այն պահանջագրերը, որոնք մենք



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

ներկայացրել ենք մինչ այս Անդամի ձեռնարկի ուժի մեջ մտնելը: Այդ անցած պահանջագրերի դեպքում պարտադրող իրավարարության վճիռը միայն մեզ համար է պարտադիր:

Իրավարարության շրջանակներ

Դուք պետք է պարտադրող իրավարարության դիմեք, եթե բողոքն առնչվում է այս «Անդամի ձեռնարկին» կամ մեր ծրագրում Ձեր անդամությանը, և եթե առկա են ստորև նշված բոլոր պայմանները.

- Պահանջագիրը վերաբերում է՝
 - ◆ Բժշկի սխալին կամ անփույթ վերաբերմունքին (պահանջագիր առ այն, որ բժշկական ծառայությունները կամ պարագաներն անհրաժեշտ կամ արտոնված չեն եղել, կամ ոչ պատշաճ կերպով, անփութորեն կամ մասնակի են տրամադրվել), կամ
 - ◆ Ծառայությունների կամ պարագաների տրամադրմանը, կամ
 - ◆ Հիմնարկության պատասխանատվությանը
- Պահանջագիրը ներկայացվել է՝
 - ◆ Ձեր կողմից՝ մեր դեմ, կամ
 - ◆ Մեր կողմից՝ Ձեր դեմ
- Գործող օրենքը չի արգելում պարտադրող իրավարարության միջոցով լուծել պահանջագիրը
- Խնդիրը չի կարող կարգավորվել Փոքր պահանջագրերի դատարանի միջոցով

Հիշեք՝

- Դուք պարտավոր չեք պարտադրող իրավարարությունից օգտվել այն հայցերի համար, որոնք կարող են լուծում ստանալ նահանգային լսման միջոցով
- Դուք չեք կարող օգտվել պարտադրող իրավարարությունից, եթե Դուք հայցի վերաբերյալ որոշումն ստացել եք նահանգային լսման միջոցով:

Միայն այս՝ «Պարտադրող իրավարարություն» բաժնում, «Դուք» նշանակում է այն կողմը, որը պարտադրող իրավարարություն է պահանջում՝

- Դուք (Անդամ)



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- Ձեր իրավահաջորդը, ազգականը կամ որևէ այլ անձ, որին Դուք նշանակում եք Ձեր անունից հանդես գալու համար
- Որևէ մեկը, ով պնդում է, թե իր նկատմամբ պարտականություն կա, որի պատճառը մեզ հետ Ձեր հարաբերությունն է

Միայն այս՝ «Պարտադրող իրավարարություն» բաժնում, «մեզ» նշանակում է այն կողմը, որի դեմ պահանջագիր է ներկայացվել՝

- Kaiser Foundation Health Plan, Inc. («KFHP»)
- Kaiser Foundation Hospitals («KFH»)
- Southern California Permanente Medical Group («SCPMG»)
- The Permanente Medical Group, Inc. («TPMG»)
- The Permanente Federation, LLC
- The Permanente Company, LLC
- SCPMG-ի կամ TPMG-ի բժիշկ
- Վերը նշված կողմերից որևէ մեկի հետ այնպիսի պայմանագիր կնքած անձ կամ կազմակերպություն, որը պահանջում է պարտադրող իրավարարության կիրառում
- Վերը նշված կողմերից որևէ մեկի աշխատակից կամ գործակալ

Դատավարության կանոններ

Պարտադրող իրավարարությունը վարվում է Դատավարության կանոնների համաձայն:

- Դատավարության կանոնները մշակվել են Անկախ ադմինիստրատորի գրասենյակի կողմից՝ Kaiser Permanente-ի և Իրավարարության խորհրդատու հանձնաժողովի մասնակցությամբ:
- Դուք կարող եք Դատավարության կանոնների կրկնօրինակը ստանալ մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոնից՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000** (TTY **711**) հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ինչպես իրավարարություն խնդրել

Պարտադրող իրավարարության հայց ներկայացնելու համար հարկավոր է պաշտոնական դիմում ներկայացնել (իրավարարության դիմում), որը պետք է պարունակի՝

- Մեր դեմ Ձեր բողոքի նկարագրությունը
- Գումարը, որը Դուք պահանջում եք վնասի համար
- Հայտ ներկայացնող բոլոր կողմերի անունները, հասցեները և հեռախոսի համարները: Եթե կողմերից որևէ մեկը փաստաբան ունի, նշեք նաև փաստաբանի անունը, հասցեն և հեռախոսի համարը
- Այն կողմերի անունները, ում դեմ Դուք ներկայացնում եք պահանջագիրը

Միևնույն միջադեպին վերաբերող բոլոր պահանջագրերը պետք է նույն դիմումի մեջ ընդգրկվեն:

Ինչպես ներկայացնել Իրավարարության դիմումը

Եթե Դուք բողոք եք ներկայացնում KFHP-ի, KFH-ի, SCPMG-ի, TPMG-ի, The Permanente Federation, LLC-ի կամ The Permanente Company, LLC-ի դեմ, իրավարարության դիմումը փոստով ուղարկեք հետևյալ հասցեով՝

Kaiser Permanente
Legal Department
1950 Franklin St., 17th Floor
Oakland, CA 94612

Եթե Դուք պահանջագիր եք ներկայացնում որևէ այլ կողմի դեմ, ապա հարկավոր է վերջինիս տեղյակ պահել այդ մասին՝ Կալիֆորնիայի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջների համաձայն:

Հայցը ներկայացված է համարվում այն ժամանակ, երբ մենք ստանում ենք Իրավարարության դիմումը:

Հայց ներկայացնելու վարձ

Պարտադրող իրավարարության դիմում ներկայացնելու վարձը \$150 է, որից Դուք կազատվեք, եթե չեք կարող վճարել ծախսերի Ձեր բաժինը:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Դիմումը ներկայացնելու վարձը պետք է վճարվի «Arbitration Account» անունով, և գումարը չի փոփոխվում՝ անկախ Ձեր խնդրանքում հայցերի կամ կողմերի քանակից: Դիմումի ներկայացման վարձը չի փոխհատուցվում:

Եթե Դուք չեք կարող վճարել պարտադրող իրավարարության վարձի Ձեր բաժինը, կարող եք Անկախ ադմինիստրատորի գրասենյակից խնդրել, որ Ձեզ ազատի վճարումից: Դա անելու համար հարկավոր է Վճարումից ազատման ձևաթուղթ (Fee Waiver Form) լրացնել և ուղարկել՝

- Անկախ ադմինիստրատորի գրասենյակ և
- Այն կողմերին, ում դեմ Դուք ներկայացնում եք պահանջագիրը

Վճարումից ազատման ձևաթուղթը՝

- Տեղեկացնում է Ձեզ՝ ինչպես է Անկախ ադմինիստրատորը որոշում, թե արդյոք կարելի է ազատել վճարումից
- Տեղեկացնում է, թե ինչ վճարներից կարելի է ազատվել

Դուք կարող եք Վճարումից ազատման ձևաթղթի կրկնօրինակը ստանալ մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոնից՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Իրավարարների քանակ

Որոշ գործեր լսվում են մեկ իրավարարի կողմից, որին համաձայնում են երկու կողմերը (անկողմնակալ իրավարար): Այլ գործերի դեպքում կարող են լինել մեկ իրավարարից ավելին: Իրավարարների թիվը կարող է ազդել այն բանի վրա, թե արդյոք մենք վճարում ենք չեզոք իրավարարի ծախսերը:

Գործերը, որոնք պահանջում են մինչև \$200,000 վնասի հատուցում, լսվում են մեկ իրավարարի կողմից: Իրավարարը պետք է անկողմնակալ մնա: Երկու կողմերը կարող են համաձայնել, որպեսզի երեք իրավարարներ որոշում կայացնեն գործի վերաբերյալ: Մեկից ավելի իրավարարների վերաբերյալ համաձայնությունը պետք է կայացվի Իրավարարության պահանջը ներկայացնելուց հետո: Երբ կան երեք իրավարարներ, մեկական իրավարար ներկայացնում է յուրաքանչյուր կողմը, իսկ երրորդն՝ անկողմնակալ է: Իրավարար(ներ)ը չի/չեն կարող շնորհել ավելի քան \$200,000:

Գործերը, որոնք պահանջում են ավելի քան \$200,000 վնասի հատուցում, լսվում են երեք իրավարարների կողմից: Երբ կան երեք իրավարարներ, մեկական իրավարար ներկայացնում է վեճի յուրաքանչյուր կողմը, իսկ երրորդն՝ անկողմնակալ իրավարար է: Յուրաքանչյուր կողմ կարող է հրաժարվել



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

իրավարարի կողմից ներկայացված լինելու իրավունքից: Վեճի երկու կողմերն էլ պետք է համաձայնեն, որպեսզի գործը լսի մեկ անկողմնակալ իրավարար: Մեկ անկողմնակալ իրավարարի վերաբերյալ համաձայնությունը պետք է կայացվի Իրավարարության պահանջը ներկայացնելուց հետո:

Իրավարարների վարձեր և ծախսեր

Որոշ դեպքերում մենք կվճարենք չեզոք իրավարարի վարձը: Պարզելու համար, թե երբ ենք մենք վճարելու, կարդացեք Դատավարության կանոնները: Դուք կարող եք Դատավարության կանոնների կրկնօրինակը ստանալ մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոնից՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Մնացած բոլոր դեպքերում այս ծախսը բաժանվում է երկու կողմերի միջև: Եթե կողմերը իրավարարներ են ընտրվում, ապա յուրաքանչյուր կողմ վճարում է իր կողմի իրավարարի վարձը:

Արժեքներ

Վերը նկարագրված և օրենքով թույլատրված դեպքերից բացի՝ անկախ այն բանից, թե ինչպես է ավարտվում գործը, յուրաքանչյուր կողմ պետք է վճարի պարտադրող իրավարարության իր ծախսերը, օրինակ՝ իրավաբանի վարձը, վկաների վարձը և այլ ծախսեր:

Ընդհանուր դրույթներ

Դուք չեք կարող պարտադրող իրավարարություն պահանջել, եթե քաղաքացիական վարույթում տվյալ բողոքի կապակցությամբ հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետներն անցել են:

Ձեր պահանջագիրը փակված կհամարվի, եթե տեղի ունենա հետոյալից որևէ մեկը՝

- Դատավարության կանոնների պահանջների համաձայն՝ Դուք անհրաժեշտ ջանասիրություն չեք դրսևորել այդ հարցում
- Գործի լուծմը տեղի չի ունեցել, և ավելի քան հինգ տարի է անցել ստորև նշվածներից այն պայմանից, որն առաջինն է տեղի ունեցել՝
 - ◆ Այն օրվանից, երբ Դուք Իրավարարության դիմում եք ներկայացրել, կամ
 - ◆ Այն օրվանից, երբ Դուք քաղաքացիական հայց եք ներկայացրել նույն միջադեպի կապակցությամբ



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Չեզոք իրավարարը կարող է նաև այլ պատճառներով փակել Ձեր պահանջագիրը: Դա անելու համար բավարար հիմք է հարկավոր ունենալ:

Եթե կողմերից մեկը չներկայանա գործի լսմանը, չեզոք իրավարարը կարող է գործի կապակցությամբ որոշում ընդունել տվյալ կողմի բացակայությամբ:

Օրենքով թույլատրված կարգով՝ Կալիֆորնիայի Բժշկական վնասվածքների փոխհատուցման ռեֆորմի մասին օրենքի (California Medical Injury Compensation Reform Act) (իր լրացումներով) դրույթները տարածվում են պահանջագրերի վրա, օրինակ՝

- Ձեզ կատարված ապահովագրական կամ հաշմանդամության նպաստների վճարումների ապացույց ներկայացնելու իրավունքը
- Առավելագույն գումարի սահմանաչափերը, որոնք Դուք կարող եք ստանալ ոչ տնտեսական բնույթի կորուստների համար
- Ապագա վնասների համար պարբերաբար վճարումների տեսքով փոխհատուցում ստանալու իրավունքը

Իրավարարությունն իրականացվում է «Պարտադրող իրավարարություն» բաժնի պայմանների համաձայն: Իրավարարության վրա տարածվում են նաև հետևյալ չափորոշիչները, եթե դրանք չեն հակասում այս բաժնի պահանջներին՝

- Իրավարարության մասին դաշնային օրենքի (Federal Arbitration Act) 2-րդ հատվածը
- Կալիֆորնիայի Քաղաքացիական դատավարության օրենքը
- Դատավարության կանոնները



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

7. Կարևոր հեռախոսահամարներ և բառեր

Կարևոր հեռախոսահամարներ

- Kaiser Permanente-ի Անդամների ծառայություններ՝
 - ◆ Անգլերեն **1-800-464-4000**
(և ավելի քան 150 լեզուներ՝ օգտվելով բանավոր թարգմանչի ծառայություններից)
 - ◆ Իսպաներեն **1-800-788-0616**
 - ◆ Չինական բարբառներ **1-800-757-7585**
 - ◆ TTY **711**
- Լիազորում հետկայունացման խնամքի համար **1-800-225-8883 (TTY 711)**
- Kaiser Permanente-ի ժամադրություններ և խորհրդատվություն **1-833-574-2273 (TTY 711)**
- L.A. Care Health Plan **1-888-839-9909 (TTY 711)**
- Health Care Options **1-800-430-4263**
(TTY 1-800-430-7077)



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Կարևոր բառեր

Ակտիվ երկունք. Ժամանակահատված, երբ կինը գտնվում է ծննդաբերության երեք փուլերում, և կա՛մ չի կարող ժամանակին անվտանգ փոխադրվել մեկ այլ հիվանդանոց մինչև ծննդաբերությունը, կա՛մ փոխադրումը կարող է վնասել կնոջ կամ չծնված մանկան առողջությունն ու անվտանգությունը:

Սուր. բժշկական վիճակ, որն անսպասելի է, արագ բժշկական արձագանք է պահանջում և երկար ժամանակ չի տևում:

Ամերիկյան հնդկացի. անհատ՝ ինչպես հասմանված է Միացյալ Նահանգների օրենսգրքի (United States Code, U.S.C.) գլուխ 25-ում, հատվածներ 1603(c), 1603(f): 1679(b), կամ ով իրավասու է համարվում՝ որպես հնդկացի, համաձայն Հնդկացիների առողջական խնամքի բարելավման ակտի 42 Դաշնային կանոնակարգերի մասին օրենք (Code of Federal Regulations, C.F.R.) 136.12-ի կամ Գլուխ V-ի, ստանալու առողջական խնամքի ծառայություններ հնդկացի առողջական խնամքի մատակարարներից (Հնդկացիների առողջապահական ծառայություն [Indian Health Service, IHS], Հնդկացիների առողջապահական ծառայություն, հնդկացիների տոհմանական կազմակերպություն կամ քաղաքային հնդկացիների կազմակերպություն [Indian Tribe, Tribal Organization, or Urban Indian Organization, I/T/U]) կամ ուղեգրի միջոցով Պայմանագրային առողջական ծառայությունների ներքո:

Բողոքարկում. Անդամի խնդրանք Kaiser Permanente-ին՝ վերանայելու և փոփոխելու որոշումը, որը կայացվել է պահանջվող ծառայության ապահովագրության վերաբերյալ:

Նպաստներ. առողջապահական խնամքի ծառայություններ և դեղեր, որանք ապահովագրված են այս առողջապահական ծրագրի ներքո:

Պարտադրող իրավարարություն. չեզոք երրորդ կողմի օգնությամբ խնդիրներ լուծելու եղանակ: Պարտադրող իրավարարության միջոցով կարգավորվող խնդիրների դեպքում մի երրորդ կողմ լսում է երկու կողմերին և որոշում կայացնում, որը երկու կողմն էլ պարտավոր են ընդունել: Երկու կողմն էլ հրաժարվում են դատարան դիմելու իրենց իրավունքից:

California Children's Services («CCS»). Medi-Cal ծրագիր, որը վճարում է որոշակի առողջական խնդիրներ ունեցող մինչև 21 տարեկան երեխաներին տրամադրվող ծառայությունների համար:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

California Health and Disability Prevention («CHDP»). հանրային առողջապահական ծրագիր, որը փոխհատուցում է հանրային և մասնավոր առողջապահական խնամքի մատակարարներին առողջության վաղ գնահատման համար՝ երեխաների և երիտասարդների մոտ հիվանդությունների և հաշմանդամությունների հայտնաբերման կամ կանխարգելման համար: Ծրագիրն օգնում է որակավորվող երեխաներին և երիտասարդներին ստանալ կանոնավոր առողջապահական խնամք: Ձեր առաջնային խնամքի մատակարարը (Primary Care Provider, PCP) կարող է տրամադրել CHDP ծառայություններ:

Գործի կառավարում. գրանցված բուժքույր կամ սոցիալական աշխատող, ով կարող է օգնել Ձեզ հասկանալ հիմնական առողջական խնդիրները և կազմակերպել խնամք Ձեր մատակարարների հետ:

Հավաստագրված բուժքույր-մանկաբարձ (Certified Nurse Midwife, «CNM»). անձ, ով լիցենզավորվել է որպես Գրանցված բուժքույր և հավաստագրված բուժքույր-մանկաբարձ Կալիֆորնիայի Գրանցված բուժքույրերի խորհրդի կողմից: Հավաստագրված բուժքույր-մանկաբարձին թույլ է տրվում մասնակցել նորմալ ծննդաբերությանը:

Քիրոպրակտիկտոր. ողնաշարը մանուալ թերապիայի միջոցով բուժող մատակարար

Քրոնիկական վիճակ. հիվանդություն կամ այլ բժշկական խնդիր, որը հնարավոր չէ ամբողջովին բուժել, կամ որը ժամանակի ընթացքում ավելի է վատթարանում, կամ որը պետք է բուժել, որպեսզի այն ավելի չվատթարանա:

Կլինիկա. հաստատություն, որը կարող են ընտրել Անդամները որպես առաջնային խնամքի մատակարար (PCP): Դա կարող է լինել կամ Դաշնային որակավորված առողջապահական կենտրոն (Federally Qualified Health Center, FQHC), համայնքային կլինիկա, Գյուղական առողջապահական կլինիկա (Rural Health Clinic, RHC), Հնդկացիների առողջապահական կլինիկա կամ այլ առաջնային խնամքի հաստատություն:

Չափահասների համայնքային ծառայություններ (Community-based adult services, «CBAS»). որակավորվող Անդամներին տրամադրվող ամբուլատոր, հաստատությունում տրամադրվող ծառայություններ հմուտ բուժքույրական խնամքի, սոցիալական ծառայությունների, թերապիաների, անձնական խնամքի, ընտանիքի և խնամատուի վերապատրաստման և աջակցության, սնուցման ծառայությունների, փոխադրումների և այլ ծառայությունների համար:



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Բողոք. Անդամի կողմից անբավարարվածության բանավոր կամ գրավոր արտահայտություն Kaiser Permanente-ի, մատակարարի, կամ խնամքի որակի, կամ մատուցված ծառայության որակի վերաբերյալ: Բողոքը նույնն է, ինչ գանգատը:

Խնամքի շարունակականություն. ծրագրի Անդամի կարողությունը շարունակել ստանալ Medi-Cal ծառայություններ իր ընթացիկ մատակարարից մինչև 12 ամիս ժամկետով՝ առանց սպասարման ընդհատման, եթե մատակարարը և Kaiser Permanente-ն գան համաձայնության:

Նպաստների համակարգում (Coordination of Benefits, «COB»). որոշման գործընթացը, թե որ ապահովագրական ապահովագրումն (Medi-Cal, Medicare, առևտրային ապահովագրություն կամ այլ) ունի առաջնային բուժման և վճարման պարտականություններ առողջության ապահովագրության մեկից ավելի տեսակի ապահովագրում ունեցող Անդամների համար:

Համավճար. վճար, որը Դուք հիմնականում կատարում եք ծառայության պահին՝ ի լրացումն ապահովագրողի վճարման:

Ապահովագրված ծառայություններ. Kaiser Permanente-ի Անդամներին մատուցված առողջապահական խնամքի ծառայություններ, որոնք ենթակա են Medi-Cal-ի հետ կնքած պայմանագրի պայմաններին, սահմանափակումներին և բացառումներին, և ինչպես նշված է այս Ապահովագրության ապացույցի (Evidence of Coverage, EOC) և որևէ փոփոխված տարբերակի մեջ:

Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների բաժին (Department of Health Care Services, DHCS). սա նահանգային գրասենյակ է, որը վերահսկում է MediCal ծրագիրը:

Ապանդամագրում. L.A. Care Health Plan-ը որպես Ձեր Medi-Cal կառավարվող խնամքի ծրագիր օգտագործման դադարեցում, քանզի Դուք այլևս իրավունակ չեք կամ ընտրել եք նոր ծրագիր: Դուք պետք է ձևաթուղթ ստորագրեք, որտեղ նշված է, որ Դուք այլևս չեք ցանկանում օգտվել L.A. Care health Plan-ից կամ զանգահարեք Health Care Options և ապանդամագրվեք հեռախոսով:

Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահական խնամքի բաժին (Department of Managed Health Care, DMHC). սա նահանգի գրասենյակ է, որը վերահսկում է կառավարվող առողջապահական խնամքի ծրագրերը:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ (Durable medical equipment, «DME»). սարքավորումներ, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և պատվիրված են Ձեր բժշկի կամ այլ մատակարարի կողմից: Մենք ենք որոշում, թե արդյոք վարձակալել, թե գնել DME-ը: Վարձակալման գինը չպետք է գերազանցի գնման գինը: Բժշկական սարքավորման վերանորոգումն ապահովագրված է:

Վաղ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում (Early and periodic screening, diagnostic and treatment, «EPSDT»). EPSDT ծառայությունները նպաստ են Medi-Cal-ի 21 տարեկանից փոքր անդամների համար՝ նրանց առողջ պահելու նպատակով: Անդամները պետք է ստանան իրենց տարիքին համապատասխան ճիշտ առողջական ստուգումները և պատշաճ սքրինինգները՝ բացահայտելու առողջական խնդիրները և բուժելու հիվանդությունները վաղ ժամկետում:

Շտապ օգնություն պահանջող բժշկական վիճակ. բժշկական կամ հոգեկան վիճակ՝ այնպիսի ուժեղ ախտանիշներով, ինչպիսիք են օրինակ՝ ակտիվ երկունքը (տես սահմանումը վերևում) կամ սաստիկ ցավը, երբ խոհեմ մարդն՝ առողջության և բժշկության մասին միջին գիտելիքներով, կարող է ողջամտորեն ենթադրել, որ անհապաղ բժշկական խնամք չստանալը կարող է՝

- Վտանգի տակ դնել Ձեր կամ Ձեր չժնված մանկան առողջությունը
- Մարմնի ֆունկցիայի խանգարում պատճառել
- Մարմնի մասի կամ օրգանի խանգարում պատճառել

Շտապ օգնության բաժանմունքի խնամք. բժշկի կողմից (կամ անձնակազմի՝ բժշկի հսկողության ներքո՝ համաձայն օրենքի) իրականացվող զննում՝ պարզելու համար, թե արդյոք գոյություն ունի շտապ օգնություն պահանջող բժշկական վիճակ: Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ, որոնք անհրաժեշտ են հաստատության հնարավորությունների սահմաններում Ձեզ կլինիկապես կայուն դարձնելու համար:

Շտապ օգնության բժշկական փոխադրում. փոխադրում շտապ օգնության մեքենայով դեպի շտապ օգնության բաժանմունք՝ շտապ օգնության բժշկական խնամք ստանալու նպատակով:

Անդամագրված անձ. անձ, ով առողջապահական ծրագրի Անդամ է և ծրագրի միջոցով ծառայություններ է ստանում:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Բացառված ծառայություններ. ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Kaiser Permanente-ի կամ Կալիֆորնիայի Medi-Cal-ի կողմից, չապահովագրված ծառայություններ:

Ընտանիքի պլանավորման ծառայություններ. հղիությունը կանխող կամ հետաձգող ծառայություններ:

Դաշնային որակավորված առողջապահական կենտրոն (Federally Qualified Health Center, «FQHC»). առողջապահական կենտրոն այն տարածքում, որտեղ չկան բազմաթիվ առողջապահական խնամքի մատակարարներ: FQHC-ում Դուք կարող եք ստանալ առողջնային և կանխարգելիչ խնամք:

Վճարում ծառայության դիմաց (Fee-For-Service, «FFS»). սա նշանակում է, որ Դուք անդամագրված չեք կառավարվող առողջապահական խնամքի ծրագրին: FFS-ի ներքո՝ Ձեր բժիշկը պետք է ընդունի «ուղիղ» Medi-Cal և հաշիվ ներկայացնի ուղղակի Medi-Cal-ին Ձեր ստացված ծառայությունների համար:

Հետևողական խնամք. կանոնավոր բժշկական խնամք՝ ստուգելու համար հիվանդի առաջընթացը հոսպիտալացումից հետո կամ բուժման ընթացքում:

Դեղացուցակ. դեղերի կամ պարագաների ցանկ, որոնք համապատասխանում են որոշակի չափանիշներին և հաստատատված են Անդամների համար:

Խարդախություն. խաբեությունը գիտակցող անձի կողմից խաբելու կամ չարաչափման կանխամտածված գործողություն, որը կարող է հանգեցնել մարդու կամ որևէ մեկի համար որոշակի չլիազորված նպաստի:

Անկախ ծննդական կենտրոններ (Freestanding Birth Center, «FBC»). առողջապահական հաստատություններ, որտեղ երեխայի ծնունդը պլանավորված է տեղի ունենալ հղի կնոջ բնակության վայրից հեռու, որոնք լիցենզավորված են կամ որևէ այլ կերպ հաստատված նահանգի կողմից՝ տրամադրելու նախածննդյան երկունքի և ծննդաբերության կամ հետծննդաբերական խնամք և այլ ամբուլատոր ծառայություններ, որոնք ներառված են ծրագրում: Այս հաստատությունները հիվանդանոց չեն:

Գանգատ. Անդամի կողմից անբավարարվածության բանավոր կամ գրավոր արտահայտություն Kaiser Permanente-ի, մատակարարի, կամ խնամքի որակի, կամ մատուցված ծառայության վերաբերյալ: Բողոքը գանգատի օրինակ է:

Առօրյա կյանքի համար անհրաժեշտ հմտությունների ծառայություններ և սարքեր. առողջապահական խնամքի ծառայություններ, որոնք օգնում են Ձեզ պահպանել, սովորել կամ բարելավել առօրյա կյանքի համար անհրաժեշտ հմտությունները:



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Health Care Options («HCO»). ծրագիր, որը կարող է Ձեզ անդամագրել կամ ապանդամագրել առողջապահական ծրագրից:

Առողջապահական խնամքի մատակարարներ. բժիկներ և մասնագետներ, ինչպես օրինակ՝ վիրաբույժներ, քաղցկեղ բուժող բժիշկներ կամ մարմնի հատուկ մասեր բուժող բժիշկներ, և ովքեր աշխատում են Kaiser Permanente-ի հետ կամ գործում են մեր ցանցի ներսում: Մեր Ցանցի մատակարարները պետք է ԿախՖորնիայում աշխատելու վկայական ունենան և տրամադրեն ապահովագրված ծառայություններ:

Մասնագետին այցելելու համար Ձեզ սովորաբար ուղեգիր է հարկավոր Ձեր PCP-ից: Որոշ ծառայությունների համար Ձեզ անհրաժեշտ է ստանալ նախնական հաստատում (նախօրոք լիազորում):

Ձեզ հարկավոր **չէ** ուղեգիր Ձեր PCP-ից որոշ տեսակի ծառայությունների համար, ինչպես օրինակ՝ ընտանիքի պլանավորում, շտապ օգնության խնամք, մանկաբարձություն-գինեկոլոգիա կամ զգայուն ծառայություններ:

Առողջապահական խնամքի մատակարարների տեսակները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Աուդիոլոգը լսողությունը ստուգող մատակարարն է
- Վկայագրված բուժքույր-մանկաբարձը Ձեզ հղիության և ծննդաբերության ժամանակ խնամող բուժքույրն է
- Ընտանեկան բժիշկը բոլոր տարիքի անձանց սովորական առողջական խնդիրները բուժող բժիշկն է
- Ընդհանուր պրակտիկայով զբաղվող մասնագետը սովորական առողջական խնդիրները բուժող բժիշկն է
- Ներքին հիվանդությունների բժիշկը չափահասների ընդհանուր բժշկական խնդիրների բուժող բժիշկն է
- Վկայագրված մասնագիտական բուժքույրը Ձեր բժշկի հետ աշխատող վկայագրված բուժքույրն է
- Խորհրդատուն Ձեզ ընտանեկան խնդիրներում օգնող անձն է
- Բժշկի օգնականը կամ վկայագրված բժշկական օգնականը Ձեր բժշկին Ձեզ բժշկական խնամք տրամադրելու հարցում օգնող շիֆտնգավորված անձն է



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

- Միջին մակարդակի բժիշկ են կոչվում այնպիսի առողջապահական խնամքի մատակարարները, ինչպիսիք են՝ բուժքույր մանկաբարձները, բժշկի օգնականները կամ բուժող բուժքույրերը
- Բուժքույր-անեսթեզիոլոգը Ձեզ ցավազկում տրամադրող բուժքույրն է
- Բուժող բուժքույրը կամ բժշկի օգնականը մի անձ է, ով աշխատում է կլինիկայում կամ բժշկի գրասենյակում, ով ախտորոշում է, բուժում և խնամում է Ձեզ՝ որոշակի սահմաափակումներով
- Մանկաբարձ-գինեկոլոգը (Obstetrician/gynecologist, OB/GYN) մի բժիշկ է, ով հոգ է տանում կնոջ առողջության համար, ներառյալ՝ հղիության և ծննդաբերության ժամանակ
- Աշխատանքային թերապիայի մասնագետը մի մատակարար է, ով օգնում է վերականգնելու առօրյա հմտությունները և գործողությունները հիվանդությունից կամ վնասվածքից հետո
- Մանկաբույժը երեխաներին ծննդյան օրվանից մինչև դեռահաս տարիքը բուժող բժիշկն է
- Ֆիզիկական թերապևտը մի մատակարար է, ով օգնում է վերականգնել Ձեր մարմնի ուժը հիվանդությունից կամ վնասվածքից հետո
- Պոդիատրը Ձեր ոտքերը խնամող բժիշկն է
- Հոգեբույժը հոգեկան առողջության խնդիրները բուժող անձն է, ով սակայն դեղեր չի նշանակում
- Գրանցված բուժքույրը վկայագրված մասնագիտական բուժքրոջից ավելի շատ վերապատրաստում անցած բուժքույրն է, ով վկայագրված է Ձեր բժշկի հետ կատարելու որոշ առաջադրանքներ
- Շնչառական օրգանների թերապևտը Ձեզ շնչելու հարցում օգնող մատակարարն է
- Խոսքի պաթոլոգը Ձեզ խոսքի հարցում օգնող մատակարարն է

Առողջության ապահովագրություն. ապահովագրական ծածկույթ, որը վճարում է բժշկական և վիրահատական ծախսերի համար՝ ետ վճարելով ապահովագրվածին հիվանդության կամ վնասվածքի հետ կապված ծախսերը կամ ուղղակի վճարելով խնամքի մատակարարին:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Տանը մատուցվող առողջապահական խնամք. տանը տրամադրվող հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ:

Տանը մատուցվող առողջապահական խնամքի մատակարարներ. մատակարարներ, ովքեր տրամադրում են հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ:

Բնակության տարածք. Southern California Kaiser Foundation Health Plan, Inc.-ի տարածք:

Հոսպիս. խնամք, որը կրճատում է ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհարմարությունները մահացու հիվանդություն ունեցող Անդամի համար (չի ակնկալվում, որ կապրի 6 ամսից ավելի):

Հիվանդանոց. վայր, որտեղ Դուք ստանում եք ստացիոնար և ամբուլատոր խնամք բժիշկներից և բուժքույրերից:

Հոսպիտալացում. ընդունում հիվանդանոց բուժման նպատակով՝ որպես ստացիոնար հիվանդ:

Հիվանդանոցային ամբուլատոր խնամք. բժշկական կամ վիրահատական խնամք, որն իրականացվում է հիվանդանոցում՝ առանց որպես ստացիոնար հիվանդ ընդունման:

Հնդկացիների առողջական կլինիկա (Indian Health Clinic, «IHC»). առողջապահական կլինիկա, որն աշխատացվում է Հնդկացիների առողջապահական ծառայության (IHS) կամ հնդկացիների տոհմի, տոհմական կազմակերպության կամ քաղաքային հնդկացիների կազմակերպության կողմից:

Հնդկացիների առողջապահական ծառայություն. ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների դեպարտամենտի շրջանակներում գործող դաշնային գործակալություն, որը պատասխանատու է առողջապահական ծառայություններ տրամադրելու ամերիկացի հնդկացիներին և Ալյասկայի բնիկներին:

Ստացիոնար խնամք. երբ Դուք ստիպված եք գիշերելու հիվանդանոցում կամ այլ վայրում՝ Ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքը ստանալու համար:

Kaiser Foundation Health Plan, Inc. Կալիֆորնիայի շահույթ չհետապնդող ընկերություն: Այս Անդամի ձեռնարկում «մենք» կամ «մեզ» նշանակում է Kaiser Foundation Health Plan, Inc.:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Kaiser Permanente. Kaiser Foundation Health Plan, Inc., Kaiser Foundation Hospitals (Կալիֆորնիայի շահույթ չհետապնդող ընկերություն) և Southern California Permanente Medical Group:

L.A. Care Health Plan. Ձեր Medi-Cal կառավարվող առողջապահական խնամքի ծրագիր: Kaiser Permanente-ն Ձեր առողջապահական խնամքի մատակարարն է L.A. Care Health Plan-ի միջոցով:

L.A. Care Health Plan-ի Սպասարկման տարածք. Լոս Անջելես վարչաշրջան:

Կառավարվող խնամքի ծրագիր. Medi-Cal ծրագիր, որն օգտագործում է միայն որոշակի բժիշկներ, մասնագետներ, կլինիկաներ, դեղատներ և հիվանդանոցներ ծրագրի անդամագրված Medi-Cal ստացողների համար: Kaiser Permanente-ն կառավարվող խնամքի ծրագիր է:

Բժշկական խումբ. Southern California Permanente Medical Group՝ շահույթ հետապնդող մասնագիտական ընկերակցություն:

Բժշկական տուն. խնամքի մոդել, որը կտրամադրի ավելի որակյալ առողջապահական խնամք, կբարելավի ինքնակառավարումը՝ իր սեփական խնամքի Անդամների միջոցով, և ժամանակի ընթացքում կկրճատի խուսափելի ծախսերը:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ (կամ բժշկական անհրաժեշտություն). բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամքը կարևոր ծառայություններ են, որոնք ողջամիտ են և պաշտպանում են կյանքը: Այս խնամքն անհրաժեշտ է հիվանդներին լուրջ հիվանդություններից և հաշմանդամությունից զերծ պահելու համար: Այս խնամքը կրճատում է ուժեղ ցավը՝ բուժելով հիվանդությունը կամ վնասվածքը: 21 տարեկանից ցածր Անդամների համար Medi-Cal ծառայությունները ներառում են՝ խնամք, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը շտկելու կամ այդ հարցում օգնելու համար, ներառյալ՝ թմրամիջոցների օգտագործման խանգարումները, ինչպես սահմանված է Միացյալ Նահանգների օրենքի Գլուխ 42, Բաժին 1396d(r)-ում:

Medicare. դաշնային առողջության ապահովագրության ծրագիր 65 կամ ավելի բարձր տարիքի անձանց, հաշմանդամություն ունեցող որոշ անձանց և վերջին փուլի երիկամների հիվանդություն ունեցողների համար (երիկամների մշտական անբավարարություն, որին անհրաժեշտ է դիալիզ կամ փոխպատվաստում, որը երբեմն կոչվում է վերջին փուլի երիկամների հիվանդություն [end-stage renal disease, ESRD]):



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Անդամ. որևէ իրավունակ Medi-Cal նպաստառու, որին կցել են Kaiser Permanente-ին՝ L.A. Care Health Plan-ի միջոցով, ով իրավունք ունի ստանալ ապահովագրված ծառայություններ: Այս Անդամի ձեռնարկում «Դուք» նշանակում է Անդամ:

Հոգեկան առողջության ծառայությունների մատակարար. արտոնագրված անձինք, ովքեր հոգեկան առողջության և վարվեցողական ոռողջության ծառայություններ են տրամադրում հիվանդներին:

Մանկաբարձի ծառայություններ. նախածննդյան, ներծննդաբերական և հետծննդաբերական խնամքի միջոցները, ներառյալ՝ ընտանիքի պլանավորման խնամքը մոր և նորածնի անհապաղ խնամքի համար, որը տրամադրվում է հավաստագրված բուժքույր-մանկաբարձների (CNM) և լիցենզավորված մանկաբարձերի (licensed midwife, LM) կողմից:

Ցանց. բժիշկների, կլինիկաների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբ, որոնք պայմանագիր ունեն Kaiser Permanente-ի հետ ծառայություններ տրամադրելու համար:

Ցանցի մատակարար (կամ Ցանցի ներսում գործող մատակարար). տե՛ս «Մասնակից մատակարար» ստորև:

Չապահովագրված ծառայություն. ծառայություն, որը Kaiser Permanente-ն չի ապահովագրում:

Ոչ շտապ բժշկական փոխադրում (Non-emergency medical transportation, «NEMT»). փոխադրում, երբ Դուք չեք կարող գնալ ապահովագրված բժշկական ժամադրության և/կամ դեղատոմսով դեղ վերցնել՝ մեքենայով, ավտոբուսով, գնացքով կամ տաքսիով: Մենք վճարում ենք ամենաէժան NEMT-ն Ձեր բժշկական կարիքների համար, երբ Ձեզ փոխադրում է հարկավոր դեպի Ձեր ժամադրության վայր:

Ոչ դեղացուցակային դեղեր. դեղացուցակում չնշված դեղեր:

Ոչ բժշկական փոխադրում. փոխադրում, երբ մեկնում եք Medi-Cal-ի կողմից ապահովագրված և Ձեր մակատակարի կողմից հաստատված ժամադրությանը և վերադառնում եք այնտեղից, ինչպես նաև գնում եք դեղատոմսեր կամ բժշկական պարագաներ վերցնելու:

Չմասնակցող մատակարար. Kaiser Permanente-ի ցանցում չգործող մատակարար:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Այլ առողջական ապահովագրում (other health coverage, «OHC»). մասնավոր առողջական ապահովագրություն և ծառայության համար վճարողներ, բացի Medi-Cal-ից: Ծառայությունները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, տեսողական, դեղատնային և/կամ Medicare-ի հավելյալ ծրագրեր (Մաս C և D):

Օրթոպեդիկ սարք. սարք, որն օգտագործվում է որպես օժանդակություն կամ մարմնին դրսի կողմից ամրացնած կապան՝ օգնելու կամ ուղղելու համար լրջորեն վնասված կամ հիվանդացած մարմնի մասը, և որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է Անդամի բժշկական վերականգնման համար:

Սպասարկման տարածքից դուրս ծառայություններ. ծառայություններ, երբ Անդամը գտնվում է իր Բնակության տարածքից դուրս: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով:

Ցանցից դուրս գործող մատակարար. մատակարար, ով Kaiser Permanente-ի ցանցի մաս չի կազմում:

Ամբուլատոր խնամք. երբ Դուք ստիպված չեք գիշերելու հիվանդանոցում կամ այլ վայրում՝ Ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքը ստանալու համար:

Ամբուլատոր հոգեկան առողջության ծառայություններ. ամբուլատոր ծառայություններ թեթևից միջին բարդության հոգեկան առողջության խնդիրներ ունեցող Անդամների համար՝

- Հոգեկան առողջության անհատական կամ խմբային գնահատում և բուժում (հոգեբուժություն)
- Հոգեբանական թեստավորում, երբ կլինիկապես ցուցված է որևէ հոգեկան խնդիր գնահատելու համար
- Դեղաբուժությունը հսկելու նպատակով տրամադրվող ամբուլատոր ծառայություններ
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Ամբուլատոր լաբորատոր ծառայություններ, պարագաներ և հավելումներ

Պալիատիվ խնամք. խնամք, որը լուրջ հիվանդություններ ունեցող Անդամների համար կրճատում է ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհարմարությունը:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Մասնակից հիվանդանոց. արտոնագրված հիվանդանոց, որը պայմանագիր ունի Kaiser Permanente-ի հետ խնամք ստանալու պահին Անդամին ծառայություններ մատուցելու համար: Որոշ մասնակից հիվանդանոցների կողմից Անդամինների առաջարկվող ապահովագրված ծառայությունները սահմանափակվում են մեր կիրառման ուսումնասիրմամբ և որակի ապահովման քաղաքականություններով կամ հիվանդանոցի հետ մեր պայմանագրով:

Մասնակից մատակարար (կամ մասնակից բժիշկ). բժիշկ, հիվանդանոց կամ այլ արտոնագրված առողջապահական խնամքի մասնագետ կամ արտոնագրված առողջապահական հաստատություն, ներառյալ՝ ենթա-սուր հաստատություններ, որոնք պայմանագիր ունեն Kaiser Permanente-ի հետ Անդամի կողմից խնամք ստանալու պահին նրանց ապահովագրված ծառայություններ տրամադրելու համար:

Բժշկի ծառայություններ. ծառայություններ, որոնք տրամադրվում են նահանգային օրենքով արտոնագրված անձի կողմից՝ բժշկությամբ կամ օսթեոպատիայով զբաղվելու համար, առանց ներառելու բժիշկների կողմից առաջարկվող ծառայությունները, մինչ քեզ ընդունում են հիվանդանոց, որի համար վճար է պահանջվում հիվանդանոցային հաշվով:

Ծրագիր. անցեք «Կառավարվող խնամքի ծրագիր» սահմանմանը:

Ծրագրի հաստատություն. մեր կայքում՝ kp.org/facilities (անգլերեն), նշված որևէ հաստատություն, որը մեր ցանցի մասն է կազմում: Ծրագրի հաստատությունները ենթակա են փոփոխության ցանկացած պահի, առանց ծանուցման: Ծրագրի հաստատությունների ընթացիկ տարածքների համար խնդրում ենք զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն:

Ծրագրի հիվանդանոց. մեր կայքում՝ kp.org/facilities (անգլերեն), նշված որևէ հիվանդանոց, որը մեր ցանցի մասն է կազմում: Ծրագրի հիվանդանոցները ենթակա են փոփոխության ցանկացած պահի, առանց ծանուցման: Ծրագրի հիվանդանոցների ընթացիկ տարածքների համար խնդրում ենք զանգահարել մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն:

Ծրագրի բժիշկ. որևէ արտոնագրված բժիշկ, ով Southern California Permanente Medical Group-ի աշխատակիցն է, կամ որևէ արտոնագրված բժիշկ, ով պայմանագիր ունի Անդամներին ապահովագրված ծառայություններ մատուցելու համար: Մեզ հետ պայմանագիր կնքած բժիշկները տրամադրում են միայն ուղեգրով ծառայություններ և չեն համարվում Ծրագրի բժիշկներ:

Ծրագրի մատակարար. Ծրագրի հիվանդանոց, Ծրագրի բժիշկ, Southern California Permanente Medical Group կամ որևէ այլ առողջապահական խնամքի մատակարար, որին Առողջապահական ծրագիրը նշանակել է որպես Ծրագրի մատակարար:



Զանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ kp.org (անգլերեն) հասցեով

Հետևյալունացման ծառայություններ. Ծառայություններ, որոնք Դուք ստանում եք շտապ օգնություն պահանջող բժշկական վիճակի կայունացումից հետո:

Նախնական հաստատում (կամ նախօրոք լիազորում). Ձեր PCP-ն հաստատում է ստանում Southern California Permanente Medical Group-ից՝ նախքան Դուք ստանում եք որոշակի ծառայություններ: Southern California Permanente Medical Group-ը հաստատելու է միայն Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Նրանք չեն հաստատելու չմասնակցող մատակարարների ծառայությունները, եթե կարծում են, որ Դուք կարող եք համարժեք կամ ավելի պատշաճ ծառայություններ ստանալ Kaiser Permanente-ի մատակարարների կողմից: Ուղեգիրը հաստատում չէ: Դուք պետք է հաստատում ստանաք Southern California Permanente Medical Group-ից:

Ապահովագիծ. ապահովագրության համար վճարվող գումար, ապահովագրության արժեք: Ապահովագները կիրառելի չեն Medi-Cal-ի ապահովագրմանը: Հնարավոր է, որ ապահովագիծ ունենաք այլ առողջապահական ապահովագրման համար:

Դեղատոմսով դեղի ապահովագրություն. մատակարարի կողմից նշանակված դեղերի ապահովագրություն:

Դեղատոմսով դեղերի. դեղ, որն օրինականորեն պահանջում է հրահանգ վկայագրված մատակարարից, որպեսզի այն տրամադրվի Ձեզ, ի տարբերություն ազատ վաճառքի (over-the-counter, «OTC») դեղերի, որոնք դեղատոմս չեն պահանջում:

Առաջնային խնամք. անցեք «Սովորական խնամք» սահմանմանը:

Առաջնային խնամքի մատակարար (Primary Care Provider, «PCP»). արտոնագրված մատակարար, որը Դուք ունեք Ձեր առողջապահական խնամքի մեծ մասի համար: Ձեր PCP-ն օգնում է ստանալ Ձեզ անհրաժեշտ խնամքը: Որոշ խնամքի կարիքներ պետք է սկզբում հաստատվեն, բացառությամբ եթե՝

- Դուք շտապ օգնություն պահանջող վիճակ ունեք
- Ձեզ անհրաժեշտ է մանկաբարձ-գինեկոլոգի խնամք
- Ձեզ անհրաժեշտ են զգայուն ծառայություններ
- Ձեզ անհրաժեշտ է ընտանիքի պլանավորման խնամք



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Ձեր PCP-ն կարող է լինել՝

- Ընդհանուր պրակտիկայով զբաղվող մասնագետ
- Թերապևտ
- Մանկաբույժ
- Ընտանեկան բժիշկ
- Մանկաբարձ-գինեկոլոգ
- IHC
- FQHC կամ RHC
- Բուժող բուժքույր
- Բժշկի օգնական
- Կլինիկա

Պրոթեզավորման սարք. արհեստական սարք, որը կցված է մարմնին՝ պակասող մարմնի մասը փոխարինելու համար:

Մատակարարների հասցեագիրք (Provider Directory). մատակարարների ցանկ Kaiser Permanente-ի ցանցում:

Շտապ հոգեբուժական օգնություն պահանջող բժշկական վիճակ. առողջական խանգարում, երբ ախտանիշները բավական լուրջ կամ ուժեղ են, որպեսզի անմիջական վտանգ ներկայացնի Ձեր կամ այլոց համար, կամ Ձեզ անմիջապես անհնար է տրամադրել ուտելիք, կացարան կամ հագուստ՝ հոգեկան խանգարման պատճառով:

Շտապ հոգեբուժական օգնություն պահանջող ծառայությունները կարող են ներառել Անդամի տեղափոխում հոգեբուժական բաժանմունք ընդհանուր հիվանդանոցի ներսում կամ սուր հոգեբուժական հաստատություն: Այս քայլն արվում է, որպեսզի խուսափենք կամ նվազեցնենք շտապ հոգեբուժական օգնություն պահանջող բժշկական վիճակը: Բացի այդ, բուժող մատակարարը կարծում է, որ տեղափոխումը չի վատթարացնի Անդամի վիճակը:



Ձանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Հանրային առողջապահության ծառայություններ. առողջապահական ծառայություններ, որոնք ուղղված են ընդհանուր հանրությանը: Այլոց հետ մեկտեղ, սրանք ներառում են՝ առողջական վիճակի վերլուծություն, առողջության դիտարկում, առողջության խթանում, կանխարգելիչ ծառայություններ, վարակիչ հիվանդությունների վերահսկում, շրջակա միջավայրի պաշտպանություն և սանիտացիա, ճգնաժամերի նախապատրաստում և արձագանքում և աշխատանքային առողջություն:

Որակավորված մատակարար. բժիշկ, ով որակավորում ունի անհրաժեշտ բնագավառում՝ Ձեր առողջական վիճակը բուժելու համար:

Վերականգնողական վիրահատություն. վիրահատություն մարմնի ոչ նորմալ կառուցվածքը շտկելու կամ ուղղելու համար՝ հնարավորինս նորմալ տեսքի կամ ավելի լավ գործառույթի այն բերելու նպատակով: Մարմնի ոչ նորմալ մասեր են նրանք, որոնց պատճառն են հանդիսանում բնածին թերությունը, զարգացման անոմալիաները, վնասվածքը, վարակը, ուռուցքները կամ հիվանդությունը:

Ուղեգիր. երբ Ձեր PCP-ն ասում է, որ Դուք կարող եք խնամք ստանալ մեկ այլ մատակարարից: Որոշ ապահովագրված խնամքը և ծառայությունները պահանջում են ուղեգրեր և նախնական հաստատում: Ուղեգրեր և նախնական հաստատում պահանջող ծառայությունների մասին ավելին իմանալու համար տե՛ս Գլուխ 3-ը («Ինչպես խնամք ստանալ»):

Տարածք. Kaiser Foundation Health Plan կազմակերպություն կամ գործընկեր ծրագիր, որն աշխատացնում է ուղիղ սպասարկման առողջապահական խնամքի ծրագիր: Տարածքները կարող են փոխվել յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից: Ներկայումս դրանք են՝ Կոլումբիայի շրջան և Հյուսիսային Կարոլինայի որոշ մասեր, Հարավային Կարոլինա, Կոլորադո, Ջորջիա, Հավայի, Այդահո, Մերիլենդ, Օրեգոն, Վիրջինիա և Վաշինգտոն: Տարածքների ընթացիկ ցուցակի համար այցելեք մեր կայքը՝ **kp.org** (անգլերեն), կամ զանգահարեք մեր Անդամների ծառայությունների կապի կենտրոն:

Վերականգնողական և առօրյա կյանքի հմտությունների պահպանման թերապիայի ծառայություններ և սարքեր. ծառայություններ և սարքեր՝ օգնելու վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկական վիճակներ ունեցող մարդկանց վերականգնել իրենց հոգեկան և ֆիզիկական հմտությունները:

Սովորական խնամք. բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ և կանխարգելիչ խնամք, երեխայի բարեկեցության այցելություններ կամ խնամք, ինչպես օրինակ՝ սովորական հետևողական խնամք: Սովորական խնամքի նպատակն է՝ կանխել առողջական խնդիրները:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Գյուղական առողջապահական կլինիկա (Rural Health Clinic, «RHC»). առողջապահական կենտրոն մի տարածքում, որտեղ առողջապահական խնամքի շատ մատակարարներ չկան: RHC-ում Դուք կարող եք ստանալ առաջնային և կանխարգելիչ խնամք:

Զգայուն ծառայություններ. բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ ընտանիքի պլանավորման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (sexually transmitted infection, STI), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռական բռնության և հղիության արհեստական ընդհատումների համար:

Լուրջ հիվանդություն. հիվանդություն կամ առողջական վիճակ, որը պետք է բուժվի, և որը կարող է մահվան պատճառ դառնալ:

Հմուտ բուժքույրական խնամք. ապահովագրված ծառայություններ, որոնք տրամադրվում են վկայագրված բուժքույրերի, տեխնիկական աշխատողների և/կամ թերապևտների կողմից Հմուտ բուժքույրական խնամքի հաստատությունում կամ Անդամի տանը մնալու ընթացքում:

Հմուտ բուժքույրական խնամքի հաստատություն. վայր, որտեղ տրամադրում են 24-ժամյա բուժքույրական խնամք, որը կարող է մատուցվել միայն պատրաստված առողջապահական մասնագետը:

Մասնագետ (կամ մասնագիտացված բժիշկ). բժիշկ, ով բուժում է որոշակի առողջապահական խնդիրներ: Օրինակ՝ օրթոպեդիկ վիրաբույժը բուժում է կոտրված ոսկորները, ավերգիայի մասնագետը բուժում է ավերգիաները, և սրտաբանը բուժում է սրտային հիվանդությունները: Հիմնականում, Ձեզ անհրաժեշտ կլինի ուղեգիր ստանալ Ձեր PCP-ից մասնագետին այցելելու համար:

Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ. ծառայություններ այն անդամների համար, որոնց անհրաժեշտ են հոգեկան առողջության ծառայություններ, որոնք խանգարման միջինից ավելի բարձր մակարդակում են:

Մահացու հիվանդություն. առողջական վիճակ, որն անշրջելի է և հավանաբար կբերի մահվան մեկ տարվա կամ ավելի քիչ ժամանակվա ընթացքում, եթե հիվանդությունն ընթանա իր բնական հունով:

Հիվանդների տեսակավորում (կամ զննում). Ձեր առողջության գնահատում բժշկի կամ բուժքրոջ կողմից, ով վերապատրաստված է զննելու համար խնամքի անհրաժեշտության հրատապությունը:

Հրատապ խնամք (կամ հրատապ ծառայություններ). ծառայություններ, որոնք տրամադրվում են բուժելու համար շտապ օգնություն չպահանջող հիվանդությունը, վնասվածքը կամ բժշկական խնամք պահանջող վիճակը: Դուք կարող եք Հրատապ խնամք ստանալ Ցանցից դուրս գործող մատակարարից, եթե Ցանցի մատակարարները ժամանակավորապես մատչելի կամ հասանելի չեն:



Ջանգահարեք KP Անդամների ծառայությունների կապի կենտրոն՝ **1-800-464-4000 (TTY 711)** հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մենք այստեղ ենք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի տոն օրերից): Այցելեք առցանց՝ **kp.org** (անգլերեն) հասցեով

Այս էջը միտումնավոր դատարկ է թողնված

Այս էջը միտումնավոր դատարկ է թողնված

Այս էջը միտումնավոր դատարկ է թողնված

Kaiser Foundation Health Plan, Inc.
393 E. Walnut St.
Pasadena, CA 91188

